Հ. Ընդ հայցական խնդրով կը կնուելով բնչ կը  
նշանակէ :

Պ. Ընդ հայցական խնդրով կը կնուելով կը նշանա-  
կէ մէջ տես, զոր օրինակ .

Մի լիցի կոիւ ընդ իս և ընդ իմ և քու մէջտեղ կոիւ  
+ել

ՀՐԱՎՐ

Կախեալ էր ընդ երկինս և ընդ երկնի ու երկրիս մէջտեղ  
երկիր

Կախուած էր

Հ. Ըստ գործիականով Բնչ կը նշանակէ :

Պ. Ըստ գործիական խնդրով կը նշանակէ պահը,  
զոր օրինակ .

Նստայ ընդ նաև Ա Սառին տակը նստայ

Գունդն երկրորդ ընդ էնդ երկրորդ գունդն իմ ձեռ-  
յեւամբ է Քիս տակն է

### Ըստ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ըստ նախադրութիւնը տրական խնդրով Բնչ կը  
նշանակէ :

Պ. Ըստ նախադրութիւնը տրական խնդրով կը նը-  
շանակէ համեմատ ( կէօրէ ), զոր օրինակ .

Ըստ բանէ ժամ

Քու խօսքիդ համեմատ

Ըստ նժա

Անոր ( կարծեացը , խօսքին )  
նայելով

Հ. Ըստ հայցական խնդրով Բնչ կը նշանակէ :

Պ. Ըստ հայցական խնդրով կը նշանակէ պեղէ մը ,  
քանէ մը անդին անցնիլ , զոր օրինակ .

Անցին ըստ հետին

Գետէն անդին անցան

Ելին ըստ ժաղան

Քաղքէն դուրս , անդին ելան

### 29. Հրահանգ

Անոր ձայնը լսեցի . Հայրդ զիս ճանչցաւ . Զանի  
թագաւորին տարաւ . Զանոնք իրենց տուները տարին .  
Զար գաղան մը կերաւ իմ որդիս . Խուլերը կը լսեն ,  
ու համրերը կը խօսին . Իմ աղաչանքիս մտիկ ըրէ .  
Ինծի մտիկ ըրէք . Քեզ չեմ ճանչնար . Տեղացիները  
զանոնք ճանչցան . Այդ տղան իր մօրը տար . Քեզ  
իմ տունս տանիմ . Զանոնք օտարը երկիր մի տանիք .  
Զքեզ ճանչցիր . Մարախը երկրին բոլոր կանաչեղէնը  
կերաւ . Եղբայրդ անոր հետ կը պարտի . Սառին տակը  
կը նստէը . Զանի բոլոր քաղաքը պարտացուց . Դաշ-  
տին վրայ տարածուեցան . Քաղքին մէջ լուր մը ելաւ

թէ թաղաւորը մեռաւ . Ինձի հետ մի խօսիր . Կիրճէն անցնելով անոր ետեւէն ինկան , բայց չկրցան հաս- նիլ . Մովին երթանք , մեզի ցամաքէն ճանբայ չկայ . Արեւելքին կողմը եղող դռնէն չելլես . Իմ յարկիս տա- կը մտան . Նեղ դռնէն մտէք . Անոնց հետ վէճի մի մտներ . Երկու եղբարք իրարու հետ կոռւեցան ( խօս- քով ) . Զօրքը կամուրջէն անդին անցաւ . Անոնք ի- րենց տիրո՞ջը հրամանէն անդին անցան . Մեզի ( մեր կարծեացը ) նայելով դժուարին չէ . Մեր կարողու- թեան համեմատ պիտի ջանանք . Դաւթէն անդին չե- լան . Զորին դուռին կապեց . Զանի պատին գամե- ցին . Մեր և ձեր մէջ տեղը խտրութիւն չկայ :

|                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| Մաիկ ընել , լուել ( ումեք ) | Ճամբայ , ճանապարհ           |
| Տեղացիք , ո՞ւ գեղսոյն       | Արեւելքին կողմը եղող , ո՞ւ  |
| կանաչեղէն , բանջար          | ընդ ո՞ւենելս                |
| Պարտիմ , շրջէմ              | Վէճի մտնել , մոռնել՝ ի ո՞յ- |
| Պարտցունեմ , շրջեցունեմ     | ւոր                         |
| Տարածուիմ , սիւէմ           | Կոռւիլ ( խօսքով ) , կոչել   |
| Լուր , ճամբառ               | Կարողութիւն , կոր           |
| Ետեւէն իյնալ , ոհետ ոնդել   | Պատ , ո՞մն                  |
| Զկայ , ոիտ                  | Գամել , վորուէմ             |

## Լ Ո Ւ Թ Ո Ւ Ի Ր

Եմուտ ընդ պատուհանն ՚ի ներտս . Եմուտ բայ չէզոք . կտ . եղ . Գ . դէմք , մոռնեմին — եմուտ , ո՞վ . — նա . նա , էակ . զեր . եղ . Գ . դէմք , զօրութեամբ , տէր բա- յի եմուտին : — Եմուտ նա , ո՞ւր . — Իներտս . մակբայ , որ տեղւոյ պարագայ մը , այսինքն՝ ուր մտնելը կը ցուցնէ : Եմուտ նա ՚ի ներքս , ո՞ոտի՞ . — Ընդ պատու- հանն , պատուհանէն . Ընդ նախադրութեամբ ընութեան խնդիր , նոյնպէս մտնելուն ուրիշ մէկ տեղւոյ պարա- գան կը ցուցնէ , այսինքն՝ ուստի մտնելը :



## ԴԱՍ ԻԴ.

Ա Ն Կ Ա Ն Ո Ւ Բ Ա Ց Ե Ր

( Շարունակող Ծիրան )

ՏԵՂԻՈՅ ՊԱՐԱԳԱՅ ՑՈՒՑՆՈՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. ԴԱԵՄ, ըմպել, սահմանադրութիւն :  
 Պ. ԴԱԵՄ, ըմպել (խմել), սահման (բռնել) հետեւեալ  
 կերպով կը խոնարհին :

ՆԵՐԳ .

ԿՐԱՒ .

|                                   |                                       |
|-----------------------------------|---------------------------------------|
| Ա Խ Ի Մ Ա Ն Ա Կ Ա Ն               | Ե Ղ Ա Մ Ա Ն                           |
| Դ Ա Ե Մ , Կ ը դ ա ե լ             | Դ Ա Ի Մ , Կ ը դ ր ո ւ է լ             |
| Դ Ա Ե Ս , և ա յ լ ն               | Դ Ա Ի Ս , և ա յ լ ն                   |
|                                   | Ա ն կ ա տ ա ր ա ն ց ե ա լ             |
| Դ Ա Է Լ , Կ ը դ ա է լ , և ա յ լ ն | Դ Ա Է Լ , Կ ը դ ր ո ւ է լ , և ա յ լ ն |
|                                   | կ ա տ ա ր ե ա լ ա ն ց ե ա լ           |

|               |                           |
|---------------|---------------------------|
| Ե ղ ի , Դ է է | Ե ղ ա յ , Դ ր ո ւ ե ց ա յ |
| Ե ղ ի լ       | Ե ղ ա ր                   |
| Ե դ           | Ե ղ ա ւ                   |
| Ե դ ա ք       | Ե դ ա ք                   |
| Ե դ ի ք       | Ե դ ա յ ք . Ե դ ա ր ո ւ ք |
| Ե դ ի ն       | Ե դ ա ն                   |

Ա պ ա ռ ն ի

|                           |                             |
|---------------------------|-----------------------------|
| Ե ղ ի ց , Պ է տ է դ ա յ մ | Ե ղ ա յ ց , Պ է տ է դ ա յ մ |
| Դ ի ց ե ս                 | Դ ի ց ի ս                   |
| Դ ի ց է                   | Դ ի ց ի                     |
| Դ ի ց ո ւ ք               | Դ ի ց ո ւ ք                 |
| Դ ի ջ ի ք                 | Դ ի ջ ի ք                   |
| Դ ի ց ե ն                 | Դ ի ց ի ն                   |

Հրամայական

|                 |                 |
|-----------------|-----------------|
| Դիր , Դէր       | Դիջիր , Դը-ւէ   |
| Մի դներ         | Մի դնիր         |
| Դիք             | Ծդարուք         |
| Մի դնէք         | Մի դնիք         |
| Ստորադասական    |                 |
| Դնիցեմ , Դնէմ   | Դնիցիմ , Դը-ւէմ |
| Դնիցես , և այլն | Դնիցիս , և այլն |

Աներեւոյթ

|                       |                      |
|-----------------------|----------------------|
| Դնել , Դնէլ           | Դնել ( իլ ) , Դը-ւէլ |
| Անցեալ ընդունելութիւն |                      |
| Եղեալ , Դը-ն          | Եղեալ , Դը-ւան       |
| Ապառնի ընդունելութիւն |                      |
| Դնելոց , Դնէլո-       | Դնելի , Դը-ւելո-     |

ՆԵՐԳ .

ԿՐԱԽ .

Սահմանական եղանակ , ներկայ

|                  |                    |
|------------------|--------------------|
| Հմագեմ , կը իմէմ | Հմագիմ , կը իմ-ւէմ |
| Հմագես , և այլն  | Հմագիս , և այլն    |

Անկատար անցեալ

|                          |                            |
|--------------------------|----------------------------|
| Հմաէի , կը իմէի , և այլն | Հմաէի , կը իմ-ւէի , և այլն |
| Կատարեալ անցեալ          |                            |

|              |                    |
|--------------|--------------------|
| Արբի , Խմէցէ | Արբայ , Խմու-Եցայ, |
| Արբեր        | Արբար              |
| Արբ , Էարբ   | Արբաւ              |
| Արբաք        | Արբաք              |
| Արբէք        | Արբայք             |
| Արբին        | Արբան              |

Ապառնի

|                    |                      |
|--------------------|----------------------|
| Արբցեմ , Պէտէ իմէմ | Արբայց , Պէտէ իմ-ւէմ |
| Արբցես             | Արբայս               |

|                   |                       |
|-------------------|-----------------------|
| Արբցէ             | Արբցի                 |
| Արբցուք           | Արբցուք               |
| Արբջիք            | Արբջիք                |
| Արբցեն            | Արբցին                |
|                   | Հրամայական            |
| Արբ , Խմէ         | Արբիր , Խմուէ         |
| Մի ըմպեր          | Մի ըմպիր              |
| Արբէք             | Արբերուք              |
| Մի ըմպէք          | Մի ըմպիք              |
|                   | Ստորաղասական          |
| Հմպիցեմ , Խմէմ    | Հմպիցիմ , Խմուէմ      |
| Հմպիցես , և այլն  | Հմպիցիս , և այլն      |
|                   | Աներեւոյթ             |
| Հմպել , Խմէլ      | Հմպել (իլ) , Խմուէլ   |
|                   | Անցեալ ընդունելութիւն |
| Արբեալ , Խմուշ    | Արբեալ , Խմուտ        |
|                   | Ապառնի ընդունելութիւն |
| Հմպելոց , Խմէլու- | Հմպելի , Խմուէլու-    |

ՆԵՐԴ .

.ԿՐԱՒ .

Սահմանական եղանակ , ներկայ

|                      |                               |
|----------------------|-------------------------------|
| (*) Ունիմ , կը բռնէմ | Կալեալ լինիմ (***) կը բռնուէմ |
| Ունիս , և այլն       | Կալեալ լինիս , և այլն         |

(\*) Տղամք ժողովում բայց իսնարչեն առէին պէս :

(\*\*) Ունիմ , կը բռնէմ , բային կրաւորականին համար սովորաբար ուժուածում , կը բռնուէմ , բայց կը գործածուի :

Նշն առէի բայց կը նշանակէ նաեւ ունենալ , բայց ներկային , անկատարին , ստորադասականին , աներեւոյթին և ապառնի ընդունելու մէջ միայն , ուստի և առէմ , առէէ , առէցէ , առէլւ , առէլու : Կը նշանակեն նաեւ ունիմ , ունէի , ունենալ և այլն : Իսկ միւս ժամանակներուն , զըր օրինակ կատարեալին , աղաւանւոյն և անցեալին : Համար կը գործածուի և բայց , այսպէս և է և այլն :

Անկատար անցեալ

Ունէի , Կը բռնէի , և այլն կալեալ լինէի , Կը բռնուէի ,  
և այլն

Կատարեալ անցեալ

Կալայ , Բռնեցի  
Կալար  
Կալաւ  
Կալաք  
Կալայք  
Կալան

Կալեալ եղէ , Բռնուեցայ  
Կալեալ եղեր , և այլն

Ապառնի

Կալայց , Պէտէ բռնեց  
Կալցիս  
Կալցի  
Կալցուք  
Կալջիք  
Կալցին

Կալեալ եղէց , Պէտէ բռնուեց  
Կալեալ եղիցիս , և այլն

Հրամայական

Կալ , կա , Բռնէ  
Մի ունիր  
Կալայք , կալարուք  
Մի ունիք

Կալեալ լեր , Բռնուեր , և այլն

Ստորադասական

Ունիցիմ , Բռնեց  
Ունիցիս , և այլն

Կալեալ լինիցիմ , Բռնուեց  
Կալեալ լինիցիս , և այլն

Աներեւոյթ

Ունել , Բռնել

Կալեալ լինել , Բռնուել

Անցեալ ընդունելութիւն

Կալեալ , Բռնաց

Կալեալ , Բռնուաց

Ապառնի ընդունելութիւն

Ունելոց , Բռնելը

Ունելի , Բռնուելը

Հ. Տամ., գոմ., Երևամ բնչպէս կը խոնարհին :  
Պ. Տամ., գոմ., Երևամ կը խոնարհին հետեւեալ կերպով.

ՆԵՐԳ .

ԿՐԱՒ .

Սահմանական եղանակ, ներկայ

Տամ., կուտածում

Տուեալ լինիմ, կը ոբուէմ, և այլն

Տաս

Տայ

Տամք

Տայք

Տան

Անկատար անցեալ

Տայի, կուտայի

Տուեալ լինէի, կը ոբուէի, և այլն

Տայիր, և այլն

Կատարեալ անցեալ

Ետու, Տառէ

Տուայ, Տըսւեցայ

Ետուլր

Տուար

Ետ

Տուաւ

Տուաք

Տուայք

Ետուք

Տուայք

Ետուն

Տուան

Ապառնի

Տաց, Պէտէ դամ

Տուայց, Պէտէ ոբուէմ

Տացես

Տացիս

Տացէ

Տացի

Տացուք

Տացուք

Տաջիք

Տաջիք

Տացեն

Տացին

Հրամայական

Տուր, Տուր

Տաջիր, Տըսւէ

Մի տար

Մի տուեալ լինիր

|                               |                                    |
|-------------------------------|------------------------------------|
| <i>Տուք</i>                   | <i>Տաջիք</i> , <i>տուարուք</i>     |
| <i>Մի տայք</i>                | <i>Մի լինիք</i> <i>տուեալ</i>      |
|                               | <i>Ատորադասական</i>                |
| <i>Տայցեմ</i> , <i>Տայ</i>    | <i>Տայցիմ</i> , <i>Տըռէմ</i>       |
| <i>Տայցես</i> , <i>և այլն</i> | <i>Տայցիս</i> , <i>և այլն</i>      |
|                               | <i>Աներեւոյթ</i>                   |
| <i>Տալ</i> , <i>Տաւ</i>       | <i>Տուեալ լինել</i> , <i>Տըռէլ</i> |
|                               | <i>Անցեալ ընդունելութիւն</i>       |
| <i>Տուեալ</i> , <i>Տուած</i>  | <i>Տուեալ</i> , <i>Տըռած</i>       |
|                               | <i>Ապառնի ընդունելութիւն</i>       |
| <i>Տալոց</i> , <i>Տալու</i>   | <i>Տալի՛</i> , <i>Տըռելու</i>      |

ԶԵԶՈՒ

|                              |                                          |
|------------------------------|------------------------------------------|
|                              | <i>Սահմանական եղանակ</i> , <i>ներկայ</i> |
| <i>Գամ</i> , <i>Կուգամ</i>   | <i>Երթամ</i> , <i>Կ'երթամ</i>            |
| <i>Գաս</i>                   | <i>Երթաս</i> , <i>և այլն</i>             |
| <i>Գայ</i>                   |                                          |
| <i>Գամք</i>                  |                                          |
| <i>Գայք</i>                  |                                          |
| <i>Գան</i>                   |                                          |
|                              | <i>Անկատար անցեալ</i>                    |
| <i>Գայի</i> , <i>Կուգայի</i> | <i>Երթայի</i> , <i>Կ'երթայի</i>          |
| <i>Գայիր</i> , <i>և այլն</i> | <i>Երթայիր</i> , <i>և այլն</i>           |
|                              | <i>Կատարեալ անցեալ</i>                   |
| <i>Եկի</i> , <i>Եկայ</i>     | <i>Չոքայ</i> , <i>Գացէ</i>               |
| <i>Եկիր</i>                  | <i>Չոքար</i>                             |
| <i>Եկն</i>                   | <i>Չոքաւ</i>                             |
| <i>Եկաք</i>                  | <i>Չոքաք</i>                             |
| <i>Եկայք</i>                 | <i>Չոքայք</i>                            |
| <i>Եկին</i>                  | <i>Չոքան</i>                             |

Ապառնի

|                   |                      |
|-------------------|----------------------|
| Եկից , Պէտք է ուս | Երթայց , Պէտք է ԵրԱս |
| Եկեսցես           | Երթիցես              |
| Եկեսցէ            | Երթիցէ               |
| Եկեսցուք          | Երթիցուք             |
| Եկեսջիք           | Երթիջիք              |
| Եկեսցեն           | Երթիցեն              |

Հրամայական

|            |            |
|------------|------------|
| Եկ , Եկուք | Երթ , Գնու |
| Մի գար     | Մի Երթար   |
| Եկայք      | Երթայք     |
| Մի գայք    | Մի Երթայք  |

Ստորադասական

|                 |                   |
|-----------------|-------------------|
| Գայցեմ , Գոմ    | Երթայցեմ , ԵրԱս   |
| Գայցես , և այլն | Երթայցես , և այլն |

Աներեւոյթ

|                       |                    |
|-----------------------|--------------------|
| Գալ , Գոլ             | Երթալ , ԵրԱնալ     |
| Անցեալ ընդունելութիւն |                    |
| Եկեալ , Եկաշ          | Երթեալ , Գոյցաշ    |
| Ապառնի ընդունելութիւն |                    |
| Գալոց , Գոլու         | Երթալոց , ԵրԱնալու |

ՏԵՂԻՈՑ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՅՆԵՐԸ ՅՈՒՑՆՈՂ  
ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. Բանի մը այլ եւ այլ կողմերը կամ զիերը ցուցնող նախադրութիւններն որհնք են :

Պ. Բանի մը այլ եւ այլ կողմերը կամ զիերը ցուցնող նախադրութիւններն են .

Առաջի կամ առաջոյ , առա Զհեր , զնիչ , ետեւէն  
ջեւը ի վերոյ , վրան  
Զնիչ , յերոյ , ետեւը , ետին ընդ , տակը

ի , յ , մէջը  
ի մէջ , է դջէ , մէջտեղը  
Արդարություն , դուրսը  
ի ներքոյ , ներսը  
Առ , քովը  
Առընթեր , կիցը  
Յանդիմոն , հանդեղ , դիմացը Շատրված , բոլորտիքը

Հ. Այս նախադրութիւններն ինչ հոլով խնդիր կը  
պահանջեն :

Պ. Մեծ մասը սեռական խնդիր կուզէ , ոմանք ալ  
տրական , բացառական , կամ ուրիշ նախադրութեամբ  
խնդիր մը , զոր օրինակ .

Խոստովան լեր առաջի Առ Աստուծոյ առջեւ խոստո-  
գուծոյ,

վանէ

Կայր յետոյ դրանն , յետոյ նու Դրան , անոր , վարագու-  
րա , զնէ վարդուրին րին ետին կը կենար  
Գնացին շնեռ , զնէ նոր Անոր ետեւէն գացին  
Եդ է վերոյ սեղանոյն Սեղանին վրայ դրաւ  
Նստէր ընդ հովանես ծաւ Ծառին շուքին տակ կը  
ոռյն

Կայրին է հրադարակի անդ Հրապարակին մէջ կը կե-  
նային

Խաղաղութիւն եր է մէջ նո-  
յու

Անոնց մէջ տեղ խաղաղու-  
թիւն էր

Կացին արդարությունն  
էր է ներքոյ վարդուրին  
Ադաւ առ նմ զայն գիշեր  
Շունն կայր առ դիմոնն  
Պատգամաւորն անցեալ  
նստէր առընթեր ինչ

Դրան դուրսը կեցան  
Վարագուրին ներսն էր  
Այն զիշեր անոր քով ո-  
թեւան ըրաւ  
Շունը դիակին քով կը կե-  
նար

Պատգամաւորն անցաւ քո-  
վս նստաւ

Նստէր յանդէման նորս  
Երթայք ի գիւղն որ հան.

Շեռ մէր կայ  
Ըստուն մէր է յեկեղեցին  
Նաւէաք Շեռ յարեւելը  
Ածին զնոսա մինչեւ է Շուռանջանոնք մինչեւ քաղքին  
Քաղաքին  
Հեռէ է տունէ և է բարեկամներէն  
Ածին պարիսպ շուրջ զիս- Քաղքին բոլորտիքը պատ  
ուտանո

Անոր դիմացը կը նստէր  
Մեր դիմացի գիւղը գացէք  
Հովը մեղի դէմ էր  
Անոր հակառակ կը կենար  
Տունս եկեղեցւոյն մօտ է  
Դէպ արեւելք կը նաւէինք  
Դուռը բերին  
Տուռը բերին  
Հեռէն և բարեկամներէն  
Հեռու  
Ածին պարիսպ շուրջ զիս- Քաղքին բոլորտիքը պատ  
ուտանո

### 30. Հրահանգ

Գիրքը սեղանին վրայ դրի . Մեր ետեւէն եկան .  
Զեր տուները գացէք . Օտարի տուն մ'երթար . Իմ  
բաժինս ինծի տուր . Հայրդ պատասխան չի տար .  
Գիրքերն անոր տուի . Շատ ձուկ բռնեցին . Սպասա-  
ւորները գինին խմեցին . Իր եղբօրը գնաց . Զանի  
մւր զրիր . Անոր բաւական պաշար տուին . Հաց գը-  
նելու երթանք . Անոր մարմինը գերեզմանի մէջ դը-  
րին . Ինծի եկէք . Շատ ստակ ունի . Բան մը չունինք .  
Զանի իր տունը ընդունեց . Եղբայրդ ինծի եկաւ .  
Ինծի հետ եկուր , տեղը քեզի ցուցնեմ . Այդ ձեր իւ-  
ղէն մեղի տուէք . Զեր բոլոր պէտքը ձեզի պիտի տամ .  
Ինծի հետ դաշտը գացին . Ստակի տեղ անոնց կերա-  
կուր տուինք , Քու պատկերդ իմ սենեակս պիտի դը-  
նեմ . Պարտքի համար բանտ դրուեցաւ , բայց ժամ  
մը ետքը հանուեցաւ անկէ . Ինչնւ համար այդ մար-  
դուն ստակ փոխ կուտաս . Անոր փոխ կուտամ , քան-  
զի ստակի պէտք ունի . Զուր չեմ խմեր , քանզի ծա-

բաւի չեմ . Գինի խմեցինք , քանզի ջուր չգտնուեցաւ . Մատնին մւր դրիր . Քու սնտուկիդ մէջ դրի զայն . Եղբայրդ մւր գնաց . Որսի գնաց . Զինուորներն եկան և մեղ բռնել կուզէին . Իր եղբօրը հետ եկաւ . Անոր եղբայրն անոր հետ եկաւ . Մեղի հետ եկէք . Իմ ձեռքիս տակն ունիմ . Զեր իշխանութեանը տակ զինուորներ ունիք . Անոնց վրայ յարձակեցան . Իմ վրաս մի լաք . Իմ առջեւս մի բերէք . Զանի քաղքէն դուրս հանեցին . Ճամբան անոր պատահեցանք զիւղին մօտ . Այս ամէնը մեր առջեւը գործուեցաւ . Անիկա սենեկին դուրսը կը կենար , ես ներսը . Հրապարակին մէշտեղն աղբիւր շինեց , և աղբիւրին վրայ կանգնեց իր պղնձէ արձանը . Երբ մօտ եկանք այն քաղքին որ լեռանը դիմացն է . Այդիները գեղէն շատ հեռու չեն . Քաղքին բոլորտիքը պարտէզ է , պարտէզին քովէն (տես էջ 116. 2.) գետ կանցնի . Լերանը մինչեւ գլուխը կուզէինք ելլել , բայց հազիւ մինչեւ կէսը կրցանք հասնիլ . Բոլորտիքս առին և կը խնդրէին ինէ որ զանի իրենց ձեռքը տամ . Անոնց վրայ ելան . Անոնք որ մեր առջեւէն կերթային՝ սկսան մեր ետեւէն գալ . Չուզեցինք անոնց ետին կենալ . Երբ կամարներով կապուած սրահին տակ մտանք . Նաւը խարիսխ նետեց աշտարակին դիմացը . Նաւահանգիստին ներսը վտանգ չկայ , անկէ դուրս է վտանգը . Մինչեւ փողոցին անկիւնը եկուր , ու անկէ ետ դարձիր . Ետեւէն գալ . Էալ զնէ Բան մը (բացասական բաՊատասխան , պարուստանէ յի հետ) . ոչինչ Բոնեմ (ձուկ , ևն .) , ունէտ Տեղ (նխ .) , էնիսնակ (սենմեմ , ըմղէտ ռականով ) . Ո՞ւմ , ո՞ւր . (իթէ շարժում Դրուեցաւ , երառ (դնեմին է , ) յո՞ կրաւոր . ) Բաւական , ըստ բաւականին Ետքը (նխ .) , (յետ սեռակ .)

|                          |                              |
|--------------------------|------------------------------|
| Անկէ . անտի              | Պղնձէ , պղնձէ                |
| Ինչնեւ համար , ընդէ՞ւ    | Շատ , կորէ                   |
| Պէտք ունիմ , պէտս առնէմ  | Բոլորտիքն առնել , լինել      |
| Սնտուկ , որիւ , որիւ     | շուրջ                        |
| Որսի երթալ , երնալ լըրոյ | Կամարներով կապուած ,         |
| Ռամբան , զնանողաբնայն    | կամարներով                   |
| Պատահել , հանդիպէմ       | Ելլել (մէկուն վրայ) , յառնեմ |
| Մէջ տեղը , ՚է մէջ        | Նետել . (խարիսխ) , ընկենում  |
| Արձան , պատիեց           | Ետ , յետս (մէկ .)            |

### Լ Ա Խ Ե Ա Խ Ե

Երէ զմագեանն ՚է վերայ սեղանոյն . Երէ , դնեմ բային կտ . եզ . Ա . դէմքը . աէր բային ես , զօրութեամբ կ'իմացուի : Զմագեանն , գոյ . հայց , սեռի խնդիր երէ ին : Ի վերայ սեղանոյն , նախադրութեամբ խնդիր երէ ին . տեղւոյ պարագան կը ցուցնէ : Երէ , դրի . — Ով — Ե՞ս . — Ի՞նչ բանը . — Զմագեանն , զիրքը . — Ուր . — Ի վերայ սեղանոյն , սեղանին վրայ :

Եկն զնէն մը . Եկն , Գամ բային կտ . յը . Գ . դէմքը . աէր բային է նուա , զօրութեամբ : Զնէն մը , նախադրութեամբ խնդիր . գալուն մէկ պարագան կը ցուցնէ : Եկն , եկան . — Ով . — Նուա , անոնք . Որդւն ետեւէն : — Զնէն մը , մեր ետեւէն :



### ԴԱՍ ԻԵ.

#### Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Ց Ե Ր

Հ . Զարնուամ , երինչէ , եղանչէ , լինչէ բայերն բնչպէս կը խոնարհին :

Պ . Զարնուամ , երինչէ , եղանչէ , լինչէ կը խոնարհին հետեւեալ կերպով :

ԶԵԶՈՒ

ԶԵԶՈՒ

Սահմանական եղանակ , ներկայ

Զարթնում , Կ'արթնաւմ Երկնչիմ , Կը վախաւ

Զարթնուս , և այլն Երկնչիս , և այլն

Անկատար անցեալ

Զարթնուի , Կ'արթնաւյէ Երկնչէի , Կը վախաւյէ

Զարթնուիր , և այլն Երկնչէիր , և այլն

Կատարեալ անցեալ

Զարթեայ , Արթնցայ Երկեայ , Վախայ

Զարթեար Երկեար

Զարթեաւ Երկեաւ

Զարթեաք Երկեաք

Զարթեայք Երկեայք

Զարթեան Երկեան

Ապառնի

Զարթեայց , Պէտք արթնաւմ Երկեայց , Պէտք վախնաւմ

Զարթիցես Երկիցես

Զարթիցէ Երկիցէ

Զարթիցուք Երկիցուք

Զարթիջիք Երկիջիք

Զարթիցեն Երկիցեն

Հրամայական

Զարթիր , Արթնցիր Երկիր , Վախնչիր

Մի զարթնուր Մի երկնչիր

Զարթիք Երկերուք

Մի զարթնուք Մի երկնչիք

Ատորադասական

Զարթնուցում , Արթնաւմ Երկնչիցիմ , Վախնաւմ

Զարթնուցուս , և այլն Երկնչիցիս , և այլն

Պնկրեւեյթ

Զարթնուլ , Արթնաւլ Երկնչել , Վախնուլ

Անցեալ ընդունելութիւն

Զարթուցեալ , Արլնցա՞ն Երկուցեալ , Վախցա՞ն

Ապառնի ընդունելութիւն

Զարթնլոց , Արլնուալու Երկնչելոց , Վախնալու

**ԶԵԶՈՒՔ**

**ԶԵԶՈՒՔ**

Սահմանական եղանակ , ներկայ

Եղանիմ , Կ'ըլլո՞մ

Լինիմ , Կ'ըլլո՞մ

Եղանիս , և այլն

Լինիս , և այլն

Անկատար անցեալ

Եղանէի , Կ'ըլլո՞յի

Լինէի , Կ'ըլլո՞յի

Եղանէիր , և այլն

Լինէիր , և այլն

Կատարեալ անցեալ

Եղէ , Ելո՞յ

Նոյն

Եղեր

Եղեւ

Եղաք կա՞մ Եղեաք

Եղէք

Եղեն

**Ապառնի**

Եղէց , Պէտէ ըլլո՞մ

Լիցիմ , Պէտէ ըլլո՞մ

Եղիցիս

Լիցիս

Եղիցի

Լիցի

Եղիցուք

Լիցուք

Եղիջիք

Լիջիք

Եղիցին

Լիցին

**Հրամայական**

Եղիջիր , Եպէ

Լեր լիջիր , Եպէ

Մի Եղանիր

Մի լինիր

Եղերուք

Լերուք , լինիք

Մի Եղանիք

Մի լինիք

Ստորադասական

Եղանիցիմ, Ըլլոյ  
Եղանիցիս, և այլն

Լինիցիմ, Ըլլոյ  
Լինիցիս, և այլն  
Աներեւոյն

Եղանել, Ըլլու

Լինել, Ըլլու

Անցեալ ընդունելութիւն

Եղեալ, Եղան

Լեալ, Եղան

Ապառնի ընդունելութիւն

Եղանելոց, Ըլլուու

Լինելոց, Ըլլուու



## ԴԱՍ ԻԶ.

Ն ԱԽԴՐԻՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Ղ նախդիրը հայցականէն զատ ուրիշ ճր հո-  
լովիսերով կը գործածուի :

Պ. Ղ նախդիրը շատ անգամ բացառականով և էսքի-  
կանով կը գործածուի :

Հ. Ղ նախդրիւ բացառականն ինչ կը կոչուի և  
ինչ կը նշանակէ :

Պ. Ղ նախդրիւ բացառականը պատճական կը կոչուի ,  
և կը նշանակէ բանի մը իրայուն , զորօրինակ .

Բացառական

Պատճական

Ի մականէն , տղէն

Զբանէն , տղուն վրայով

Ցինէն , ինէ

Զինէն , իմ վրայով

Ի նժանէ , անկէ

Զնժանէ , անոր վրայով

Ի նոցանէ , անոնցմէ

Զնոցանէ , անոնց վրայով

Ցումէնէ , մէկէ մը

Զումէնէ , մէկու մը վրայով

Ցէմէնէ , բանէ մը

Զէմէնէ , բանի մը վրայով

Ցոյլէնէնէ , ուրիշբանէ մը

Զոյլէնէնէնէ , ուրիշբանի մը

Վրայով

Հ. շ նախդրիւ գործիականը , բնչ կը կոչուի և ինչ  
կը նշանակէ :

Պ. շ նախդրիւ գործիականը պարագանէն կը կոչ-  
ուի և կը նշանակէ .

1° Մէկուն կամ բանի մը բոլորէն , և 2° բանի  
մը ատենները , զորօրինակ .

Գործիական

Պարառական

Դուշու , անով

Դուշու , անոր բոլորտիքը

Քողաքան , քաղաքով

Զուղաքան , քաղքին բոլոր-  
տիքը

Ինեւ , իզմով

Զինեւ , իմ բոլորտիքս

Ինն ժամաւ , ինը ժամով

Զինն ժամաւ , ժամը իննին  
ատենները

Մէջօրէէւ , կէս օրով

Զմէջօրէէւ , կէս օրուան ա-  
տենները

Հ. Ո՞ր բայերն են որ փոխանակ բացառականի  
պարմական խնդիր կ'առնեն :

Պ. Կախել և ռանել (բռնել) բայերը . ուստի կ'ըս-  
ուի՝ կախել զէայտէ , շնուռ , շորմոյ , փայտէն , ծառէն ,  
պատէն վար կախել . ունել զիեւանէ , զէովզն , բռնել  
ձեռքէն , վզէն .

Հ. Ո՞ր բայերն են որ պարարտկան խնդիր կ'ուզեն :

Պ. Աբկանէմ և ածեմ բայերը , ուստի կ'ըսուի .

Արկեալ էր շանչամբ կամ զիւ Վրան մազէ վերարկու մը  
ըեւ վերարկու մազեղէն առած (հազած) էր  
Արկին շանչամբամիդ կար . Անոր կարմիր քղամիդ հա-  
միր գուցին

Ածել գօտի , սուր շիջով Մէջքը գօտի , սուր կապել  
Ածել որմ , պատուար շուռ Քաղաքը պատով , պատ-  
շուռա-

ուարով պատել

31. Հրահնանգ

ՆԱԽՈՒՐ ԱՅԼ ԵՒ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

Անոր ձայնը լսեցինք . Յովսէփ իր եղբայրները ճանչցաւ . Էդ առիւծն իր ձագերը կը պաշտպանէ . Երկրագործը երկիրը կը մշակէ . Քրիստափոր Կոլոմպոս Ամերիկա դատաւ . Անոր վրայով լսեցինք թէ եղբօրը քով է . Ինչ բանի վրայով կը խօսի այդ գիրքը . Այս դիրքը հանքերու վրայ կը խօսի . Վարդանանց պատերազմին վրայ կը զրեն եղիշէ վարդապետ և Ղազար Փարպեցի որոնք ժամանակակից են այն պատերազմին . Այդ ձեր խօսքը որհու վրայով էր . Մեր խօսքը թագաւորին որդւոյն վրայով էր . Ասոնք կ'ամբաստանեն անոր վրայով թէ թշնամիներուն ծածուկ օգնական է . Ինծի համար հվ եմ կըսէք . Զեր վրայով կը լսենք թէ շատ հարուստ է . Զուր բերելու գացին . Բան կը փնտուէին որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն . Քաղքին բոլորտիքը պատ քաշեցին . Թշնամիները բոլորտիքս պատեցին . Անոր վրան կարմիր բղամիդ առւին . Իր հանդերձը վրան առաւ . Զեռքէն բռնելով ներս մտցուց . Մազերէն բռնելով կը քաշէին . Զորս ծայրերէն (պոչերէն) կախուած աման մը տեսաւ . Խոյ մը սաբեկայ ծառէն կախուած կը կենար եղջիւրներէն . Տղաքն իրենց մայրերուն վիզէն կախեցին . Քեզի ծուռ կը նայի . կ'երեւի թէ քեզի դէմ բան մը ունի . Մառաներն անոր բոլորտիքը կը կենային . Անոր հանդերձէն բռնեց . Վրան կտաւ մը առած էր , քանզի մերկ էր . Անոր արիւնէն պատին բոլորտիքը ցատկեց . Կռապաշտ ազգերէն ոմանք իրենց զաւկըները կրակէ անցունելու սովորութիւն ունէին . Մեր Վարազդատ թագաւորին վրայով կը պատմուի թէ եփ-

բատ գետէն ցատկեց . Հին ատենն ի նշան սգոյ և ապաշխարութեան սովորութիւն էր քուրծ հազնել և գլուխը հող դնել . Տղուն վրայով լսել կ'ուզեմ . Կըռւ ւոյն վրայով ստոյգ բան մը չի պատմուիր . Ինչիւ համար իմ վրայովս ամբաստանութիւն կ'ընէք . Անոր վրայով շատ բան կը լսենք . Անոնց վրայով ըսուած խօսքերը սուտ են . Մէկու մը կամ բանի մը վրայով երբէք աղէկ կամ գէշ գրած չեմ . Ուրիշ բանի մը վրայով խօսինք , ոչ միշտ մի եւ նոյն բաներու վրայ . Բազմութիւնն անոր բոլորտիքը դիզուեցաւ . Քաղքին բոլորտիքը նատան . Կէս օրուան կամ կէս գիշերուան ատենները քաղքէն կ'ելլէին . Ճամբուն կէսին մօտ վրան հասան : Այն ատեններն այն երկու ազգին մէջտեղ պատերազմ կար :

**Էգ** , ճադակ

**Զագ** , (առիւծի , շունի ) , կաշել (պատ , ևն ) , ածել  
կրիւն

Երկրագործ , հողաբործ

Ի՞նչ բան , զի՞ն ի՞նչ

Ի՞նչ բանի վրայով , զի՞ն  
ի՞նեւել

Խօսիլ , ճաւել

Հանք , երեսկան նիւն

Ո՞վ , ՞վ , ՞

Որո՞ւ վրայով , չո՞մ

Մածուկ , էաց

Օգնական , յեւագու

Զուր , ոսկի , եւ այլն բե-

րելու երթալ , դրկել .

Երեւալ , յանձն կամ առածել

զիբոյ շունկոյ , եւ այլն

Փնտոել , ինդրել

Բան , ինչ

Քաշել (պատ , ևն ) , ածել  
Պատ , պարէսող .

Վրան տալ } արկանել շ

Վրան տոնել } (գործ . )

Բոնել , սնել զ (բացառ . )

Քաշեմ , տարշեմ

Մայր (լաթի մը ) . դադուն .

սեռական դրնոյ

Մուռ նայիլ , ընդ ակամբ հա-  
յել

(Մէկուն դէմ) բան մը ու-

նենալ (սրտին մէջ) , ս-

նել ինչ իւն (զումեքէ )

Յատկել . Յատկել (ջուր , եւ այլն )

Յայտել զ (գործիական )

Այրել , ածել զբոյով (կրակին )

Բոլորտիքը դնել )

Սովորութիւն ունենալ, իւ Բազմութիւն, այսի  
 նել սպառ Դիզուի, իւնէց  
 Յատեել (աթլամագ), վաղել կէս օրուան ատենները,  
 և (գործ · ) վէջուել, հնապահ առաջին  
 Դլուխը հող դնել, արկանել վէջառուբը  
 հող դէլիուլ կէս գիշերուան ատենները,  
 Ստոյդ բան մը չ · · · չնչ վէջ էլւես, հնապահ էլ-  
 արոյել վէջառ  
 Ամբաստանութիւն ընել, Ճամբուն կէսին մօտ, վէ-  
 ճրախօսել ջոյս ճանապարհին  
 Բսուած խօսքերը, բանին Այն ատենները, վայնու ժա-  
 ր սպին ճանակառ  
 Գրած չեմ, չի+ իմ էրեալ  
 Հ. Ո՞ր բայերը դունում և երկնչին պէս կը խո-  
 նարհին :  
 Պ. Զորընումին պէս կը խոնարհին  
 Այդունում, կ'ուռենամ Ցունում, կը բարկանամ  
 Երդունում, երդում կ'ընեմ Քոշում, կ'անօթենամ  
 Ոսդունում, կը ցատկեմ  
 Երկնչին պէս կը խոնարհին  
 Թարիչք (\*), կը պահուըտիմ Մարիչք, կը մօտենամ  
 Թուչք, կը թոչիմ Մարտնչք, կը կռուիմ  
 Հանդչք, կը հանգչիմ Փախչք, կը փախչիմ

### 32. Հրահանգ

Հայրդ արթնցաւ, և քեզ կը կանչէ . Զարագործ-  
 ները իշխանութենէ կը վախնան . Անիրաւ տեղը բար-  
 կացաւ . Իմ տանս մէջ պիտի հանգչիմ . Թուչունները  
 ծառերուն ճիւղերուն վրայ կը հանգչին . Աստուծմէ  
 վախցիր . Սուտ երդում չընես . Մեր զինուորները քա-

(\*) Աշուկերոք այս բայերը իմաստչնեն .

ջութեամբ կռուեցան . Անոր մօտեցաւ ու կ'աղաչէր .  
Երբ անոր ձայնը լսեց , փախաւ . Ասիկա անոր ըսելու  
վախցան . ինչն կը վախնաք անոնցմէ . Անզգամներէն  
վախէք . Երդում ըրէ ինծի անոր մնաս չընելու . Քու  
խօսքերուդ մէջ հաւատարիմ եղիր . Քաջ եղիք . Հեղդ  
մի ըլլար . Երբ արթնցան , զանի իրենց քով տեսան .  
Անօթեցայ և ինծի ուտելիք շտուփք . Տղաք հնազանդ  
ըլլան իրենց ծնողացը . Վաղուան պատրաստ եղիք .  
Ինչն կը բարկանաս . Զար բան մը չգործեցի :

Կանչեմ , կոչի :

Ինչն , ընդե՞ :

Անիրաւ տեղը , յանիբառի :

Վնաս ընել , մեղանչել

Ճիւղ , սառ

Ուտելիք տալ , ուղ սառել

Սուտ ( մկ . ) սառ

Վաղուան , սռ չաղիւն



## ԴԱՍ Ի Ե.

ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Հայցական հոլովը միշտ սեսի խնդիր է թէ իբ-  
րեւ բնութեան խնդիր ալ կը գործածուի :

Պ. Հայցական հոլովը կը գործածուի նաև իբրե-  
բնութեան խնդիր .

4° Ժամանակի պեսողունիւն և լոյն ցուցնելու համար ,  
և , ո՞ւշէ ժամանակ , ո՞ւշէ , ո՞ւշէ դեւ , հարցմանց պա-  
տասխան է . զոր օրինակ՝ Մնաց անդ լաւուրս հինք .  
Հոն հինք օք մնաց : Այս խօսքին մէջ լաւուրս հինք ,  
հինգ օր , հայցականը՝ բնութեան խնդիր է , կը ցու-  
ցընէ ժամանակի տեւողութիւն մը , և հրչափ ժամա-  
նակ հարցման պատասխան է : Ո՞ւշէ ժամանակ մնաց .

— Հինք օք :

Ետ նոցա ցորեան ուսու հինք , անոնց հինք ուսու ցո-  
րեն տուաւ : Այս խօսքին մէջ ալ ուսու հինք , հինգ քոռ ,

Հայցականը՝ բնութեան խնդիր է, չափ կը ցուցնէ, և  
ո՞ւշտ հարցման պատասխան է: Ո՞ւշտ շունք տուաւ.  
— Հինգ +:

Գնացաք ճղնա Երես, Երեւ ճղն քալեցինք: Այս խօս-  
քին մէջ ալ ճղնա Երես, Երեք մղոն, հայցականը՝ բնու-  
թեան խնդիր է, չափ կը ցուցնէ, և ո՞ւշտ ուշ հարց-  
ման պատասխան է: Ո՞ւշտ ուշ քալեցինք. — Երեւ  
ճղն :

### 33. Հրահանգ

Աշակերտ Թուական ռատիանները Գոյականներէն Եպէը  
Դնելով համայսյանեցնեն անոնց հետ

Հայրս եօթանասուն տարի ապրեցաւ. Զանի երեք  
օր փնտուեցին. Պատերազմը հինգ ամիս տեւեց. Եօ-  
թը ժամ խօսեցաւ. Օրը տասը ժամ կ'աշխատիմ, եր-  
կու ժամ կը հանգչիմ, երեք ժամ կ'ուտեմ և կը զբոս-  
նում, մնացած ժամերն ալ կը քնանամ. Սիւնին բարձ-  
րութիւնը վեց կանգուն էր. Քաղաքը մէկ օրուան  
ճանրայ հեռու է մենէ. Զանոնք երկու մղոն տարին. Անոնց  
հինգ քոռ ցորեն տուին. Պատը եօթը կանգուն  
բարձրացուցին. Ասոր համար ութ տարի աշխատեցայ. Աշտարակը երկու քարընկէց մենէ հեռու է. Եղբայրս  
երեսուն տարի ապրեցաւ. Տասը տարի եղբօրը քով բը-  
նակեցաւ. Ութ մղոն քալեցինք. Հարիւր լիտր իւղ  
ծախսեցինք. Զանոնք տասուերկու օր կը սորվեցնէր. Շատ  
օրեր նեղութիւն կրեցին. Ամբողջ օր մը ոչ կե-  
րաւ և ոչ խմեց. Վեց օր գործէ. Անոնց քով երկու  
օր կեցանք. Եօթը օր հարսնիք ըրին. Երկու մարդ  
մեզի եկաւ. Երկու օր ետքը որդին մեռաւ. Երկու  
քանքար շահեցայ. Վեց մարդ տասն օր աշխատեցան.  
Չորս օր անոնց սպասեցինք. Տարւոյն մէջ տասուեր-  
կու ամիս կայ, ամսոյն մէջ երեսուն կամ երեսունեւ-

մէկ օր , օրուան մէջ քսան և չորս ժամ , ժամու մէջ վաթսուն վայրկեան . Երկու ամիս է քանի որ եղբայրս մեռաւ . Հոն ժամ մը նստայ . Բոլոր այս գիշեր աշխատեցանք . Ինչմէ համար բոլոր ցերեկը դատարկ կը կենաք . Այն օր անոր բովլ օթեւան ըրին . Ինձի գաւաթ մը ջուր տուր . Շատ օրեր հոն կեցանք . Երկու օր անոնց հետ քալելէն ետքը՝ գեղ մը հասանք . Տասը ժամ անօթի կեցայ . Սրահին մէջ եօթը սիւն կանգնեց . Տան մը մէջ մինակ կը բնակէր . Մէկ մարդով եկաւ . Մէկ թուզէ մահ եղաւ . Երեք մարդոց իշխանութիւնը ( եռապետութիւնը ) երկայն չտեւեց . Զորս զինուորովլ բերուեցաւ . Անիկա հարիւրէ աւելի տղայոց վարպետ էր . Երեք հազարի չափ մարդ խօսեցաւ . Ութ օր ետքը մեռաւ . Տասուերկու որդի ունէր . Վեց տարի առաջ տեսայ զանի . Հինգ ամիս ետքը սովը դադրեցաւ :

Ապրիլ , կեամ

Հոն , անու

Տարի , ամ

Բոլոր այս գիշեր , զամենայն  
էլշերս

Փետուել , ինդրեմ

Բոլոր ցորեկը , զոյն կամ  
զբն ողջոյն

Օրը , յառաւին

Օթեւան ընել , ադանիմ

Քնանալ , նազեմ

Գաւաթ , բայակ

Քալել , գնամ

Անօթի , նօնիմ

Ծախել , լահաւեմ

Մինակ , առանձին

Սորվեցնել , առանցանեմ

Մարդ , այր

Նեղութիւն կրել , պատաղէմ

Երկայն , ընդերկար

Ամրողջ , ողջոյն

Վարպետ , վարդապետ

Կենալ , կամ

Առաջ , յառաջ ժան

Ընել , առնեմ

Աւելի , աւելի ժան

Աշխատիլ , աշխատ լինեմ

( Հազարի ) չափ , էբրեւ

Կայ , են

Քանի որ , յորմէ հետեւ

## Լ Ա Խ Ե Ր Ա Խ Մ

Տարան վնասա ճղուս երկուս . Տարան բայ ներգ . կտր . յոք . Գ. դէմք , Տանիւ էն . — Տարան , հվ . — Նուտս . Նուտս , էակ . դեր . յոք . Գ. դէմք , զօրութեամբ կ'իմացուի , տէր բայի դարձն ին : — Նուտս դարձն . զնվ . — Զնասա . վնաս , էակ . դեր . Գ. դէմք . յոք . Հայց . սեռի խնդիր դարձն ին . — Տարան վնաս , մրչափ տեղ . — Մշնա երկուս . Հայց . բնութեան խնդիր դարձն ին , երկայնութեան չափ կը ցուցնէ :



## Դ Ա Ս Ո Ւ Ի Բ .

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԻՆԴԻՐ  
Ի ԶԵՐՆ , ՀԱՆԴԵՐՉ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
( Շարունակովման )

Հ. Աւրիշ մր բառերուն Հայցականը բնութեան խնդիր է :

Գ. Բնութեան խնդիր է նաև՝

2° Ճանապարհ , ճամբայ , բառին Հայցականը , և ո՞ր ճամբէն Հարցման պատասխան է . զոր օրինակ՝ Երժայր զնանապարհ լերինն . Լերան ճամբէն կ'երթար . Երնայր , կ'երթայր , ո՞ր ճամբէն . — Զնանապարհ լերինն , լերան ճամբէն . զնանապարհ Հայցական հոլովը բնութեան խնդիր է Երնայր բային :

3° Օբխակ ( եղանակ ) . Յեւ , աղէ ( տեսակ ) բառերուն Հայցականը նոյնպէս բնութեան խնդիր է . և ի՞նչ եղանակս , ի՞նչ յեւով , ի՞նչ իերով Հարցման պատասխան է . զոր օրինակ՝ Խօսեցաւ զյս օբխակ . այս իերով խօսեցաւ : Խօսեցաւ . ի՞նչ իերով . — Զայս օբխակ , այս կերպով . զյս օբխակ Հայցական հոլովը բնութեան խնդիր է իօսեցաւ բային :

Ի յեռն , հանդերձ նախադրութիւններն ինչ կը

նշանակեն և ինչ հոլով խնդիր կ'ուզեն :

Պ. Ի յեռն նախադրութիւնը յեւուզ կը նշանակէ , և սեռական հոլով խնդիր կ'ուզէ , հանդերձ կը նշանակէ մելտեղ , հեռը , և գործիական հոլով խնդիր կ'ուզէ . զոր օրինակ՝ չ յեռն նորա , անոր ձեռքով , հանդերձ նոշա , մէկտեղ , անոր հետ , ըսել է :

### 34. Հրահանգ

Երեք օրուան ճամբայ գացին . Զեր ճամբան գացէք . Հասարակաց ճամբէն երթանք . Հեռու ճամբայ գնաց . Անոնց հետ ճամբայ մ'երթար . Երկայն ճամբէն երթալ չէին ուզեր . Մարդկէ կը լերան ճամբէն անոնց ետեւէն ինկան . Որ ճամբէն երթանք . Շիտակէն երթանք . Զանոնք երկայն ճամբէն դրկեց . ինք կարճէն գնաց . Երբ օրուան մը ճամբայ եկան . Քաղքէն երկու օրուան ճամբայ հեռացանք . Այս կերպով խօսեցաւ անոնց հետ . Ամէնքն ալ նոյն գունով և նոյն ձեռով հանդերձներ կը հագնին . Եղբօրը հետ մէկտեղ հոս եկաւ . Հայաստան եկաւ կնոջմով և տղոցմով մէկտեղ . Այս եկեղեցին որո՞ւ ձեռքով շինուեցաւ . Խտալացի ճարտարապետներու ձեռքով . Աստուած մեծամեծ բաներ կը կատարէ անզօրներու և պղտիկներու ձեռքով . Թագաւորական պալատին ձեռով իրեն պալատ շինեց . Թշնամեաց նաւերուն եղանակով նաւեր շինել տուաւ , բայց ուրիշ տեսակ ներկեց զանոնք . Իմ ձեռքովս այն պատուոյն հասաւ . Բարեկամներու ձեռքով դաւաճանութիւնն իմացուց անոր . Որո՞ւ ձեռքով ստացար այդ հարստութիւնը . մեր ձեռքով չէ մի :

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| Հասարակաց (ճամբայ),      | Կատարել, վճռել           |
| արժունի (ճանապարհ)       | Անզօր, ուսու             |
| Ետեւէն իյնալ, պնդել զինի | Պղտիկ, ուսուսչ           |
| Շիտակ, ուղղութ           | Պալատ, ողարան            |
| Մէկտեղ, հանդերձ (նիս.)   | Թագաւորական, արժունի     |
| Հոս (շարժում), այս       | Եղանակ, օրինակ           |
| Հայաստան, Հայ+           | Տեսակ, ողք               |
| Տղաք, հանկարի            | Դաւաճանութիւն, դա-       |
| Որեւ ձեռքով, յո՞յշ յեւ-  | Իմացուցանել, զի՞շո՞շանել |
| Մեծամեծ բաներ, մեծա-     | Հարստութիւն, մեծանիւն    |
| մեծա                     | Զբ մի, ոչ ողունին        |

### Լ Ս Խ Ծ Ա Խ Մ

Գնացին շնանաղարհ երեց ասությ. Երեք օրուան ճամբայ գացին: Գնացին, բայ չէղոք կտր. յք. Գ. դէմք: Գնացին, ո՞վ, որոնտ. — Նո՞տ. նո՞տ՝ էակ. դեր. Գ. դէմք յք. ուղղ. տէր բայի ինաց ին, զօրութեամբ. — Նորա գնացին. որլո՞ն ուել — Երեց ասությ ճանաղարհ, երեք օրուան ճամբայ (միջոց, տեղ). ճանաղարհ՝ հայց. բնութեան խնդիր է ինացին ին, քանզի չափ, երկայնութիւն, ճամբայ ցուցնող բառերն հայերէն հայցական կը զրուին:

Խօսեցու ընդ նոսու շայս օրինակ. Անոնց հետ այս կերպովխօսեցաւ: Խօսեցու, բայ չէզ. կտր. եղ. Գ. դէմք: — Խօսեցաւ, ո՞վ. — Նա. նա՝ էակ. դեր. Գ. դէմք. եղ. ուղղ. տէր բայի խօսեցու ին, զօրութեամբ: — Նա խօսեցաւ ո՞ո՞ւ հետ. — Ընդ նոսու, անոնց հետ. Ընդ նոսու՝ նախաղրութեամբ խնդիր խօսեցու ին: Նա խօսեցաւ ընդ նոսա, ի՞նչ կերպով, — Զայս օրինակ, այս կերպով. Զայս օրինակ՝ հայցական բնութեան խնդիր խօսեցու ին. կերպ, եղանակ, ցուցնող բառեր հայերէն հայցական կը զրուին:

## Դ Ա. Ս Ի Թ Ւ.

ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՑԵՐ · Տ-Ի ԲԱՑՈՎԱ ԱՆԵՐԵՒՈՅԹ

Հ. Ո՞ր բայերն անցողական կը կոչուին :

Պ. Հայերէն լեզուն մասնաւոր յատկութիւն մը ունի որ ամէն վէտ+ բայ կրնայ ներգործականի փոխել, զոր օրինակ՝ զօրանամ, զբաշաւցանեմ, նստիմ, նսպաշանեմ:

Հ. Անցողական բայերն ինչպէս կը չինուին :

Պ. Անցողական բայերը կը չինուին՝ չէզոք բային կատարեալ եղակի առաջին դէմքին վերջին ձայնաւորը ուղանեմի փոխելով, զոր օրինակ .

### Կատարեալ

### Անցողական

ՆՆՉԵՄ

ՆՆՉԵցի

ՆՆՉԵցանեմ

ԱՆԳԱՆԵՄ

ԱՆԳի

ԱՆԳԱՆԵՄ

ԱՀԽԱԹԻՄ

ԱՀԽԱԹԵցայ

ԱՀԽԱԹԵցանեմ

ԻՎԱՐԻՄ

ԻՎԱՐցի

ԻՎԱՐԱՆԵՄ

ԼՆՈՒՄ

ԼՇԵ

ԼՇԱՆԵՄ

ԶԳԵՆՈՒՄ

ԶԳԵցայ

ԶԳԵցանեմ

Հ. Այս կանոնէն ինչ զարտուղութիւն կայ :

Պ. Կոբնչէմ բային վրայ փոխանակ ուղանեմի կ'աւելցուի ուսանեմ, էլունէմ բային վրայ ալ՝ ուղանեմ զոր օրինակ .

### Կատարեալ

### Անցողական

ԿՈՐՆՀԻՄ

ԿՈՐԵ-Շ

ԿՈՐԱ-ԱՆԵՄ

ՓԼԱՆԻՄ

ՓԼ-Շ

ՓԼ-ԱՆԵՄ

Հ. Անցողական բայերն ինչպէս կը խոնարհին :

Պ. Անցողական բայերը կը խոնարհին հետեւեալ կերպով .

ՆԵՐԴ .

ԿՐԱՒ .

Սահմանական եղանակ , ներկայ

Հատուցանեմ , կը վճարեմ Հատուցանիմ , կը վճարուիմ  
Հատուցանես , և այլն Հատուցանիս , և այլն

Անկատար անցեալ

Հատուցանէի , կը վճարեի Հատուցանէի , կը վճարուեի  
Հատուցանէիր , և այլն Հատուցանէիր , և այլն

Կատարեալ անցեալ

Հատուցի , Վճարեցի

Հատուցեր

Հատուց

Հատուցաք

Հատուցէք

Հատուցին

Հատուցայ , Վճարուեցայ

Հատուցար

Հատուցաւ

Հատուցաք

Հատուցայք

Հատուցան

Ապանի

Հատուցից , Պէտէ վճարեմ

Հատուցես

Հատուցէ

Հատուցուք

Հատուսջիք

Հատուցեն

Հատուցայց , Պէտէ վճարուեիմ

Հատուցիս

Հատուցի

Հատուցուք

Հատուսջիք

Հատուցին

Հրամայական

Հատո , Վճարէ

Մի հատուցաներ

Հատուցէք

Մի հատուցանէք

Հատուցիր , Վճարուե

Մի հատուցանիր

Հատուցարուք

Մի հատուցանիք

Ստորադասական

Հատուցանիցեմ , Վճարեմ Հատուցանիցիմ , Վճարուեմ

Հատուցանիցես , և այլն Հատուցանիցիս , և այլն

Աներեւոյթ

Հատուցանել , Վճարել

Հատուցանել (իլ) Վճարուել

Անցեալ ընդունելութիւն  
Հատուցեալ, Վճարո՞ն Հատուցեալ, Վճարո՞ւն  
Ապառնի ընդունելութիւն  
Հատուցանելոց, Վճարելո՞ւ Հատուցանելի, Վճարո՞ւն

35. Հրահանգ

Շրջիմ<sup>(\*)</sup>. Դառնամ. Մատչիմ. Հասանեմ. Վերանամ. Թռչիմ. Ռանաչեմ. Զբանում. Շիշանիմ. Յառնեմ. Գնամ. Կեամ. Կամ. Լամ. Խոնարհիմ. Սնանիմ. Ծնանիմ. Մեղանչեմ. Բուսանիմ. Զօրանամ. Գօսանամ. Դառնանամ. Ուսանիմ. Ամաչեմ. Լնում. Զարմանամ. Իմանամ. Զգամ. Վրիպիմ. Հաւանիմ. Հաճիմ. Յուսամ. Մոռանամ. Մոլորիմ. Բարձրանամ. Թուլանամ. Խստանամ. Սովորիմ. Ժառանգեմ. Զովանամ. Ցրտանամ. Ուժանամ. Զեռնում. Մեծանամ. Զարթնում. Ագանիմ. Հնազանդիմ. Դադարիմ. Ապրիմ. Տրտմիմ:

### Տա՞ ԲԱՑՈՎ ԱՆԵՐԵՒՈՅԹ

Հ. Տա՞ բայով աներեւոյթն հայերէն Բնչ կը նշանակէ :

Պ. Հայերէն ամէն աներեւոյթ տա՞ բայով կրնայ գործածուիլ, ինչպէս՝ տա՞ սոտել, տա՞ խօսել, տա՞ անշանել, ևայլն։ Տա՞ բայն այս կերպ գործածութեան մէջ բան մը ընել տու կամ լոյլ տու կը նշանակէ :

|                       |                          |
|-----------------------|--------------------------|
| Ես նմա ըմպել          | Անոր խմել գուասա         |
| Ոչ ես նմա ոէի առնուալ | Անոր շատնչ առնել շրուասա |
| Տայ քեզ ճաշակել       | Քեզի սոտել պէտէ տա՞      |
| Տուր ընթեանուալ դէբէտ | Այդ գիրքը կա՞ գրուածը    |

Ոչ տայ քեզ ճառնելի ներքս Քեզի լոյլ լիմ տար ներս ճանել

(\*) Աշակերտք նշանակեալ բայերուն անցողականները շննեն :

36 • Հրահանգ

Եղբայրու իր պարտքը չի վճարեր . Երբ տղան կաթէն կտրուեցաւ . Զեռքէն բռնելով վերցուց . Աշակերտները զանի արթնցուցին . Անոր իր հանդերձները հադուցի . Տղան ծնկուըներուն փրայ քնացուց . Շատերը կը զարմացնէր . Այդ տղան իր մօրը դարձուր . Պարտապան մը անոր առջեւը հանուեցաւ . Կըրակը մարեցին . Ճրագն հվ մարեց . Զանի բոլոր քաղաքը պտացուց . Բոլոր ազգերը հնազանդեցուց . Զանոնք հոն երկու օր դադրեցուցինք . Զիս այս վտանգէն աղատէ . Զանի մի տրտմեցուներ . Զանոնք չարաչար աշխատցուց . Նախ զանոնք անցուց գետէն և ետքը ինք անցաւ . Անոր խօսել չեմ տար . Մեզի շունչ առնել չեն տար . Անոր մեզի հակառակ խօսիլ չտուաւ . Ինք զիր չի զիտեր , ուրիշներուն գրել կ'ուտայ . Անոր զինի խմել տուին . Զեզի մեր երկրէն անցնիլ չենք տար . Երկու ոչխար մորթել տուաւ . Եթէ ինծի տեսնել տաս իմ որդիներս . Անոնց ձայն հանել չէր տար . Զանի իր տունը տանել տուաւ . Պարտքդ ինծի վճարէ . Զիս այս անգամ ալ զօրացուր . Փարաւոնին աղջիկը մեծցուց զՄովսէս . Աստուած Աբրահամը հարըստացուց :

|                          |                             |
|--------------------------|-----------------------------|
| Կաթէն կտրեմ , հագուցանեմ | Մունկ , ձունք . սեռ . ձնիոց |
| չ սրենե                  | Քնացունեմ , ննջեցուցանեմ    |
| Վճարեմ , հագուցանեմ      | Զարմացնել , աղլեցուցանեմ    |
| Զեռքէն բռնել , առել զիւ- | (Մէկուն) առջեւը հանել ,     |
| բանէ                     | մագուցանել առ (սր)          |
| Վերցունեմ , յըսուցանեմ   | Մարեմ , զէջուցանեմ          |
| Արթնցունեմ , լարնուցանեմ | Պտացունեմ , լրջեցուցանեմ    |
| Հազցունեմ , սէսուցանեմ   | Բոլոր , ամենոյն             |

Աղատեմ, աղեցուցանեմ  
Գետէն, ըստ գեղն  
Շուշ առնել, ոչ առնել Ձայն հանել,  
Ետքը, ապս  
Գիր, (գրութիւն) դպրութիւն Անգամ, նուադ  
Խմեմ, ըմպէյ  
Պատժեմ, պատժեմ  
Կղզի մը, 'է կողէ ուրեւ

Երկրէն, ընդ երկն  
Մորթեմ, վկնում  
Ալ, ես  
Անգամ, նուադ  
Մեծունեմ, ձևացնեմ  
Հարստացնեմ, մշացուցնեմ

## ԴԱՍ Լ.

Եմ ԲԱՑԻՆ ՔԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ . Գ. 5

Հ. Եմ բայը երբ էտիան բայ է :

Պ. Եմ բայն էտիան կամ էտիան բայ է, երբ սորունէնէ մը ենթակային (\* ) (տէր բայիին) հետ կը կապէ . զոր օրինակ՝ սա նախադասութեան մէջ՝ Արդուր և Աստուծ , են էտական բայ է, քանզի արդուր ստորոգելին Աստուծ ենթակային հետ կը կապէ :

|                     |                         |
|---------------------|-------------------------|
| Լուսաւոր է արեգակն  | Արեգակը լուսաւոր է      |
| Բաղում են աստեղք    | Աստղեց շոր են           |
| Դա է որդի իմ        | Իմ ուժեւ այդ է          |
| Այս էին բանք նոցա   | Անոնց իսութեան ասոնտ են |
| Իմ է երկիրս         | Այս երկիրն իմ է         |
| Քն իցէ մատեանդ      | Այդ էլեւը ուսկէդ է      |
| Այլ է խորհուրդ նոցա | Անոնց իսոհուրդն ասքէն է |

(\*) Տրամաբանք եւնել-է-ու կը կոչեն տէր բային , հայերէն քերականութեանց մէջ սույնութեանց բառած բառն ալ սուրուէնէ կ'անուանեն , իսկ էտական բայը , այսինքն՝ և բայը և ուր կ'անուանեն : Այս երեք բառերէն , այսինքն՝ ենթակայէ , ստորոգելի և էտիան բայէ բազկացեալ խոռը մը և-ու-սուսունիւն կ'անուանեն :

Բոլոր այս խօսքերուն մէջ Եմ բայն Էսկան կամ էս-  
յական բայ է :

Հ. Կայ նշանակող ուրիշ բնչ բայ կայ :

Պ. Գոյ պակասաւոր չեղոք բայը կայ կը նշանակէ ,  
և այս նշանակութեամբ շատ անգամ Եմ բային տեղ  
կը գործածուի , զոր օրինակ՝ էոյ աստ այր մի . հոս  
հորդ մը կայ :

Հ. Ու է , ու էոյ , չկայ՝ բառերուն տեղ հայերէն  
սովորաբար բնչ կը գործածուի :

Պ. Ու է , ու էոյ , չկայ՝ բառերուն տեղ հայերէն  
սովորաբար կը գործածուի չէ . զոր օրինակ՝

Չէտ ոք բարի Բարէ Անէւ չէոյ

Չէտ աստ տեղի բնակու-

թեան Հուակելու ուն չէոյ

Հ. Եմ բայն ուրիշ բնչ կը նշանակէ :

Պ. Եմ բայը 1° շատ անգամ չեղաւ բայ է , և կը  
նշանակէ էպնուակ ( տեղ մը ) , ներիոյ Շիւալ , և ան ատեն  
նախադասութեան մէջ սորուէնք ըլլլար , զոր օրինակ՝  
աս խօսքին մէջ , Ասորուած ամենայն ուրեւ է , Աստուած  
ամէն տեղ է . է կը նշանակէ ներիոյ է , իւ էպնուակ :

Ուր իցէ եղբայր իմ Եղբայր ո՞ւր է , այսինքն՝

ո՞ւր կը էպնուակ , ո՞ւր կը կե-  
նայ

Աստ է որդի քո Քու որդի հու այսինքն՝  
հոս կը էպնուակ , հոս կը կե-  
նայ

Պետքո՞ւ բանովին մէջ էր , այ-  
սինքն՝ կապուած , որէնեւ-  
սած էր

Եղաք առ նոսա աւուրս Եղաք առ նոնց ժող Եղանակ , այ-  
սինքն՝ մասցին , բնակե-  
ցան

2° Եմ բայը շատ անգամ կայ բային տեղ կը գործածուի , և նոյնպէս չէզոք է , զոր օրինակ .

Են ոմանք որ ոչ հաւատանկան ոմանք որ զին հաւադար է աստ այր մի Հոս Տարտ ճէ կայ

էին անդ թակոյկը եօթն Հոն Եօնը Շուկոյ է կայ

Հ. Գոմ բայը Եմ էական բային տեղ չի կրնար գործածուիլ :

Պ. Գոմ բայը Եմ էական բային տեղ գործածել ընտիր հայերէն չէ . ուստի և փոխանակ ըսելու՝ հիւանդ էոյ , վայելուչ էոյը , ճշմարիտ էու , պէտք է ըսել , հիւանդ է , վայելուչ էր , ճշմարիտ լինել :

### 37. Հրահանգ

Տգիտութիւնն ամբարտաւանութեան քոյրն է . Դատարկութիւնն ամէն չարեաց մայրն է . Կարդալն ձանձրութեան դեղթափն է . Գինին ծերերուն կաթն է . Բռնաւոր մարդն արձակուած առիւծ է . Շուշանն անմեղութեան նշան է : Առիւծին բարկութիւնը սոսկալի է . Հայրդ հւր է . Հայրս տունն է . Շատ օրեր հոն եղաւ . Քաղքին մէջ կին մը կար . Անտառին մէջ գաղաններ կան . Զեր եղբայրները պարտէզն են . Բանտին մէջ եղած ատենս . Անիկա մեզի հետ չէր . Կաթսային մէջ մահ կայ : Սրահին մէջ շատ բազմութիւն կար . Մայրս իւր սենեկին մէջն է . Ամէնքն ալ հոս են . Երկուքն ալ մէկտեղ էին . Հոս երկու սուր կայ . Անոր մեծ որդին ագարակն էր . Հոն մարդ մը կար . Հօրս տունը շատ սպասաւորներ կան . Դուք ծովն էք , մենք՝ ցամաքը . Օտարականներն այս սըրահն են . Հիւրը մեր քովն է . Այս տանը մէջ հարսնիք կայ . Թղենւոյն վրայ պտուղ չկայ . Քու ստակդիմ սնտուկս է . Անոր գերեզմանը եկեղեցւոյն բակն է . Երկիրը խաղաղութեան մէջ էր . Կենաց ծառը դրախ-

տին մէջ տեղն էր . Մեր սպասաւորները դաշտն են . Զեր քոյրերը գեղն են . Մայրդ հւը էր . Մայրս եկեղեցին էր . Հոն խողերու երամակ մը կար . Անոր ծառաներէն երկուքը բաղաքն են , երեքը՝ գեղը . Անոնցմէ մէկը հոս է :

|                             |                      |
|-----------------------------|----------------------|
| Կարդալը , ոգեղ ընթերցուած + | Ամէնքն ալ , ունեցին  |
| Դեղթափ , անթեղեայ           | Երկուքն ալ , երկուին |
| Արձակուած , աբյակ           | Մէկտեղ , 'է գոսէն    |
| Նշան , նշանակ               | Սուր , սուսեր        |
| Բարկութիւն , շասուած        | Մեծ (որդի) , երեց    |
| Սոսկալի , ահադին            | Մնառուկ , արկու      |
| Եղած ատենս , միւն է         | Բակ , գոսէն          |
| Շատ , յոյժ                  | Մէջտեղը , 'է մէջ     |

### Լ Ա Խ Ե Ա Խ Ի

Հայր էմ 'ի դան է : է , չէզոք բայ , կը նշանակէ՝ կը դտնուի , հոն է . սհմ . ներկ . եզ . Գ . դէմք . — Ո՞վէ (կը դտնուի) . — Հայր էմ . հայր , գոյ . եզ . ուղղ . տէր բայի է ին . իմ ատաց . ածակ . հայր ին . — Հայր էմ է , հւը . — Ի դան . 'ի դան' ի նախդրիւ բնութեան խնդիր է ին , տեղայ պարագան կը ցուցնէ :

### Դ Ա Ս Լ Ա .

Եմ ԲԱՅԸ ՀԱՅԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Հ . Ունէմ բային տեղ հայերէն Բնչբայ կը գործածուի :

Պ . Ունէմ բային տեղ հայերէն շատ անգամ եմ բայ . կը գործածուի :

Հ . Եմ բայն այսպէս ունիմ բային տեղ գործածելու համար Բնչ ընելու է :

Պ. Ունիչին սեռի խորհրդ ուր բայց ընելու է, իսկ  
ուր բայցն սեռականէ փոխելու է. զոր օրինակ .

Անիկա պարտէղ մը ունի Պաշտէղ մէ և նորո  
Հայրս այզի մը ունէր Այդէ մէ եթ հօք ի՞նչ  
Անիկա մանչեր և աղջիկ Եղին նորո ուսորեց + և դը-  
ներ ունեցաւ ուր

### 38. Հրահնանգ

Երկու եղբայր ունիմ . Անիկա ոչխար և արջառ  
ունէր . Մէկ հատիկ աղջիկ մը ունէր . Գիրք մը ու-  
նիմ . Եղբայրս պղտիկ պարտէղ մը ունի . Գեղեցիկ  
տուն մը ունինք . Անոնք մեծամեծ պալատներ ու-  
նին . Այն թագաւորը շատ զինուորներ ունի . Անոր  
զօրքը պաշար չունի . Հօրեղբայրս մանչ մը և աղջիկ  
մը ունի . Շատ ստակ ունիս . Շատ ստակ չունիմ,  
շատ բարեկամ ունիմ . Շառաներ և աղախիններ ու-  
նին . Հայրս մեծ տուն մը ունի . Անիկա պղտիկ շուն  
մը ունէր . Տեղ չունիմ . Մառաներ և աղախիններ  
չունին . Անիկա Եգիպտացւոց հետ պատերազմ ու-  
նեցաւ . Աչք ունին և չեն տեսներ . ականջ ունին և  
չեն լսեր . Բարեկամս պղտիկ շուն մը ունի որ շատ  
հաւատարիմ է . Շատ գիրք ունինք . Ուրիշ տուն մը  
ունիմ որ շատ գեղեցիկ է . Շատ բարեկամներ ունինք,  
շատ երջանիկ ենք . Զարերը բարեկամ չունին և թշուառ  
են . Անիկա որդի մը ունեցաւ . Հայրս շատ ստացուած  
ունի . Կինը մեծ գութ ունէր իր զաւկներուն :

Մէկ հատիկ , մամօշ

Դաինայտ

Պղտիկ , ժուր

Պղտիկ շուն , շնէ , շուն

Պալատ , ուսորեց +

Ժուրէի

Մանչ , ուսոր

Ջաւակ , որդեակ

Աղջիկ , ուսոր

Ստացուած , ինչ , ուսոր-

Աղախին , աղջին , յք . ու-

ուսոր

## ԼՈՒԾՈՒՅԹ

Են ի՞ս եղբար+ երկու : Են . էակ . բայ . սհմ . ներկ . յք .  
Դ . դէմք . հոս կը նշանակէ ունենալ : — Ո՞վ են . — Եղ-  
բար+ երկու . եղբար+ գոյ . յք . ուղ . տէր բայի են ին . Եր-  
կու՝ թուակ . ած . եղբար+ ին : — Եղբար+ երկու են որու .  
— Ի՞ս . ի՞ս էակ . դեր . Ա . դէմք . եղ . սեռ . խնդիր են ին ,

## ԴԱՍ ԼԲ.

### ԱՆԱԿԱՆԱՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հ . Ածական մը իրի մը յատկութիւնը քանի կեր-  
պով կրնայ ցուցնել :

Պ . Ածական մը իրի մը յատկութիւնը կրնայ ցու-  
ցնել երեք կերպով , 1° Պարզուիս , 2° Բաղդադանիւամբ ,  
և 3° իբր վերջին ասոքինան : Զոր օրինակ .

Եղբայրս իմաստուն է իմաստուն է եղբայր իմ  
Եղբայրս քու հօրմէդ աւե- Եղբայր իմ իմաստուն կամ է-  
լի իմաստուն է մաստիոյն է +ան զհայր քո  
Եղբայրս շատ իմաստուն է Եղբայր իմ իմաստուն է յոյժ

Առջի խօսքին մէջ իմաստուն ածականը ուրշ է :  
Երկրորդին մէջ բաղդադանին , երրորդին մէջ՝ էերդրուին :  
Ասոնք են ածականաց ասոքինաները :

Հ . Բաղդատութիւնը քանի տեսակ է :

Պ . Բաղդատութիւնը երկու տեսակ է . 1° Հաւա-  
սարունեան բաղդատութիւն . և 2° Տարբերունեան բաղ-  
դատութիւն :

Հ . Հաւասարութեան և տարբերութեան բաղդա-  
տութիւններն ինչ կը ցուցնեն , և ինչպէս կը բացատ-  
րուին :

Պ . Հաւասարութեան բաղդատութիւնը երկու բանի

իրարու հաւասար ըլլալ կը ցուցնէ , և իբրեւ և նախազրութեամբ կը բացատրուի : Տարբերութեամբ բազդատութիւնը երկու բանէ իրարմէ ուելէ կամ նուալ ըլլալ կը ցուցնէ , և առ զ նախազրութեամբ կը բացատրուի , զորօրինակ .

Օդը ջուրի ուեւ լոյծ է , Լոյծ է օդ իբրեւ զջուր , բայց անկէ ուելք բա- այլ նուրբ և թեթեւ է րակ և թեթեւ է : առ զնա :

Հ. Բաղդատութեան մէջ ածականին վրայ բնչ մասնիկ կամ բառ կ'աւելնայ :

Պ. Բաղդատութեան մէջ ածականին վրայ երբեմն է-յն մասնիկը կ'աւելնայ , երբեմն ալ ես բառը կը զբուի ածականէն առաջ կամ ետքը . զորօրինակ .

Ուժէ աւելի յարգի է ի- իմաստութիւն պատուական մաստութիւնը : կամ պատուականաէ-յն է քան զզօրութիւն :

Հարստութիւնն աղէկ է , Բարւոք է մեծութիւն , այլ բայց առաքինութիւնն առաքինութիւն բարւուն և աւելի աղէկ է : է :

Հ. Բաղդատութիւնը Երբ նուազութիւն կը ցուցնէ :

Պ. Բաղդատութիւնը նուազութիւն կը ցուցնէ , Երբ բայց բացառէն է , զորօրինակ .

Եղբայրդ քեզի լո՞յ խորա- Եղբայր քո խորագէտ է իբ- գէտ է : ըեւ զքեզ

Եղբայրդ քենէ նուալ խո- Եղբայր քո նէ խորագէտ է իբ- րագէտ է : ըեւ զքեզ

Եղբայրդ քենէ ուելի ա- Եղբայր քո լու կամ լուադոյն զէկ է : է առ զուշ

Եղբայրդ քենէ նուալ ա- Եղբայր քո նէ ինչ լու կամ զէկ է : լուադոյն առ զուշ

Հ. Հայերէն գլաբարի մէջ գերազրական աստիճան ցուցնելու համար Բնչ ընելու է :

Պ. Հայերէն դրաբարի մէջ էերդրախն աստիճան ցուցնելու համար ածականին վրայ աւելցնելու է յոյժ, իորէ, անհատէն և ուրիշ ասոնց նման բառեր :

### 39. Հրահանգ

Եղբայրս քու հօրդ պէս հարուստ է, բայց ինչ աւելի հարուստ չէ. Զեր հօրեղբօրը տունը մերինին պէս ընդարձակ է. Այս պարտէզը մեծ է, բայց իմինիս չափ գեղեցիկ չէ. Առիւծը վագրին չափ անգութ չէ. Կ'ուղեմ տունս քակել և աւելի գեղեցիկ շինել. Այս տղան քու աղջկանէդ աւելի խելօք և հանդարտ է. Ծովերը լիճերէն աւելի խորունկ և ընդարձակ են. Դուք ինչ աւելի իրաւացի էք. Ես անիրաւ եմ, դուն ինչ աւելի անիրաւ ես. Եղբայրդ բոլորովին անիրաւ է. Իմ եղբօրմէս մեծ ես. բայց անկէ աւելի խելօք չես. Մեր ծառաները ձերիններէն երջանիկ են. Իմ բժիշկս քուկինէդ աւելի վարպետ է. Այս մարդը շատ հարուստ է. Երեսունէ աւելի տուներ ունի. Դուն շատ բաներով զբաղած ես, բայց եղբայրս քենչ աւելի զբաղած է. Դուն քիչ կը զբունուս, ես քենչ քիչ, իսկ քոյրս մենչ աւելի քիչ. Օգը ջուրէն թեթեւ է. Որդիս քենչ իմաստուն է. Այս լեռն ամէն լեռներէն բարձր է. Աշխարհիս մէջ վատահամբաւ ըլլալէն աղէկ է մեռնիլ. Կենդանի շունը մեռած առիւծէն աղէկ է. Թագաւորները զօրաւոր են, բայց Աստուած անոնցմէ աւելի զօրաւոր է. Եղբայրդ խելօք է, բայց իմ եղբայրս անկէ աւելի խելօք է. Զեր քոյրը պարկեշտ է. բայց մեր դպրոցին աղջկներն անկէ աւելի պարկեշտ են: Այս տղաքն իրենց հօրմէն աւելի խելացի են. Հովն ու ջուրն ամէն

բանէ աւելի սաստիկ և ուժով են . Առիւծէն աւելի սոսկալի կենդանի մը չկայ . Արեւին լոյսը լուսնին լուսէն պայծառ է . Հոգին մարմինէն գերազանց է . Լուսինն ուրիշ աստղերէն փոքր է . Աստղերէն ոմանք արեգակէն մեծ են . Հին գինին նորէն աւելի յարգի է . Նպատ լեռն Արարատին չափ բարձր չէ , ( կամ Արարատէն նուազ բարձր է ) . Սեւ ծովը Միջերկրականէն աւելի շատ անգամ կ'ալեկոծի . Այս մարդը մենէ աւելի շատ անգամ կը ճամբորդէ . Այս լեռները շատ բարձր են . Զուրին զօրութիւնը շատ սաստիկ է . Անոր յաղթել շատ դժուար է . Ցամաքը մենէ շատ հեռ ոռւ էր . Այն մարդը շատ ճարտասան է :

|                                                           |                                  |
|-----------------------------------------------------------|----------------------------------|
| <b>Պէս</b> , իբրև Դ                                       | <b>Սաստիկ</b> , բուռան           |
| <b>Անգուլի</b> , անաէորյոյն                               | <b>Ուժով</b> , ուժքին            |
| <b>Աւելի</b> , եւս                                        | <b>Կենդանի</b> , գաղան           |
| <b>Խելօք</b> , զէօն                                       | <b>Սոսկալի</b> , ահաֆին          |
| <b>Իրաւացի</b> (հագուլ) : արդար Գերազանց , աւաւել         |                                  |
| <b>Բոլորովին</b> , յոյժ , անւելին Աստղերէն ոմանք , եւ աս- |                                  |
| <b>Վարպետ</b> , ճարդար                                    | <b>Գեղ</b>                       |
| <b>Շատ բաներով</b> , զբաղաւմ իւ-                          | <b>Շատ անգամ</b> , սովոր , յանախ |
| — է +                                                     | <b>Շատ անգամ</b> , սովոր , յանախ |
| <b>Զբաղած</b> , զբաղւուլ                                  | <b>Ալեկոծիմ</b> , ամբոխիմ        |
| <b>Վատահամբաւ</b> , վարանսան                              | <b>Ճամբորդիմ</b> , ճանապարհորդեմ |
| <b>Զօրաւոր</b> , հղօք                                     | <b>Շատ</b> ( մկ . ) յոյժ         |
| <b>Պարկեշտ</b> , զիտար                                    | <b>Զօրութիւն</b> , բռնութիւն     |
| <b>Խելացի</b> , հանճարեղ                                  | <b>Ճարտասան</b> , բանիբուռ       |

### Լ Ա Խ Ե Ր Ա Խ Ր

Եղբայր էմ մեծադառն է իբրև շհայր + , այլ չէ ընկեր + առն չէս : է , էակ . բայ սհմ . ներկ . եղ . գ . դէմք . — Ո՞ւ է . — Եղբայր էմ . եղբայր իմ՝ տէր բայի է ին . —

Եղբայր իմ է , ի՞նչ . — Մեծադուն . մեծատուն՝ ստո-  
րոգելի Եղբայր ին . — Եղբայր իմ մեծատուն է , իբրև  
շուն . իբրև զհայրքո՛ նախադրութեամբ  
խնդիր Նեծադուն ին , հաւասարութիւն կը ցուցնէ :

Այլ և ընկեր տան զիս : Է , բայ էակ . սկմ . ներկ .  
եղ . Դ . դէմք . — Է , նվ . — նա ( Եղբայր իմ ) , դերա-  
նուն տէր բայի , զօրութեամբ կ'իմացուի : — Է նա՝  
ի՞նչ . — Ընկեր . ընչեղ՝ ստորոգելի նա ին . — Է նա ըն-  
չեղ տան զիս . քան զիս՝ տան զ նախադրու-  
թեամբ խնդիր , առաւելութիւն կը ցուցնէ , հոս բայը  
բացասական ըլլալուն համար նուազութիւն կը ցու-  
ցընէ . Ն , բացասական մակրայ . այլ , շաղկապ , խօս-  
քին երկու նախադասութիւնները կը կապէ :



## Դ Ա Ս Լ Գ .

ԱԽԱԿԱՆԱՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ . Ածականները խնդիր կ'ուզեն և բնչ հոլով :

Պ . Ածականներէն ոմանք շատ անգամ տրական ,  
բացառական , դործիական , և կամ նախադրութեամբ  
խնդիր մը կ'ուզեն . ինչպէս , կարօտ իրադու , խրատի  
կարօտ . Մէրէ 'է հանդերձէց , հագուստէ զուրկ . Ու շնոր-  
հօտ , շնորհքով լեցուն . Պարբռուտ 'է կուս , կոռի պատ-  
րաստ :

Հ . Թուական և անորոշ ածականք բնչ հոլով խըն-  
դիր կ'ուզեն :

Պ . Թուական ածականք , և քանակութիւն ցու-  
ցընող ուրիշ քանի մը ածականաց յոքնակիներն , ինչ-  
պէս՝ բազումն , կեստ , շատ , և անորոշ ածականք՝ ո՞ն ,  
ո՞նանտ , այլտ , ո՞վ , գոյականաբար առնուելով բացառա-  
կան հոլով խնդիր կ'ուզեն : Այսպէս կ'ըսուի Մէն է

յէւզ , ձենէ մէկը . Երիսու է նոյնանէ , անոնցմէ երկուքը .  
Բողոքունք յոշոնկերուց անորէ , աշակերտներէն շատերը . Այլէ  
չ բորբոքածոց նորս , անոր բարեկամներէն ուրիշները . Ա-  
յսնու է մէնջ , մտնէ ոմանք :

### 40. Հրահնանգ

Ի՞նչ բանի կարօտ ես . Զեր օգնութեանը կարօտ  
եմ . Նոյ հաճոյ եղաւ Աստուծոյ . Կ'ուզես ինձի հաճոյ  
ըլլալ . Քու տիրոջդ հաճոյ եղիր . Անոնց քուրձերը ցո-  
րենով լեցուն էին . Պտղով լեցուն երեք կողով բերին .  
Մեր շտեմարանները դատարկ են բերքէ . Բարեկամ ,  
քենէ գոհ եմ . Անոնց տէրերը գոհ էին անոնցմէ . Աշ-  
խատութիւնը մարմնոյ օգտակար է . Դատարկութիւնը  
թէ մարմնոյ և թէ հոգւոյ վնասակար է . Գիտութիւնը  
հարկաւոր է ամէն մարդու . Հոգին մարմինէն (քան  
զմարմինը ) գերազանց է . Դուն քու եղբայրներէդ գե-  
րազանց ես իմաստութեամբ . Քաջութենէ պակաս  
չենք . Երկիրը բնակիչներէ պարպուած էր . Ցաւերէ  
աղատ էք . Անոնք հիւանդութիւններէ զերծ են . Ա-  
նոր տունը եկեղեցւոյն կից էր . Մարդիկը որսի տեղ-  
եակ էին . Ճամբուն տեղեամկ ես (զիտեն ) . Անոնց  
խորհուրդներուն (միտքը դրածին ) անտեղեակ չենք .  
Անոնց գործքերուն հազորդ մի ըլլաք . Գիրը դիւրին  
էր կարդացուելու . Խօսքերը դժուար էին իմանալու .  
Անոնց արիւնէն մաքուր եմ . Առաքինութենէ և բարի  
գործքերէ մերկ էին . Անիկա վարժ էր զրագրութեան  
արհեստին մէջ . Զին և շունը շատ ընտանի են մար-  
դուս . Աստուծոյ պատուէրն է մեծերուն հնազանդ  
ըլլալ . Մենէ օտար մի ըլլաք . Աստուծոյ կամքին հը-  
պատակ ըլլալ մեզի պարտք է :

Ի՞նչ բանի , ի՞մ ի՞նէ+  
Լեցուն , լլ

Դատարկ , ո՞նայն  
Բերք , ո՞բէնէ+

|                        |                             |
|------------------------|-----------------------------|
| Քենէ , զէն             | Կարդացուելու , առ ընթեա-    |
| Հարկաւոր է , պէտոյ է   | նուլ                        |
| Մաքուր , սուբէ         | իմաննալ , առնուլ է մէտ . ի- |
| Գրազրութիւն , էրշ-նէ-ն | մանալու , յառնուլ է մէտ     |
| Գերազանց , սուս-ել     | Մարդիկը , ուրի              |
| Պակաս , լերէ           | Ճամբայ , ճանապարհ           |
| Պարզուած , լուխուր     | Արհեստ , արուեստ            |
| Հիւանդութիւն , մէտ     | Մեծ , սոսէ                  |
| Զենք , չէմ+ ինչ        | Պարտք : պարուր :            |

#### 41. Հրսւհանդ

Անոնցմէ երկուքը գիւղ մը կ'երթային . Մենէ շատերը հոն էին . Անոնցմէ հինգը իմաստուն էին , և հինգը՝ յիմար . Բազմութենէն ոմանք առաջ եկան . Զեր եղբայրներէն մէկը մեր քովս է . Իշխաններէն մէկը կ'ըսէ անոր . Զենէ քիչերը կրնան ընել ասիկա . Անոնցմէ կէսը ( ոմանք ) սպաննուեցան , ուրիշները գերութեան տարուեցան . Աւազակներէն ոմանք սպաննեցին , մասցածները ծովը նետեցին . Անոնցմէ շատերը պրծան . Անոնցմէ և ոչ մէկը կենդանի կը թողուր . Զենէ ամենէն պղտիկն անկէ մեծ է : Անոնցմէ հազար մը կորսուեցան . Անոնցմէ ամեն մէկը մէյմէկ հատը ուսը առաւ . Զենէ նվ կուզէ ինծի հետ գալ . Յանցաւորներէն զործնք բռնեցիք . Անոնցմէ երկուքը միայն բռնեցինք , ուրիշները լեռները փախչելով ազատեցան :

|                                               |                        |
|-----------------------------------------------|------------------------|
| Բազմութիւն , մէտոյ                            | Մնացածները , ճառցեալոն |
| Առաջ եկան , մարեան յառաջ                      | Նետել , ընկենում       |
| Մեր քովը , սոս մէլ                            | Շատերը , ոչ սակաւ      |
| Կրնալ , կոշող եմ                              | Պրծիմ , չէրծանէմ       |
| ( Գերութեան ) տարուիլ , չորտէ ( ի գերութիւն ) | Ոչ մէկը , ոչ զի ո+     |
|                                               | Պղտիկ , էուրէն         |

Կորսուիմ, կորնկիմ  
Ամէն մէկը, է-ը-+անկեր  
Մէյմէկ հատ, մէն մէ

Բռնել, ունիս, կտ. կուոյ  
Միայն, եւել  
Ազատիմ, ողբէս

---

## ԴԱՍ ԼՂ.

ՍՏՈՐՈԳԵԼԻ ՀԱՅՑԱԿԱՆ ԵՒ Է ՆԱԽԴՐԻՒ

Հ. Ստորոգելին բնչ հոլով ըլլալու է :

Պ. Ստորոգելին ուղղական է, երբ տէր բայիին կը վերաբերի . բայց անունել, կոչել, ունել, կորդել, առաջանել բայերուն ստորոգելին անորոշ (առանց դի ) հայցական ալ կը դրուի , երբ սեռի խընդրոյն կը վերաբերի :

Տ.Տէր բայիին վերաբերեալ ստորոգելին ալ չի կրնար ուրիշ կերպ գործածուիլ :

Պ. Բայի մը տէր բայիին վերաբերեալ ստորոգելին կրնայ շատ անգամ է նախդրիւ անորոշ հայցական դրուիլ , երբ գոյական անուն է . այսպէս կ'ըսուի . Եղէց ձեզ է հայր . Զեզի հայր ըլլամ . եւ դուք եղիջիք ինձ յուրէն . Դուք ալ ինձի որդիք ըլլաք :

## Հրահանգ

Մարդիկ մահկանացու են . Դուն իմ բարեկամս ես . Ասոնք հարուստ մարդու որդիներ են . Աստուծոյ որդիները պիտի կոչուին . Անոնք անարատ գտնուեցան . Զանի ինձի բարեկամ ըրի . Մեզ իրենց որդիներուն դաստիարակ ըրին . Զանոնք իր տանը վրայ մատակարար դրաւ . Բանտին դուռները գոցուած գըտաւ . Թագաւորը ձեզ վերատեսուչ չղբաւ մի . Զանոնք արդար գտայ . Զեզ բնչ անուանեմ . Անոնց որդիք որոտաման անուն դրաւ . Այս տղաքը դատարկապորտ

սորվեցուցիք . Զեր կիները տանտիկին սորվեցուցէք , ձեր աղջիկները՝ ժիր և համեստ . Այս լեռները դաշտ պիտի ըլլան . Ինծի որդի եղիր , ես ալ քեզի հայր ըլլամ . Այդ շէն երկիրն անապատ չըլլայ . Զանոնք ինծի խորհրդական և խրատու ընտրեցի . Մեծամեծ աղջեր քակուեցան ու ոչինչ եղան . Այս պտուղները ձեզի կերակուր ըլլան :

|                           |                            |
|---------------------------|----------------------------|
| Հարուստ , մեծաբառն        | Դատարկապորտ , դատարկ-      |
| Դնել , խցաւցանել , խցիել  | անյն , յթ . դատարկանյանե-  |
| դնել                      | Սորվեցունել , սոսացանեմ    |
| Գոցուած , գակեալ          | Տանտիկին , գնաբար , գնալին |
| ( Զգրած ) մի , ո՞չ աղածին | Քակուիմ , ուկաչիմ          |
| Վերատեսուչ , ուսուչ       | Պտուղ , մետ                |
| Անուանեմ , խոշմ           |                            |

### Լ Ո Ւ Ծ Ո Ւ Ր

Արարէ զնա ինչ բարեկամ . Զանի ինծի բարեկամ ըրի : Արարէ , բայ ներգ . կտ . եղ . Ա . դէմք : — Ո՞վ է ընուց . — Ես , զօրութեամբ , էակ . դեր . եղ . Ա . դէմք ուղղ . տէր բայի Արարէ ին : — Արարէ . ըրի , լու . — Զնա , զանի , էակ . դեր . Գ . դէմք . եղ . հայց . սեռի խնդիր Արարէ ին : Արարի զնա , էնալ . — Բարեկամ . բարեկամ՝ գոյ . հայց . ստորողելի զնա ին . — Արարի զնա բարեկամ , որիւ . — Ինչ , ինծի . էակ . դեր . Ա . դէմք եղ . տրակ . բնութեան խնդիր Արարէ ին :



### Դ Ա Ռ Լ Ե .

ԲԱՑԱՑԱՑԻՉ , ԿՈՉԱԿԱՆ

Հ . Բացայայտիչն ինչ է :

Պ . Բացայայտիչը բացատրութիւն է ուրիշ բառի մը որ բացայտեալ կը կոչուի :

Արմենակ , Երեց ուրդին Հայկա . այս խօսքին մէջ՝  
Երեց ուրդին Հայկա , բացայայտիչ է Արմենակին :

Հ . Բացայայտիչը զրաբարի մէջ Բնչ հոլով կը գըր-  
ուի :

Պ . Բացայայտիչը զրաբարի մէջ բացայայտելոյն հոլովը  
կը զրուի :

Հ . Յատուկ անուանց տիտղոսներն Բնչպէս կը  
դորձածուին :

Պ . Յատուկ անուանց տիտղոսներն , ինչպէս՝ մեծ ,  
սուրբ , +ազ , Երանելի , անունէն թէ առաջ և թէ ետքը  
զրուելով մէկտեղ կը հոլովին . Եթէ անունէն առաջ  
կը զրուին , և յօդը կ'առնեն . Եթէ ետքը կը զրուին ,  
յօդ չեն առներ . զոր օրինակ .

### Առաջ դրուած

|                   |                   |                   |
|-------------------|-------------------|-------------------|
| ՄԵՃՆ Սահակ        | ՄԵՃՆ Սահակայ      | ՄԵՃՆ Սահակաւ      |
| ՄԵՃԻՆ Սահակայ     | ՄԵՃԻՆ Սահակայ     | ՄԵՃԻՆ Սահակաւ     |
| ՄԵՃԱՆ Սահակաւ     | ՄԵՃԱՆ Սահակաւ     | ՄԵՃԱՆ Սահակաւ     |
| ՄՈՒՐԲՆ Գրիգոր     | ՄՈՒՐԲՆ Գրիգոր     | ՄՈՒՐԲՆ Գրիգորի    |
| ՄԵԲԱՆ Գրիգորի     | ՄԵԲԱՆ Գրիգորի     | ՄԵԲԱՆ Գրիգորիւ    |
| ՄԵԲԱՆ Գրիգորիւ    | ՄԵԲԱՆ Գրիգորիւ    | ՄԵԲԱՆ Գրիգորիւ    |
| ԵՐԱՆԵԼԻՆ Տրդատ    | ԵՐԱՆԵԼԻՆ Տրդատայ  | ԵՐԱՆԵԼԻՆ Տրդատաւ  |
| ԵՐԱՆԵԼՈՅՆ Տրդատայ | ԵՐԱՆԵԼՈՅՆ Տրդատաւ | ԵՐԱՆԵԼՈՅՆ Տրդատաւ |
| ՔԱՋՆ Վարդան       | ՔԱՋՆ Վարդանայ     | ՔԱՋՆ Վարդանաւ     |
| ՔԱՋԻՆ Վարդանայ    | ՔԱՋԻՆ Վարդանայ    | ՔԱՋԻՆ Վարդանաւ    |

### Ետքը դրուած

|                  |                  |                  |
|------------------|------------------|------------------|
| Սահակ մեծ        | Սահակայ մեծէ     | Սահակաւ մեծաւ    |
| Սահակայ մեծէ     | Սահակաւ մեծաւ    | Սահակաւ մեծաւ    |
| Տրդատ Երանելի    | Տրդատայ Երանելոյ | Տրդատաւ Երանելոյ |
| Տրդատայ Երանելոյ | Տրդատաւ Երանելոյ | Տրդատաւ Երանելոյ |
| Վարդան մազ       | Վարդանայ մազէ    | Վարդանաւ մազէ    |
| Վարդանայ մազէ    | Վարդանաւ մազէ    | Վարդանաւ մազէ    |

### Կ Ո Չ Ա Կ Ա Ն

Հ . Կոչականն Բնչ է :

Պ . Կուշիռն կ'ըսուի անձ մը կամ իր մը առ որ խօս-  
քը կ'ուղղուի : Լուարուք , Անենացիւ . Լսեցէք , Աթե-  
նացիներ . այս խօսքին մէջ Աթենացիք իրական է :

Հ. Կոչականէն առաջ կամ ետքը շատ անգամ բնչ  
բառ կը դրուի :

Պ. Կոչականէն անմիջապէս սուզ շատ անգամ ո՛վ  
կամ ո՛բառը կը դրուի . իսկ անմիջապէս ետքը՝ եր-  
բեմն դու բառը կը դրուի , եթէ կոչականը եղակի է .  
զոր օրինակ .

Լուարուք , ո՛վ կամ ո՛Ալենացէ+ . Լսեցէք , ով Ա-  
թենացիներ :

Եկ այսր , Տանուկ դու . Հոս եկուր , տղայ :

Հ. Եթէ կոչականէն առաջ ածոկան մը , կամ ետ-  
քը յարկացուցէլ մը կայ , Բնչ կ'ըլլայ :

Պ. Եթէ կոչականէն առաջ ածոկան մը կայ , ածա-  
կանին վրայ ո՛գիրը կը դրուի , իսկ Եթէ կոչականէն  
ետքը յարկացուցէլ մը կայ , կոչականին վրայ ո՛գիրը  
կը դրուի , զոր օրինակ .

|                     |                       |
|---------------------|-----------------------|
| Լուր , քաջու Վարդան | Լսէ , քաջ Վարդան      |
| Եկ , արքայու Հայոց  | Եկուր , Հայոց թագաւոր |

### 43. Հրահանգ

#### Բ Ա Յ Ա Յ Ա Յ Տ Ի Զ

Տիգրան մեծ , Հայոց թագաւորը , շատ անգամ  
կռուեցաւ Հռովմայեցւոց հետ և յաղթեց անոնց . Դա-  
ւիթ իր թագաւորութիւնը թողուց իր Սողոմոն որդ-  
ւոյն . Դաւիթ սպաննել տուաւ Ուրիան որ անոր կինը ,  
Բերսաբէն , առնէ . Սողոմոնի որդւոյն , Ռոբովամայ ,  
ատենը , Խարայելի թագաւորութիւնը երկուքի բաժ-  
նուեցաւ . Մեծ գետէն , Եփրատէն , անցաւ . Անզրէ-  
աս իր եղբօրը , Գետրոսին , ըսաւ . Ի՞նչ կ'ուզես ի-  
նէ , խեղճ մարդէ մը . Իր հայրենիքը , Հայաստան ,  
եկաւ . Մեծն Աղէքսանդր , Մակեդոնացւոց թագաւո-  
րը , Պարսից տէրութիւնը նուածեց . Ասիկա եղաւ  
Պարսից թագաւորին , Դարեչի կոդոմանոսի , ատենը .

Յիսուս խաչուեցաւ Հռոմայեցի դատաւորին, Պոնտացի Պիղատոսին, հրամանաւ . Աստուած Աբրահամին հրամայեց որ իր մէկհատիկ որդին, իսահակը, զոհ ընէ . Հայոց քրիստոնէութեան դառնալը Սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձեռօք եղաւ . Մեծին Տրդատայ հըրամանաւ սպաննուեցան Հռոմայեցի կուսանք, Հըռոխսիմեանք, Հայոց Վաղարշապատ մայրաքաղքին մէջ . Աբրահամ իր ծառային, Եղիազարու, ըսաւ . Յակոբ Եգիպտաս իր որդւոյն, Յովսեփին, եկաւ . Կայէն իր եղբօրն, Աբելին, նախանձեցաւ, և սպաննեց զանի . Հայոց նշանաւոր քաղաքներն երասխ գետին եղերքն էին . Երանելին . Սահակ և Մեսրովալ սուրբ Գիրեերը թարգմաննեցին իրենց Եղնիկ, Արձան, Յովսէփ, Յովհան և Կորիւն աշակերտներով մէկտեղ .

**Ասիկա, այս**

**Դառնալը, Շահը**

( Դարեհի ) ատենը, առ-

**Զեռօք, ՚ի յեւն**

( Դարեհիւ )

**Մէկհատիկ, Գոմօը**

**Մէկտեղ, հանդելք**

#### 44. Հրահանգ

Կ Ո Զ Ա Կ Ա Ն

Որդեակ, հօրդ Խրատը մտիկ ըրէ . Զնվ կը փընտըռես, կնիկ . Մառաներ, ձեր տէրերուն հնազանդ եղիք . Ինչու կը տանջես զիս, ով մարդ . Գեղեցիկ Արիադնէ, քեզ հոս հվ բերաւ . Զէնքդ առ, քաջ Վահան . Ել կայնէ, հվ տղայ . Քեզի կ'ըսեմ, հվ աղջիկ . Ի՞նչ կը քնանաս, արթնցիր, հվ վատ . Տեարք, ինչ կ'ուզէք որ ընեմ . Քեզ զիտեմ, Աստուծոյ սուրբը . Քենէ շնորհակալ եմ, քաջ Փելիքս . Իսրայելի թագաւորը, իսչէն իջիր . Հեռու կեցէք ինէ, անիրաւ մըշակներ . Ամշցիր, հվ խաղաղութեան թշնամի . Վարձքդ մեծ է, հվ աղքատներուն հայրը :

|                   |                         |
|-------------------|-------------------------|
| Մարիկ ընել, ըեւ   | Ընել, առաւեւ            |
| Փնտուել, ինդրեւ   | Ուզել, կած              |
| Բերել, անեւ       | Քենէ, չեն               |
| Կայնիլ, կամ       | Իջնել, իջնեւ            |
| Տղայ, ճանաւի      | Հեռու կենալ, 'ի բաց կու |
| Քնանալ, ննջեւ     | Ամշնալ, յամոն լինէւ     |
| Արթննալ, լորինաւս |                         |

---

### Լ Ա Խ Ո Ւ Մ

Աղեւտսանդր մեծ, արտայ Մակեդոնացւոց, նուաճեաց ընտերութիւնն Պարսից : Մեծ Աղեքսանդր Մակեդոնացւոց թագաւորը Պարսից տէրութիւնը նուաճեց : — Նուաճեաց, բայ ներգ. կտր. եղ. Գ. դէմք : — Նուաճեաց, ո՞վ . — Աղեւտսանդր մեծ : Աղեւտսանդր, յատ. անուն . ուղղ. տէր բայի նուաճեաց ին . մեծ՝ ածական . Աղեքսանդրի տիտղոսն է : — Աղեքսանդր մեծ հվ էր : — Արտայ Մակեդոնացւոց, Մակեդոնացւոց թագաւորը . բացայայտիչ Աղեւտսանդր ին : Աղեքսանդր մեծ նուաճեաց, ի՞նչ բան . — Զարեւութիւնն Պարսից . Տէրութիւն՝ գոյ. հյց. սեռի խնդիր նուաճեաց ին . Պարսից, յատուկ ան. յոք. սեռական, յատկացուցիչ՝ տէրութիւնն ին :



### Դ Ա Ս Լ Զ.

#### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Յարաբերական դերանունն ինչ է և ինչ կը նշանակէ :

Պ. Յարաբերական դերանունն է որ բառը, և կը նշանակէ ո՞ւ, ո՞ն ո՞ւ :

Հ. Աշխարհաբարին հը տեսակ խօսքերն են որ

գրաբարի մէջ որ յարաբերականով և դիմաւոր բայով  
կը բացատրուին :

Պ. Աշխարհաբար ող և ած բառերով բացատրուած  
խօսքեր գրաբարի մէջ ընդհանրապէս որ յուրաքերականով  
և ուժուուր բայով կը բացատրուին . զոր օրինակ .

Աշխարհաբար

Գրաբար

Այդ գիրքը քեզի ուսուլ Այրն որ եպ քեզ զմատեա-  
մարդը իմ բարեկամս է նըդ՝ բարեկամ իմ է

Զիս սիրով

Որ ոչըն զիս

Տեսն մարդդ իմ բարե- Այրն լոր ուսանեա՝ բարե-  
կամս է կամ իմ է

Լուծու պատմէ

Պատմեա զոր լուսուն

Հ. Որ ոչըն , զոր լուսուն , խօսքերուն մէջ Ն յօդն  
ինչու համար դրուած է :

Պ. Երբ որ յարաբերականին յուրաքերեալը զօրու-  
թեամբ կ'իմացուի , յարաբերականէն անմիջապէս եպէը  
եկու բառին էր , կը դրուին ։ ո , ո , ն , յօդերը :

Ար սիրէն զիս , կը նշանակէ նա որ սիրէ զիս .  
Զոր լուսարն կը նշանակէ այն կամ զայն զոր լուսար :

Հ. Յարաբերեալը որ բասին կ'ըսուի :

Պ. Յուրաքերեալ կ'ըսուի այն բառը որուն տեղ կը  
դրուի յարաբերականը . ուստի՝ այն զոր տեսեր , կամ  
այն որ խօսի , խօսքերուն մէջ՝ այն յարաբերեալ է :

Հ. Եսիր թէ , երբ յարաբերեալը զօրութեամբ է ,  
յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վը-  
րայ ։ ո , ո , զիրերը կը դրուին . կրնաս ըսել նաեւ  
թէ այս զիրերուն որը երբ կը գործածուի :

Պ. Եթէ զօրութեամբ իմացուած յարաբերեալը ես ,  
աս , կամ այս և ասոնց յոքնակին է , ո զիրը կը գոր-  
ծածուի . եթէ ոտ , ոտ կամ այդ և ասոնց յոքնակին  
է , ոտ , եթէ նա կամ այն և ասոնց յոքնակին է , ն .  
զոր օրինակ .

|                        |                         |
|------------------------|-------------------------|
| Որ խօսիմն ընդ քեզ      | փոխ. Ես որ խօսիմ        |
| Որ կարողքն եմք         | » Մեւ որ կարող եմք      |
| Որ աստա է              | » Աս որ աստ է           |
| Որ խօսինս              | » Սուս որ խօսին         |
| Զոր ասեմս              | » Այս զոր ասեմ          |
| Որ ձիթենիր վայրենի էիր | » Դու որ կն.            |
| Որ ի Գէթր էք           | » Դուտ որ ևն.           |
| Որ ի բէնդ առաքեցաւ     | » Դու որ առաքեցաւ ևն.   |
| Որ իբրեւ զքեզդ իցեն    | » Դուտ որ ևն.           |
| Զոր դուդ առնես         | » Այդ զոր դու առնես     |
| Ընդ որս դուքդ զարմա-   | » Այդուիչ ընդ որս ևն.   |
| նայք                   |                         |
| Որուն դուն վկայեցեր    | » Նա որում ևն.          |
| Որ զնովաւն էին         | » Նուս որ զնովաւ էին    |
| Զոր մեքն կարող եմք     | » Այն զոր մեք կարող եմք |

Հ. Յարաբերականին բայն Բնչ ժամանակ կը դըր-ուի :

Պ. Յարաբերականին բայը , խօսքին իմաստին նայելով , Ներկայ , անկատաց , իտուալեալ և աղաւանէ կը դըր-ուի . ուստի :

|                                        |                                                         |
|----------------------------------------|---------------------------------------------------------|
| Այրն որ խօսէ                           | կը նշնկէ . Մարդը որ կը խօսի , կամ ,<br>հիմա խօսող մարդը |
| Այրն որ խօսէր                          | » Մարդը որ կը խօսէր , կամ ,<br>աւագ խօսող մարդը         |
| Այրն որ խօսէցաւ                        | » Մարդը որ խօսեցաւ , կամ ,<br>արդէն խօսող մարդը         |
| Այրն որ խօսեացէ<br>Այրն որ խօսելոց է } | » Մարդը որ պիտի խօսի<br>Նոյնպէս՝                        |
| Որ խօսէն                               | կը նշնկէ . Ան որ կը խօսի , կամ , հի-<br>մա խօսողը       |

- Որ իսուեն Կը նշնկէ. Ան որ կը խօսէը , կամ , ա-  
ռաջ խօսողը  
 Որ իսուեցան » Ան որ խօսեցաւ , կամ , ար-  
տիչ խօսողը  
 Որ իսուեցէն } » Ան որ պիտի խօսի  
 Որ իսուելցն է }

#### 45. Հրահանգ

(\*) Սորվող աշակերտը . Կռուող զինուորը . Եկող  
մարդիկը . Արածուող անասունները . Փախչող թշնամին :  
Տեսած գիրքս . Առած ստակդ . Մեր տուած պար-  
գեւները . Հօրդ շինած տունը . Անոնց մատուցած զո-  
հերը :

Խօսողը . Տեսնողը . Լսողը . Նստողը . Երգողները .  
Ղրկուողները . Պտտողները :  
Տեսածս . Առածդ . Լսածը . Անոր գրածը . Մեր  
խմածը . Զեր սորվածները :

|                   |                |
|-------------------|----------------|
| Սորվիլ , ուստանէմ | Ղրկել , առածէմ |
| Կռուիլ , ճարդնչէմ | Պտտիլ , աջէմ   |

Հ . Որ յարաբերականով և դիմաւոր բայով շին-  
ուած խօսք մը հոլովելու համար Բնչ պէտք է ընել :

Պ . Որ յարաբերականով և դիմաւոր բայով շին-  
ուած խօսք մը հոլովելու համար՝ պէտք է յարաբերա-  
կանը հոլովել , զոր օրինակ .

Որ խնդրէ , ուզողը , ուրա խնդրէ , ուզողին (սեռ) ,  
ուրուտ խնդրէ , ուզողին (արակ) , զոր խնդրէ , ուզո-  
ղը , յորդ խնդրէ , ուզողէն :

Որ+ խնդրեն , ուզողները , ուրա խնդրեն , ուզող-

(\*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբառ . Խօսքերը յարաբերա-  
կանով գիրմաւոր բայի գարձունեն գրաբար . Բայը՝ Ներէս , Ակ-Դար ,  
Է-Դարէտու և Աղունէ գնելով .

ներուն ( «Եւ . ՊՐՈՒՆ . » ) , զլրա խնդրեն , ուղողները , յուրաց խնդրեն , ուղողներէն :

Հ. Որ յարաբերականն առանց հոլովելու ուրիշ կերպով չի կրնար ըլլաւ :

Պ. Կ'ըլլայ . «Եր յարաբերականն անփոփոխ պահելով , և պահանջուած հոլովին տեղ՝ նոյն հոլովով դերանուն մը խօսքին մէջ աւելցնելով , զոր օրինակ .

Քենէ խնդրողին՝ տուր Որ խնդրէ 'ի քէն տուր Կմ .  
փոխանակ ըսելու , Որուայ  
խնդրէ 'ի քէն տուր

Քենէ փոխ առնել ուղողէն Որ կամիցի փոխ առնուլ 'ի  
երեսդ մի դարձուներ քէն՝ մի դարձուցանէր 'է  
ՆՏԱՆԿ զերեսս . փոխանակ՝  
յուրմէ կամիցի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուց  
աներ զերեսս

Ասիկա լսողներուն երկու Որ լսիցենն զայս՝ հնչեացեն  
ականջները պիտի խօսին երկոքին ականջք նացա ,  
փոխ . «Երաց լսիցենն զայս  
հնչեացեն երկոքին ականջք

Խօսիլ ուղողները կ'արգելէր Որ խօսիլն կամէին՝ արգելոյր , վայր վայր , փոխ . Վրա խօսելն կամէին՝ արգելոյր

Հ. Յարաբերականով դիմաւոր բայը միշտ յարաբերեալէն ետքը կը դրուի :

Պ. Յարաբերականով դիմաւոր բայը երբեմն իբրև  
ածական , տվյալ հարարի պէս , յարաբերեալէն առաջ  
կը դրուի , զոր օրինակ .

Ներսն եղող մարդիկը Որ 'ի ներւու ելն արքն . փոխ .  
Արքն որ 'ի ներւու ելն

Զիս ղըկող հայրը

Որ առաւետն զիս Հայր . փոխ .

Հայրն որ առաւետն զիս

Աղէկ վերակացութիւն ը- Որ բարեսու վերակացու լինին ե-  
նող երէցները

րիցունք . փոխ . նրիցունք  
որ , և այլն

#### 46. Հրահանգ

(\*) Եղբայրդ սպաննող մարդն հոս է . Քեզի հետ  
խօսող կինը տեսայ . Անոնց ըսած խօսքը չհասկցան .  
Քաղաքը խուզվող մարդիկը դիտէք . Հոս եկող մար-  
դիկն ուր են . Հօրս դրկած զիրքը կարդացիք . Քու  
պատմածներուդ տեղեակ չենք . Ինծի մատուցած ծա-  
ղիկներդ գեղեցիկ են . Այդ ծառերուն հասուցած պը-  
տուղները շատ բաղցը են . Անցած ժամանակն՝ այլ  
եւս չի դառնար . Անոր խորհուրդները գիտցող մը չը  
կայ . Զեզ ճանչցողները շատ են . Մարդիկը որոնցմէ  
այդ ընծաներն ընդունեցաք՝ մեր բարեկամներն են .  
Ո՞ւսի լսեցիր բոլոր այդ զրածներդ . Քու շինած  
գիրքերէդ շատերը կարդացի . Ծովը խղդուող տղաքն  
ազնուականաց որդիք էին . Նամակը բերող պատանին  
թագաւորին սպասաւորներէն մէկն է . Այդ զինուոր-  
ներուն պսակուած զափնիները մեծ յաղթութեան նը-  
շան են . Տուած հրամաններդ կատարեցի . Սպան-  
նուած մարդիկն անմեղ էին . Գիշերն երեւցող աստ-  
ղերէն ոմանք անշարժ են , ոմանք ալ քալող . Մեր  
տեսած մարդն հօս է . Զեր ընդունած ընծաները տե-  
սայ . Գրած գիրքդ շատ ընտիր է . Դրկած սպասաւորն  
ինծի եկաւ . Այս գիշեր պատահած հրդեհին տեղեակ  
չես . Եթէ տուած գէշ լուրդ ճշմարիտ է , իրաւ պէտք

(\*) Այս դասին մէջ ըսուածներն աղէկ հառկնալէն եռքը , աշ-  
կեռք գրաբարի գալձանեն նշանակեալ հրահանգները .

է տրտմիլ . եթէ ըսած խօսքերս արդար են , ինչու կը  
բարկանաս :

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| Հոս , ասո , այս          | Խղդուիլ , հեղիշնում      |
| Հասկնալ , իմանալ         | Նամակ , նուզն            |
| Գիտնալ , ճանալիլ         | Անմեղ , անպարտ           |
| Դրկել , առագել           | Ոմանք , ամագ , կես , այլ |
| Կարդալ , ընթեռնուլ       | Քալող , էնայուն          |
| Մը չկայ , վէտ ու         | Գէշ լուր , գոյծ          |
| Շինել ( զիբք ) , յօրինել | Իրաւ , արդարեւ           |

### ԼՈՒՇՄԱՆ ԿԱՆՈՆ

Հ. Խօսք մը միշտ մէկ նախադասութենէ կը բաղկանայ :

Պ. Խօսք մը կրնայ երկու կամ աւելի նախադասութենէ բաղկանալ , զոր օրինակ սա խօսքը , Ասո և այն որ աղան վշիշայք ու . Հոս է մարդը որ քու եղբայրդ մպաննեց , երկու նախադասութենէ կը բաղկանայ . Ասո և այն մէկ նախադասութիւն , որ աղան վշիշայք ու երկրորդ նախադասութիւն :

Հ. Այս երկու նախադասութիւններն բնչպէս կը կոչուին :

Պ. Առաջին նախադասութիւնը կը կոչուի էլեասոր նախադասութիւն . երկրորդը որ գլխաւոր նախադասութենէն կախում ունի՝ կը կոչուի միջնիւուլ նախադասութիւն :

Հ. Նախադասութեան միջնիւուլ ըլլալն բնչպէս կը հասկցուի :

Պ. Միջանկեալ նախադասութիւնը միշտ յարաբերականով կամ շաղկապով կը սկսի :

Հ. Խօսքի մը մէջ քանի նախադասութիւն ըլլալն բնչպէս կ'իմացուի :

Պ. Խօսքի մը մէջ որչափ դիմաւոր կայ , այնչափ նախադասութիւն կայ :

## Ա Թ Ի Ւ Ա Կ Մ

Ասոր է այբն որ սպան զվեխայր տո . Հոս է մարդը որ քու եղբայրդ սպաննեց : Այս խօսքը կը բաղկանայ երկու նախադասութիւնէ , քանզի երկու դիմաւոր բայ կայ : Ասոր է այբն , նախադասութիւն էլիսոր : Է , բյ . չէզ . սհմ . ներկ . Գ . դէմք . հոս կը նշանակէ , և չգնասէ , ներկայ է : Ո՞վ է . — Այբն . այբ՝ գոյ . ան . եզ . ուղղ . տէր բային է ին . և յօդ է : Այրն է ( կը գտնուի , ներկայ է ) նոր . — Ասոր , հոս . տոտ՝ մակբայ է ին :

Որ սպան զվեխայր տո , որ քու եղբայրդ սպաննեց , նախադասութիւն միջանկետլ : Սպան , բյ . ներդ . սհմ . կատ . եզ . Գ . դէմք . սպաննեմ էն : Ո՞վ սպան . — Որ . որ յարաբ . գեր . եզ . ուղ . կը յարաբերէ այբ ը , տէր բային է սպան ին . Որ ( այրն ) սպան զհվ . — Զեզեխայր տո . վլդէայբ՝ գոյ . անկ . եզ . հյց . սեռի խնդիր սպան ին . տո , ստացական ած . եղբայր ին :

## 47. Հրահանգ

Ասիկա ընողը ձեր բարեկամն է . Զիս տեսնողը հոս է . Քեզ մատնողը քու որդիդ է . Մեզի հետ խօսողները վկայեցին . Տեսնողներն ու լսողներն երանելի են . Զգործողը թող չուտէ . Ուտողները հինգ հոգի էին . Կարդացողը թող հասկնայ . Զիս վրկողն ինծի պատուէր տուաւ . Աս զիրքը զրողները ձեզ կը ճանչնան . Հոն եղողները զարմացան . Մանողներն ու ելլողները կը տեսնէին . Զգործողները պէտք է պատուհասել . Հոն գտնուողները բոնեցինք . Հետը խօսածս ձեր քոյրն է . Այդ տեսածդ իմ եղբայրս է . Քենէ խնդրողին տուր . Աս ընողը տեսայ . Բոնածնին սուրէ անցուցին . ինծի տուածդ քեզի տամ . Լսածնիս քեզի պատմենք . Գրածը կարդացի . Ղրկածդ ընդունեցայ . Հսածդ ճշմարիտ է . Զեր ըստածներէն բան մը չեմ զի-

տեր . Պարծենցածդ սուտ է . Ընելիքդ շուտով ըրէ .  
Այս խնդրածն ինձի տուր . Այդ զրկածդ ընդունեցայ .  
Ինձի տուածներէդ բան մը չկորսնցուցի . Թու կասկա-  
ծածդ գիտեմ . Մեր վախցածներէն բան մը չպատա-  
հեցաւ . Առածդ իմս է . Կորսուածներն ինչ էին :  
Ընել , առնել Սուրէ . անցունել , ընդ սուր  
Հասկնալ , է մոր առնուլ հանել  
Բոնել , սունի՛ Շուտով . վաղաղովէ  
Բան մը չ . . . . . ու ինչ Վախնալ , երկնչի՛ , վահերէ

### Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

Որ արաբն զայս՝ բարեկամ յեր է . Ասիկա ընողը ձեր  
բարեկամն է . Այս խօսքը կը բաղկանայ երկու նախա-  
դասութենէ , քանզի երկու դիմաւոր բայ կայ : Բարե-  
կամ յեր է , նախադասութիւն դիմաւոր : Է , էակ . բայ .  
սհմ . ներկ . եղ . Գ . դէմք : Ո՞վ է . — Նա . նա էակ . դեր .  
եղ . Գ . դէմք . տէր բայի է ին , զօրութեամք կ'իմացուի :  
Նա է , ինչ . — Բարեկամ յեր . բարեկամ՝ դոյ . ան . եղ .  
ուղ . ստորոգելի է ին . յեր՝ ստաց . ած . բարեկամ ին :

Որ արան զայս , նախադասութիւն միջանկեալ : Արար ,  
բայ . ներդ . սհմ . կատ . եղ . Գ . դէմք . առնեմ ( ընեմ )  
զարտուղի բայէն . Ն դիմ . յօդ . զօրութեամք իմացուած  
Ն յարաբերեալին տեղ դրուած է : — Ո՞վ արար . —  
Որ , ո՞յ յարաբ . դեր . կը յարաբերէ զօրութեամք իմաց-  
ուած նան : Որ ( նա ) արար զինչ . — Զայս . զայս՝ ցուց .  
դեր . եղ . հյօ . սեռի խնդիր որա՞ր ին :

### ԴԱՍ ԷՒ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ . ՏԵՐ ԲԱՑԻ

Հ . Լծորդութեանց օրինակներուն մէջ մինչեւ հիմա  
ցուցուած ժամանակներէն ուրիշ ժամանակներ կան :

Պ. Մինչեւ հիմա ցուցուած ժամանակներն են՝  
Նվազան, անխորարը, կտորաբեռը, աղաւնին, հրամայականն ու  
սպորտատականը։ Ասոնք զբության ժամանակները են։ Կան  
նաեւ բազութեալ ժամանակները, որ կը կազմուին էմ  
էական բային ներկային, անխորարին և սպորտատականին,  
և որ և իցէ բայի մը անշեռլ և աղաւնի բերբային։ զոր  
օրինակ։

1. Յարակատար

Սիրեալ եմ, սիրեալ ես, ևն. Սէրած եմ, սէրած ես, ևն.

2. Գերակատար

Սիրեալ էի, սիրեալ էիր, ևն. Սէրած էի, սէրած էիր, ևն.

3. Ստորադասական անցեալ

Սիրեալ իցեմ, սիրեալ իցես. եւլն. Սէրած եմ, կամ սէ-  
րած ըւլս, և այլն։

4. Ապառնի ներկայ

Սիրելոց եմ, սիրելոց ես, եւլն. Պէտք սէրեմ, և այլն։

5. Ապառնի անկատար

Սիրելոց էի, սիրելոց էիր, եւն. Պէտք սէրէի, և այլն։

6. Ապառնի ստորադասական

Սիրելոց իցեմ, սիրելոց իցես, եւլն. Պէտք սէրեմ, ևլն։

ՏԵՐ ԲԱՑԻ

Հ. Հայերէն տէր բային միշտ ուղղական հոլովէ։

Պ. Երկու դէպքի մէջ տէր բային կրնայ սեռական  
դրուիլ։

Ա. Երբ և շաղկապով կապուած երկու բայ մի և  
նոյն տէր բային ունին, առջի բայը կրնայ ընդունե-  
լութիւն անցեալի փոխուիլ, և շաղկապն ալ զանց  
առնուիլ։ և ան ատեն տէր բային կրնայ սեռական  
դրուիլ։ Զոր օրինակ՝ սա խօսքը։ Լուսա նա զայս և  
գնիւցաւ։ Անիկա լսեց ասիկա և գնաց, կրնայ այս-  
պէս ալ բացատրուիլ։ Լուսեալ նորա զայս՝ մեկնեցաւ։

և աշխարհաբարի կը դառնայ այսպէս . Անիկա այս  
լսելով գնաց :

Բ. Յարակատարին , Գերակատարին և Ստորադա-  
սական անցեալին ( տես վերը ) եղակի երրորդ դէմքը  
շատ անգամ , թէ եղակի և թէ յոքնակի ամէն դէմքի  
տեղ կը գործածուի , և ան ատեն բուն բային տէր  
բային , թէ գերանուն ըլլայ և թէ գոյական , սեռա-  
կան կը դրուի , Զոր օրինակ՝ Տեսելէմ զնո խօսքին մէջ՝  
պետալ էմ առաջին դէմքը կրնանք երրորդ դէմքի փո-  
խել , Տեսետալ է . և տէր բային որ է՝ և , սեռականի  
փոխելով ըսել . Տեսետալ է էմ զնո :

Այսպէս միւս դէմքերն ալ .

|                                                 |                                                                                     |
|-------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------|
| Ես զանի տեսած եմ                                | { Տեսել եմ ես զնո կամ<br>Տեսել ե իմ զնո                                             |
| Դուն զանի տեսած ես                              | { Տեսել ես դու զնո . կամ<br>Տեսել ե դու զնո                                         |
| Ան , կամ , եղբայրս զանի<br>տեսած է              | { Տեսել ե նո կամ եղբայր էմ<br>զնո , և կամ Տեսել ե<br>նորո կամ եղբօր էմոյ զնո        |
| Մենք զանի տեսած ենք                             | { Տեսել են մետ զնո , կամ<br>Տեսել ե մեր զնո                                         |
| Դուք զանի տեսած էք                              | { Տեսել էտ դուստ զնո , կամ<br>Տեսել ե յեր զնո                                       |
| Անոնք , կամ , մեր եղբայր-<br>ները զանի տեսած են | { Տեսել են նոտ կամ եղբարտ<br>մեր զնո , և կամ Տեսել<br>ե նոց կամ եղբարտ մերոց<br>զնո |

Հ. Տէր բային տրական ալ կրնայ դրուիլ :

Պ. Երբ երկու նախադասութիւն զէ , նէ շաղկապով  
կապուած են , այն շաղկապները կը թողուին , երկ-  
րորդ բայն ալ աներեւութի կը փոխուի , և ան ատեն

տէր բային տրական կը դրուի . ինչպէս . Ու է-մէտ զէ ն-տառ-ը ե-ցէ նա ի վերայ մեր . Զենք ուղեր որ անիկա մեր վրայ թագաւորէ . այս խօսքը կրնայ բացատրուիլ այսպէս . Ոչ կամիմք ն-տառ-ը ե-ւ ի վերայ մեր :

#### 48. Հրահանգ

Զինուորներն անոր վրայ հասնելով կապեցին զանի . Անիկա լեռը ելլելով նստաւ . Անոնք իմ խօսքերս պատգամաւորին պատմելով նորէն ինձի եկան . Զանի լերան ծայրը բերելով վար նետել կ'ուղէին . Օտարական մարդը ներս խօթելով դուռը գոցեցին . Յելուզակները լեռնէն իջնելով դաշտին մէջ բնակեցան . Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով գերեզմանին վրայ կը նստէր . Կնիկները շուտով պարտեզէն ելլելով դեղն ապաւինելու կը փութային . Քու եղբայրդ մօտենալով անոնց հետ խօսեցաւ . Մատնիչը տեսնելով ասիկա՝ զղաց . Անոնք ստակն առնելով սպասաւորներուն տուին . Մառաները մօտենալով անոր երկրպագութիւն կ'ընէին . Անիկա առ ըսելով քնացաւ . Իր զլուխը ծուելով հոգին աւանդեց . Անոր ձեռքէն բռնելով դուրս հանեց . Ոստիկանները ներս մտնելով զանի կը փնտուին . Մեսրովպ քունէն արթննալով մեր նշանագիրներն ստեղծեց . Անիկա քաղքէն ելլելով մեզի եկաւ . Յովսէփ իր եղբայրները տեսնելով՝ զանոնք ճանչցաւ . Անոր զլուխը կտրելով թագաւորին բերին . Իմ ձեռքէս բռնելով ներս տարաւ . Ադամ անոր քալելուն ձայնը լսելով պահուըտեցաւ . Մայրը որդւոյն մահուան լուրը լսելով սկսաւ լալ . Իր անկողինը մտնելով կը քնանար . Զեր եղբայրները կանչելով դրկեցի . Զինուորները գալով մեզ բռնել կ'ուղէին . Սոզոմոն իր հօրը թագաւորութեան աթոռն ելլելով՝ բոլոր ազգերն իւրեն հնազանդեցուց . Մառաներն անոր մօտենալով

կ'աղաւէին . Զանիկա մէկդի առնելով հետը կը խօսէր . Մեղ թողլով իրենց տուները գացին . Աթոռ նըստելով ժողովուրդը կը դատէր . Մենք շատ օր հոն կենալով անօր դալուն կը սպասէինք . Պատուհանէն անցնելով ներս մտաւ զանիկա տեսնելու . Տաճարին առջիւը կենալով ձեր եղբօրը հետ կը խօսէի . Կրակ վառելով նստան , ու կը տաքնային :

|                                       |                                                          |
|---------------------------------------|----------------------------------------------------------|
| Նորէն , անդրէն                        | Մռել (գլուխար) , իսկարհեցու-<br>ծայը (լերան . ուչուրում) |
| արդեւան                               | շանել                                                    |
| Բերել , ածել                          | Բռնել (ձեռքէն) , անել<br>( զյեւանէ )                     |
| Վար նետել , ընկնառէլ է վայր           | Կտրել , հադանել                                          |
| Խոթել , մուծանել                      | Քալել , բնալ                                             |
| Գոցել , փակել                         | Լուր (մահուան) , բօլ                                     |
| Շուտով , վազվալսկի                    | Անկողին , մահժա                                          |
| Ապաւինիլ (տեղ մը) , ան-<br>կանելի     | Մէկդի , մէկուոչ                                          |
| Մօտենալ , մարչել                      | Պատուհանէն , ընդ ողափուհանն                              |
| Երկրապատկիւն ընել , եր-<br>կեղադասնել | Կրակ վառել , իսրոյէ արկանել<br>Տաքնամ , զեւանաւ          |

#### 49. Հրահանգ

Դուք անոնց համար լսած էք . Զանի շատ անդամ տեսած եմ . Անոնք մեր նամակները կարդացած էին . Կարդացած չէք . Մենք անանկ բան մը կարդացած չենք . Անոր վրայով շատ բան լսած եմ . Անիկա շատ չարիք դործած էք . Մենք ասիկա թաղաւորէն պարգևեւ առած ենք . Եթէ թագաւորին հաւատարիմ եղած ըլլայիք . Իմ առջի վարմունքս լսած էք . Անիկա ճամբուն տեղեկացած էք . Ոչ կերած ոչ ալ իւրամած ենք . Եթէ մենք անօր պատուիրանքները պահած ըլլայինք . Անոնք գերութենէն նոր դարձած էին . Կո-

շիկներ հագած էին . Զեմթողուր որ դուն ասկէ անցնիս . Թագաւորին հրամանն այս է , որ դուք շուտով այս քաղքէն երթաք . Կը պատմուի թէ անոնք դաշտ մը հասան և հոն քաղաք մը շինեցին . Պատուիրեցի որ սպասաւորները հոս գան . Կ'աղաչէին որ անձամբ կռուին մէջ չմտնէ . Կ'ըսեն թէ դուն կայսեր թշնամի ես . Կը փափաքին որ իրենց զօրավար ըլլաս :

Անանկ բան մը , այնպէսէ նոր , այն ինչ  
ինչ Կօչիկ (չիզմէ) , ճոյէ  
Հաւատարիմ թագաւորին , Ասկէ , ասոք  
հաւատարիմ առ նախաւորն երթալ (տեղէ մը) , մէկնէր  
Վարմունք , ճնացտ Պատուիրեմ , պատուեր դա՞  
Ռւտել , ճաշէել

ԴԻՑ . Դիմաւոր բայ մը անցեալի կամ աներեւոյթի փոխել և տէք բային սեռական կամ տրական դնել՝ հայկաբանութիւն , այսինքն՝ հայերէնին մասնաւոր մէկ յատկութիւնն է : Այս կերպով փոխուած կամ ամփոփուած խօսք մը լուծելու ատեն , աշակերտք դիւրութեան համար կրնան խօսքը հասարակ կերպի դարձունել , և ապա լուծել : Զոր օրինակ՝ հետեւեալ խօսքերը

Հասեալ զէնուորացն է վերայ նորա՝ կաղեցին զնա . Լուեալ է յեր վառ նոյս . Զորամ նոյլ անցնել յեղ ասոք .

Հասարակ կերպի կը դառնան այսպէս

Հասին շինուորտն է վերայ նորա և կաղեցին զնա . Լուեալ է + դուռ + վառ նոյս . Զորամ նոյլ զէ անցանցիւ + դուռ + ասոք .

Խօսքերն այսպէս պարզուելէն ետքը դիւրաւ կը լուծուին :

## ԴԱՍ ԼՀ.

ԴԻՄԱԿԱՐՈՐ ԲԱՑԵՐՆ ԱՆԴԵՄԻ ՓՈԽԵԼ

**Հ.** Խօսք մը կարճ և ազդու ընելու համար բնչ  
պէտք է ընել :

**Պ.** Խօսք մը կարճ և ազդու ընելու համար շատ  
անդամ անոր մէկ դիմաւոր բայն անդէմի , այսինքն  
անցեալի կամ աներեւոյթի կը փոխուի :

Այս տեսակ համառօտութեան կամ ամփոփման  
գլխաւորներն են .

**Լ.** Երբ երկու դիմաւոր բայ մի և նոյն տէր բա-  
յին ունին , առաջինը անցեալի կը փոխուի (Տես և  
Դաս ԼՀ) :

Եղբայրդ զիս տեսաւ և ՏԵ-Ե-Ա-Լ զիս Եղբօր + էոյեաց .  
կանչեց փոխ + Եղբայր + Եպես զիս  
և էոյեաց

Զանի առաւ և հետը տարաւ Ա-Ե-Ե-Ա-Լ զիս՝ պարա- ընդ է-ը .  
Աստուած Աղամն ստեղծեց Արարեալ Աստուածոյ դԱրամ՝ Ե-  
ու դրախտին մէջ դրաւ է Շ-Յ-Ի-Պ-Յ-Ն-  
կայէն Աբելին նախանձեւ Նախանչեալ կայէնչ ընդ Աբեւ՝  
ցաւ ու սպաննեց սպան զիս

**Զ.** Խօսքի մը Է-Ր-Լ , երբ , շազկապով կապուած  
մասին դիմաւոր բայն ալ այսպէս անցեալի կընայ  
փոխուիլ , եթէ բային ժամանակը կատարեալ է . զոր  
օրինակ .

Երբ ասիկա լսեց , ըսաւ Լ-Ա-Ե-Ա-Լ զայս՝ ասէ , փոխ . իբ-  
րեւ ըսաւ զայս , ասէ  
Երբ հոն հասանք , բանաը Հ-Ա-Ե-Ա-Լ մէր անդը՝ որիստ է  
դրուեցանք  
Երբ անիկա այս պատաս- Ն-Ր-Ա զայս պատասխանչ պանեալ ,

խանը տուաւ, դատաւու- դադաւուն է յայն մեծ սոկ-  
րը մեծ ձայնով ըստ ւ

Երբ թագաւորին առջեւը Յանդիման լվալ մեր նահաւու-  
ելանք, մեզի հարցուց բնի, եհարց ցմեղ

Աս խօսքերուն մէջ բայը կրնայ է նախդրիւ անե-  
րեւոյթ ալ դրուիլ. իսկ եթէ էնթւ ով սկսուած խօսքին  
բայը ներկայ կամ ապառնի է, է նախդրիւ աներե-  
ւոյթ դնել հարկ է, ինչպէս.

Երբ ասիկա կը լսէք, ըսէք ի լսել յեր զայս՝ ասազէտ, փոխ-  
իքը լսէտ զայս, ասացէտ

Երբ հոն հասնին, բանտը ի հասանել նոյս անդը՝ արէցին  
պիտի դրուին է բանդ

Երբ թագաւորին առջեւը ի լինել մեր յանդիման նահաւու-  
ելլենք, մեզի պիտի հար- բնի՝ հաշշանիցէ զմեղ  
ցընէ

3. Մինչու մինչեւ շաղկապով սկսուած խօսքի մը  
բայը նոյնպէս է նախդրիւ աներեւոյթի կրնայ փոխ-  
ուիլ. ինչպէս.

Անիկա առ խորհած ատե- Յանդել նորս զայս՝ զմբաւ՝ եկն  
նը՝ մարդ մը եկաւ այը մէ փոխ. Մինչդեւ նո-  
շայս ածէր զմբաւ, եկն այը մէ

Անոնք անտառէն անցած Յանցանել նոյս ընդ անդաւու-  
ատենը՝ աւազակներ ա- հասին է վերայ նոյս աւազակն  
նոնց վրայ հասան

Պատին տակը կեցած վեր ի կու նորս առ որմանը և հայել  
նայելու ատենը քար մը է վեր՝ վեմ մէ անկետ զակիզա-  
ինկաւ և գանկը ջարդեց իւր զոհուառակ նորս

4. Զի կամ ենէ, նէ շաղկապով սկսուած խօսքի մը  
դիմաւոր բայը շատ անդամ է, առ ի, առ նախադրու-  
թիւններով կամ ամենեւին առանց նախադրութեան  
աներեւոյթի կը փոխուի : (Տես և Դաս Լէ ) :

Զուր բերին որ անոնց ոտ- Բերին ջուր լուսանալ շոյս նոս  
ուըները լուան ցա . փոխ . Բերին ջուր չէ  
լուսացեն զոյս նոյս

Խրիկուան դէմ կ'ելլէինք Ելսնէս+ ընդ Երեկո դիօնուալ է  
որ դաշտին մէջ զբօս- դաշտին  
նունք

Գժուարաւ համողեցին ժուհաշէ- ի՞ն հաւանեցացին զիս-  
զովուրդը որ չզարնեն զոյս-ըդն հաւրիանել զիս  
անոր

Զիերուն բերանը սանձ կը Զիսց սանյս է թերան դնեմտ առ  
դնենք որ մեղի հնա- անալոյ նոյս մեց  
զանդին

Ոչ աչք ունին որ տեսնեն , Ոչ աչք գոյն նոյս է պեսանել,  
ոչ ականջ ունին որ լր- ոչ ականջ+ է լըել , ոչ սանդ+  
սեն , ոչ քիթ որ օդ առ- ս- է յիւլոյ զոդ , և ոչ մա-  
նեն , և մատուըներ որ գուն+ յեւաց ս- է շօշափե-  
շօշափեն  
Լոյ

Պատասխան տուին թէ չեն Պատասխանէ երուան չէիրել .  
գիտեր փոխ . Պատասխանէ երուան  
նէ ոչ չիդեն

Անոնք կը սպասէին թէ նոտա աին սանէն այդուլոյ նմա  
պիտի ուուի կամ իյնայ իստ անկանելոյ և յանկործուիէ  
ույանկարծ պիտի մեռնի մեռանելոյ

Մէկը պատուհանը չբա- Ոչ ս+ երաց զոյսարսանն հա-  
ցաւ որ դուրս նայի յել արդադ+  
Անոր պատուիրեցի որ այն Պատուիր երուան նմա չհանել ս-  
խօսքը մէկուն չյայտնէ մ+ զնանն է վեր

5. Որպէս զէ կամ այնուէս զէ շաղկապով սկսուած  
խօսքի մը դիմաւոր բայը մէնշեւ , մին զէ շաղկապով ա-  
ներեւոյթի կը փոխուի . ինչպէս .

Շատ յոզնած էինք, այն- Վաստակեալ եաւ յոյժ՝ միշտ-  
պէս որ չէինք կրնար նարել մշշառու. վորխ.  
ոտքի վրայ կենալ. Վաստակեալ եաւ յոյժ, ու-  
ուն չէ (այնուն չէ) ու  
իորեաւ հալյուր

Ամենքն ալ ջարդենք, այն- Աստակեացուտ շամենեալն՝ մին-  
պէս որ անոնցմէ մէկը նւ- շնոր է նոցոնէ ող-  
չազատի. բեալ:

## 50. Հրահանգ

Դահիճ դրկեց ու գլուխը կտրել տուաւ. Տուն  
եկաւ ու եղածները մեզի պատմեց. Մեզ հոն թող  
տուին ու դացին. Զանոնք իր տունն ընդունեց ու  
անոնց կերակուր տուաւ. Բոլոր ստացուածները ծա-  
խեց ու հեռու երկիր գնաց. Երբ անոնց հարցուցինք,  
մեզի պատասխան տալ չուզեցին. Երբ զանի կը գըտ-  
նէք, մեզի իրացուցէք. Երբ հոն հասանք, զանի  
հոն չգտանք. Երբ ձեր երկիրը դառնաք, զիս ալ ձեր  
հետը տարէք. Երբ անձրեւները կը տեղան, գետը կը  
յորդէ. Երբ լսեցինք ասիկա, զարմացանք. Մենք քա-  
ղաքը պտտած ատեն՝ մեզի առաջնորդող մարդը մեր  
հետը չէր. Մենք ներսը եղած ատեն՝ դրան առջեւը  
պահապաններ կը կենային. Անոր այսպէս սաստկու-  
թեամբ խօսած ատեն՝ պատգամաւորը զարմացմամբ  
անոր կը նայէր. Անիկա շուտով յառաջ կուգայ և ձեռ-  
քը կ'երկնցնէ ինծի. Մենք անկէ հեռանալու աշխա-  
տած ատեն, սաստիկ հով մը մեր նաւը նաւահան-  
գիստը մղեց. Անիկա այս խօսքերն ըսած ատեն՝ յան-  
կարծ մեր աչուըները բացուեցան. Զեզի կը հրամա-  
յեմ որ ասկէ երթաք. Անոր խրատ տուի որ հոն չկե-  
նայ. Աւելի կ'ուզէին որ մեռնին քան թէ քաղաքը

մտնեն . Կը բաղձայինք որ առտու ըլլար . Կ'ըսէին թէ  
որոտում կ'ըլլայ . Զէին ուզեր որ իրենց հետ բնակէր .  
Եղրօրդ ըսէ որ պարտքը վճարէ . Թանձր մշուշ կար ,  
այնպէս որ իրար չէին տեսներ . Շատ հեռացան , այն-  
պէս որ ալ չէին տեսնուեր . Մովին մէջ մեծ շարժում  
եղաւ , այնպէս որ նաւն ալիքներէն կը ծածկուէր .  
Զանի անխնայ ծեծեցին , այնպէս որ շունչը չմնաց .  
Շատերը կուգային անոնց , այնպէս որ հաց ուտելու  
անգամ չէին հասներ . Հիւընտցաւ ու բժիշկ կանչեց .  
Մեղ այն մարդուն յանձնեց ու գնաց . Երբ կերակու-  
րը կերաւ , զօրացաւ ու հաստատեցաւ . Երբ տեսան  
որ զանի չէին կրնար նուաճել , նենդութեամբ բռնել  
խորհեցան . Անոնք իրարու հետ կոռուած ատեն՝ ուրիշ  
մը ձին առաւ գնաց . Մանանխոյ հատը երբ կը մեծ-  
նայ , ծառ կ'ըլլայ , այնպէս որ երկնից թռչունները  
կուդան ու անոր ճիւղերուն վրայ կը հանգչին :

Հեռու երկիր , դար աշխարհ Ալ չտեսնուիլ , ըստ ախ ան-  
իմացունել , աղբ առնել իտնել  
Յառաջ գալ . Տարչել յառաջ Հասնիլ , Ճամանել  
Երկնցնել ( ձեռքը ) , Յեւլ կերակուր ուտել , առնուլ  
Աշխատիլ , Զանուլ կերպիր  
Աւելի ուղել , Ըստըել մանաւ Հաստատուիմ , իտրուրէմ  
առնդ Նենդութեամբ , Նենդու-  
Բաղձալ , Ըստանալ

ԴԻՏ. Ա. Համառօտեալ կամ ամփոփեալ խօսք մը  
լուծելու ատեն՝ կրնան աշակերտը ամփոփեալ մասը  
բնական բացատրութեան ձեւին դարձունել , և այն-  
պէս լուծել : Չոր օրինակ , սա խօսքը՝ Ստակեսյուտ շա-  
մենեսին՝ մինչեւ շնորհ է նոցանե աղբետ , կրնայ այսպէս  
պարզուիլ . Ստակեսյուտ զամենեսին , այնպէս չէ ոչ մասցէ  
է նոցանե աղբետ . այսպէս պարզուելէն ետքը՝ ամփոփ-

եալ մասն աւելի դիւրաւ կը լուծուի : Տես և լի . Դասին վերջին դիտողութիւնը :

Դիմ. Բ. Խօսք մը ամփոփելու ատեն պէտք է նայիւ որ երկդիմութիւն չծագի : Միշտ այն ձեւն ընտրելի է որ հոմ կամ երկդիմի իմաստ չի տար :

## ԴԱՍ ՀԹԻ.

ԱՐՄԱՏ ԵՒ ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ

Հ. Ո՞ր բառերն արժադ են :

Պ. Արժադ են այն բառերը որոնց սկիզբը կամ վերջը դիր կամ վանկ աւելցուած չէ . ասին , նաէ , ձով , հայր , ծեղ , ման , արմատ բառեր են :

Հ. Ո՞ր բառերն ածանցեալ են :

Պ. Ածանցեալ են այն բառերը որոնց սկիզբը կամ վերջը դիր կամ վանկ մը աւելցուած է . ոսկեղին , թագառոր , ծովական , հայրենի , դգեղ , անմահ , ածանցեալ բառեր են :

Հ. Ածանցեալ բառերուն վրայ աւելցուած գիրը կամ վանկն ինչ կ'ըսուի :

Պ. Ածանցեալ բառերուն վրայ աւելցուած գիրը կամ վանկը ածանցական ճանին կ'ըսուի , ուստի վերի բառերուն մէջ եղին , առար , ական , էնի , դ , ան , ածանցական մասնիկներ են :

Հ. Հայերէն ածանցական մասնիկներուն գլխաւորներն որհնք են :

Պ. Հայերէն ածանցական մասնիկներուն գլխաւորներն են .

1. Ական , ային , որ վերաբերանինէն կը ցուցնեն , ինչպէս՝ քաղաքական , քաղքի վերաբերեալ . ծովային , ծովու վերաբերեալ :

2. Առոք կամ առոք , որ ունեցու , քըն իբու կը նը-

շանակէ , ինչպէս՝ թագուար զինուար . թագ , զէնք կրող :

3. Առեւ , որ առատութիւն կը ցուցնէ . ինչպէս՝ ծաղկաւեւ :

4. Առ , որ մարմնոյ մէկ անդամին կամ մասին կորած ըլլալը կը ցուցնէ , ինչպէս՝ լեզուար . լեզուն կորած :

5. Եղին , որ բանի մը ինչ նէ-նէ ըլլալը կը ցուցնէ , զոր օրինակ , ոսկեղին , հողեղին :

6. Եայ , որ բանուած կամ չինուած կը ցուցնէ , ինչպէս ծաղկեայ , ծաղիկներով բանուած կամ չինուած : Կը ցուցնէ նաեւ բանի մը որչափ ժամանակուան ըլլալը . ինչպէս՝ երեքօրեայ , հնդամեայ :

7. Եան , որ կը ցուցնէ սերուադ կամ ծախում , ինչպէս՝ աբրահամեան , պղատոնեան : Կը նշանակէ նաեւ բաղկացեալ , զորօրինակ՝ երեքդիխեան , իննանկնեան , երեք գլխէ , ինն ակունքէ բաղկացեալ :

8. Եւ , որ կը ցուցնէ +անոկունիւան , ինչպէս՝ ընչեզ , ինչքը , ստացուածքը շառ :

9. Ենէ , որ ծուա , ճորի և ծու կը ցուցնէ , ինչպէս՝ խնձորենէ , խնձորի ծառ , առիւծենէ , առիւծի մօրթ , խողենէ , խողի միս : Ծառերու անունները երբեմն է գրով ալ կ'ածանցուին , ինչպէս՝ սերկեւիլ , սերկեւլք . կաղին , կաղնէ : Ենէ , անէ , է մասնիկներն ուրիշ անուններու ալ վերջը կցուելով , անոնց այլեւայլ նշանակութիւններ կուտան . ինչպէս՝ արծաթէ , արծաթեղէն . ջրէ , ջրոտ . այրէ , այրէ զուրկ :

10. Իէ , կամ աէ . որ նուազիան մասնիկներ են . ինչպէս խցին , գետակ , փոքրիկ խուց , փոքր գետ :

11. Ուն , որ ող մասնկան զօրութիւնն ունի , ինչպէս՝ շարժուն , շարժող :

12. Ուար , որ յաճախունիւան կը ցուցնէ , ինչպէս՝ քարուար :

13. Որ , որ սահմանական կամ ոչոր կը ցուցնէ , ինչպէս՝ երկշոր , բորո :

14. Որդ , որ արհեստ կը ցուցնէ . թուրքերէն ճէ մասնկան կը պատասխանէ , ինչպէս՝ որո՞րդ , ավճը :

15. Ոց , առաջ կամ ուռան , որ կը ցուցնեն ընդունաբան , ինչպէս՝ դպրոց , որբանոց , գործութան , դպիրներու , որբերու , գործի տեղ :

16. Ցէ , որ հայրենի+ կամ եւկէր կը ցուցնէ . ինչպէս ասիացի :

17. Ցո՞ , որ դաշտնի կամ վիճակի մը յատկացեալ կը նշանակէ , ինչպէս՝ քահանայացո՞ :

18. Ան , առ , ու , ու , ու , որ բառերու սկիզբը դրուելով բոցանական կը ցուցնեն , ինչպէս՝ անմիտ , ողերախտ , ոգէտ , ուգուհ , ոգոյ :

### 51. Հրահանգ

(1) Աղնիւ , բարք , եկեղեցի , երէց , էգ , լեառն , խուժ , ծով , կայսր , հովիւ , ձմեռն , մարմին , յաղթութիւն , չէն , պատիժ , սեպուհ , տրտում , քուրմ , օրէնք :

(2) Ատենական , արքունական , բնական , ընտանեկան , լուսնական , խորհրդական , կուսական , կուրստական , յունական , նուիրական , շնական , պատուական , պատմական , որբական , վանական , տնական , բննական :

(3) Աստղ , անտառ , գաղան , դաշտ , երկինք ,

(4) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցեալները շինեն ունենակամք :

(5) Աշակերտք նշանակեալ ածանցներուն արմատները գտնեն :

(6) Աշակերտք նշանակեալ բառերուն ածանցները շինեն ոյէ մասնկամք :

լեառն , ծով , հող , հուր , մաղճ , մարդիկ , նաւ , ջուր , տիղմ , տոհմ , տունկ , ցամաք , քաղաք , օդ :

### 52. Հրահանգ

(1) Ալիք , ահ , աղեղն , բուռն , գէս , գոյն , գոյք , գօտի , զէնք , զօրք ( զօրութիւն ) , թոյն , լոյս , խորհուրդ , կամք , հոգի , հովանի , մարմին , նշան , շահ , չափ , պատիւ , սուսեր , վտանգ , տտուն , փառք :

---

(2) Դրաւոր , դաշնաւոր , եղջերաւոր , թագաւոր , թեւաւոր , ճգնաւոր , մանեկաւոր , մտաւոր , պարզսպաւոր , պարտաւոր , սգաւոր , վիրաւոր , տիգաւոր :

---

(3) Այգի . գինի , երանութիւն , ինչք , խաշն , խոտ , ծաղիկ , միրգ , շահ , պտուղ , քըքսում :

---

(4) Աղդ , ականջ , գոյն , լեզու , ծայր , կառափն , ձեռն , մէջք , շուրթն , ունչ , պինչ :

### 53. Հրահանգ

(5) Ապակի , ասր , արծաթ , փոց , գարի , լոյս , խոտ , հող , հուր , ձիւն , մաղ ; միս , նիւթ , ողի , ուկի , պղինձ , ջուր , վէմ , տարր , փուշ , քար :

---

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցեալները շինեն մասնկամբ :

(2) Աշակերտք նշանակեալ ածանցներուն արմատները գտնեն :

(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցեալները շինեն մասնկամբ :

(4) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն մասնկամբ :

(5) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն եղիւ մասնկամբ :

(1) Աղամանդ , աղիւս , ասեղն , բեհէզզ , դմբէթ , եղէզն , ծաղիկ , կաշի , կուճ , ճախարակ , մազաղաթ , մաշկ , յախճապակի , նեարդ , պրտու , փղոսկր , փուշ :

---

(2) Աչ , ասր , գոյն , զօր . ( զօրութիւն ) , թիկն , ինչք , համ , հիւթ , մազ , մարմին , շուք , ոյշ , ուժ :

---

(3) Աղուէս , այծ , առիւծ , գայլ , գառն , կուզ , ոչխար , սամոյր : Դեղձ , ընկոյզ , թութ , թուզ , խըն-ձոր , ծիրան , կաղին , ձէթ , մուրտ , նուշ , նուռն , վարդ , տանձ : Խոզ :

Այր , ասր , արծաթ , բուռն , գալար , երկաթ , լեզու , լիրս , ծարաւ , կորով , հայր , ծար , մայր , մսեղ , մօրուք , յայտ , նախ , նման , նըթումն , պէտք , պղինձ , ջուր , վայր :

---

(4) Անասուն , գետ , գունդ , գուռն , զգեստ , լե-զու , լիճ , խուզ , խուց , ծով , հայր , հաց , ծուկն , ծորձ , մանուկ , մասն , նաւ , շուն , որդի , պատանի , պատանեակ , վայր , տուն , բաղաք :

---

(5) Արթնութիւն , գնալ , եռանդն , երերալ , զգաւ

---

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն և-ս մասնկամբ :

(2) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն և-ս մասնկամբ :

(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն և-ս կամ : մասնկամբ :

(4) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն և-ս մասնկեներով :

(5) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն և-ս մասնկամբ : Այս մասնկամբ ածանցներ մեծաւ մասամբ բայերէ կը շինուին :

զեղուլ, զեռալ, թռչիլ, իմանալ, կալ, կանգնել,  
հասանել, հաստատել, շարժել, սահել, սիրել, սո-  
ղալ, տոկալ, ցածնուլ, փայլել:

(1) Ապառաժ, աւազ, աւազակ, թաւ, ծարաւ,  
մացառ, յործանք, շամբ, ոսկը, ջիղ, վէմ, տիղմ,  
քար, օձ:

(2) Արիւն, բոր, դանդաղել, գեղ (դոյն), եռ-  
անդն, երկնչել, ժանդ, լուսին, խնամք, ծակ, կաս-  
կած, հիւանդ, մոռանալ, մուր, յաշաղել, նախան-  
ձել, նենդ, որքիւն, վաղվաղել, ցասնում, ցաւ,  
ցեխ, քոս:

(3) Այդի, անցանել, աջ, բաժանել, ժառանգել,  
լծել, լողալ, կցել, ճանապարհ, միջին, յետին, նախ,  
նախանձել, նաւել, որս, պահել, պարապ, սայլ,  
սեղան, ցանց, փոխանակել:

(4) Աղքատ, ամառն, ամուր, այրի, արդելուլ,  
արուեստ, գլուխ, գործ, դպիր, ծաղիկ, կանայք,  
կրակ, հալել, հանգիստ, հիւանդ, հիւր, հովանի,  
ձմեռն, մարտիկ, մեղու, մթերք, մրջիւն, որբ, ուս,  
վաճառք, վարել, վարդապետ, վարժել, օտար:

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն ու  
մասնկամբ :

(2) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն ու  
մասնկամբ :

(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն ու  
մասնկամբ : Այս մասնկամբ ածանցներ մեծաւ մասամբ բոյերե կը  
շինափն :

(4) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն ու,  
ուսց, ուսկ մասնիկներով :

### 54. Հրահանգ

(1) Ամօթ , առակ , բան , բարբառ , գեղ , գէտ ,  
գործ , գին , գոհ , գոյ , գոյն , երախտիք , երասան ,  
լուր , կար , համազգի , հարկ , մարդ , յայտ , յոյս ,  
շնորհ , ուշ , սուրբ , տոհմ , քուն , օրէնք :

### ԴԱՍ

ԲԱՐԴԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Հ. Ռոբ անունները Բորտ Կ'ըսուփին :

Պ. Բորտ Կ'ըսուփին երկու բառէ բաղադրեալ ա-  
նուններ , ինչպէս , Աստուածակը , զԱստուած սիրող ,  
ըստագու , լոյս տուղը : Առաջինը՝ Աստուած և «էր ,  
երկրորդը՝ լոյս և դու (տալ) բառերէն կը բաղկանան :

Հ. Բարդ անուն մը կազմող բառերն իրարու հետ  
ինչպէս կը կապուին :

Պ. Բարդ անուն մը կազմող բառերն իրարու հետ  
սովորաբար և գրով կը կապուին :

Հ. Երբ բարդ անունը երկու գոյականէ կը բաղ-  
կանայ , ընդհանրապէս այն գոյականներուն մին յատ-  
կացուցչի և միւր յատեացելոյ զօրութիւն ունի , և  
բարդութեան մէջ յատկացուցչի զօրութիւն ունեցող  
գոյականն առաջ կը գրուի : Այս տեսակ բարդ անուն-  
ներ ընդհանրապէս գոյական են :

Պ. Երբ բարդ անուն մը երկու գոյականէ կը բաղ-  
կանայ , ընդհանրապէս այն գոյականներուն մին յատ-  
կացուցչի և միւր յատեացելոյ զօրութիւն ունի , և  
բարդութեան մէջ յատկացուցչի զօրութիւն ունեցող  
գոյականն առաջ կը գրուի : Այս տեսակ բարդ անուն-  
ներ ընդհանրապէս գոյական են :

### 55. Հրահանգ

(\*) Զօրքի գլուկս . Դրան փակ (սէրէիւ) . Գաղանի

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն և ,  
ու , շ , տ , ժ , ւ , մասնիկներով .

(\*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը բարդ բառե-  
րու դարձնեն , յատկացուցիչը յատկացեալն առաջ դնելով .

( Հետ ) կռիւ . Գանձի գլուխ . Գետի եղբ . Շովի եղբ . Դիրքերու պահարան . Դայեկի ( « Ե-Պ-Ն » ) որդի . Դիւանի գլուխ . Դիւանի դրագիր . Բանակի տեղ . Եղեւինի փայտ . Աղբիւրի ակ . Լուսոյ մտնելու տեղ . Խաչի փայտ . Խունկի աման . Ծերոց խումբ . Հարսի եղբայր . Հողի բլուր , կոյտ . Ոտքի կապ . Զիւնի ծաղիկ . Զորի գաւառ . Ճաշու ժամ . Մաղձի դեղ . Մարդոց մահ . Մարդու արձան . Մաքսի տուն . Մեհենի տեղ . Մոխրի կոյտ . Նաւի խումբ . Քաղքի մէջտեղ . Սանդու ոտք . Վանքի երէց . Վարազի ջիղ . Որթի տունկ . Քաղաքի պատ :

Հ. Բարդ բառ մը միշտ գոյականներէ կը բաղկանայ :

Պ. Բարդ բառ մը կրնայ նաև գոյականէ մը և ածականէ մը բաղկանալ . ինչպէս մէծախանչ , որ մէծ ածականէն և էանչ գոյականէն բաղկացած է , և կը նշանակէ մէծ էանչ ունեցող կամ էանչը մէծ :

### 56. Հրահնանդ

(\*) Տունը մեծ . Զօրութիւնը մեծ . Զայնը մեծ . Թեւը երկայն . Պրկունքը լայն . Ոտքը կարճ . Զգեստը կարճ . Զուրը խորունկ . Վիզը բարձր . Զայնը բարձր . Մարդը ( բնակիչը ) շատ . Բարքը աղէկ . Հոտը գէշ . Համեն անոյշ . Դէմքը գեղեցիկ . Գեղեցկութիւնը հազուագիւտ . Ոտքը շուտ ( շուտ քալող ) . Միտքը երկու ( անհաստատ ) . Լեզուն թանձր . Բեռը ծանր . Քալուածքը թեթեւ . Հաւատքը թերի ( պակաս ) . Մորթը թոյլ ( հեշտասէր , փափկասէր ) . Սիրտը վատ ( վախկոտ ) . Բերանը լեցուն . Պարանոցը խիստ ( անհնա-

(\*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար իօնքերը բարդեն , ածականը գոյականէն առաջ դնելը :

զանդ, խեռ) . Սիրտը հիւանդ . Խորհուրդը լաւ . Այտերը կարմիր . Գլուխը ծռած (ամօթով) . Թելերը ոսկի . Պարիսպը կրկին . Պատիւը հաւասար . Բազուկները հաստատ . Կաշին հաստ . Զօրութիւնը հսկայական . Զուրը շատ . Հանդերձը մաշկ . Սիրտը նեղ . Փետուրը նոր . Զայնը բարակ . Պարիսպը ամուր . Անդամները ողջ (ամբողջ) . Միտքը պակաս . Նիստը (տարածութիւնը) քիչ . Աչքը սուր . Ականջը սուր . Անունը վատ . Զայնը քաղցր . Սիրտը քաջ . Սանձը ոսկի . Զեռքը պարապ . Միտքը թեթեւ . Հաւատքը շիտակ . Աչքը չար (նախանձոտ) . Բեռը թեթեւ . Մեղքը մեծ (շատ) . Մեղքը քիչ . Անունը մեծ . Միտքը մեծ (հպարտ) . Հասակը բարձր . Ականջը երկայն . Թեւը (խանատը) մաշկէ . Միտքը թանձր (ապուշ) . Սիրտը խիստ . Դէմքը երկու . Բերանը երկու . Մորթը լերկ . Միտքը երկայն (համբերող) . Զուրը յորդ . Մարմինը թանձր . Միտքը ցած (խոնարհ) . Լեզուն ծանը . Զուրը խորունկ :

## Դ Յ Ա Խ Ա .

ԲԱՑԱՆՈՒՆ, ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Հ. Ո՞ր բառերուն բայանուն կ'ըսուի :

Պ. Բայանուն կ'ըսուին այն անունները որ բարդ բառերու մէջ բայի զօրութիւն ունին . այսինքն՝ գործողութիւն մը կը ցուցնեն , զոր օրինակ՝ որդեսէր , հայրասողն , արեւակէր , բառերուն մէջ ուր , սղոն , կէղ , բայանուն են , այսինքն՝ սէրեմ , սղուունեմ , կէղում , բայերուն արմատներն են , և կը նշանակեն՝ ուրող , սղանող , ոյրած : Ուրուսէր . կը նշանակէ իր որդիւրը սիրող , հայրասողան կը նշանակէ հայրը սպաննող , ուրուսէր կը նշանակէ արեւէն այրած :

**Հ.** Բայանունէ և ուրիշ գոյականէ մը բարդուած բառերուն մէջ բայանունն ու գոյականը ինչ բանի զօրութիւն ունի :

**Պ.** Բայանունէ և ուրիշ գոյականէ մը բարդուած բառերուն մէջ բայանունը բայի զօրութիւն ունի, միւս գոյականն ալ սեռի կամ բնութեան խնդրոյ զօրութիւն ունի. զոր օրինակ՝ “բդեսէր”, հայբառդոն բառերուն մէջ, “եր”, “պան”, բայ են. սէրող, “պաննող” կը նշանակեն, “բդէ”, հայը գոյականները սեռի խնդրիք են սէր և սղան բայանուանց. արեւակէղ բառին մէջ ալ իւր բայ է, այբած կը նշանակէ, իսկ սէրու գոյականը բացառական հոլովի զօրութիւն ունի, և բնութեան խընդիր է կէղ բայանուան և կը նշանակէ արեւէն այրած :

**Հ.** Բայանունէ և գոյականէ մը բարդուած բառերուն մէջ, այս երկուքէն հրն առաջ կը դրուի :

**Պ.** Բայանունէ և գոյականէ մը բարդուած բառերուն մէջ ընդհանրապէս ինչէն առաջ կը դրուի, բայանունը՝ ետքը :

**Հ.** Այս տեսակ բարդեր գոյականն են թէ ածական :

**Պ.** Այս տեսակ բարդեր թէ իբր գոյական և թէ իբր ածական կը գործածուին :

### 57. Հրահանգ

(\*) Ածեմ, աղամ, ամամ, ամոքեմ, այբիմ, ապաստանիմ, ապրիմ, առաքեմ, առնում, ասեմ, ատեմ, արածեմ, արգելում, արկանեմ :

Քուն . պատիժ բերող ( տուող ) . Խունկ աղացող . Մլոյ ( ջաղացքի ) մէջ աղացող . Մովք թափուած . կերակուր ամոքող ( բարեխառնող ) . Անձկով ( կարօտով )

(\*) Աշակերտք այս և հետեւեալ հրահանդներուն բայանունները գտնեն, և ետքը գրուած աշխարհաբար խօսքերը ի-ւոր բառերու գործառնեն :

այրող . Կէս այրած . Իր անձին ազաւինող . Ինքզինք ազատող . Երկինքէն առաքուած . Փոխ , աւանդ , կաշու , պարգեւ , համար , վրէժ առնող . Երախտիք առնող ( ընդունող ) . Բարի , չար ( բան ) ըսող . Իր տէրն ատող . Ինչք ատող . Խաշինք ( հօտ ) արածող . Բանտի , պատի , բարերու մէջ արգելուած . Ահ արկանող ( ձգող ) . Խունկ արկանող ( ծխող ) :

---

Բառնամ , բարձրանամ , բեկանեմ , բերեմ , բըղխեմ . Բնակիմ , բտիմ . Գիտեմ , գնամ , գնեմ , գովիմ , գործեմ , գտանեմ , գրեմ :

Բեռ վերցնող . Կական ( լաց ) վերցնող ( բրցնող ) . Մինչեւ երկինք բարձրացած . Աչիւ բեկած ( վախէն լեղին բրդած ) . Ծանրութենէ բեկած ( կոտրած ) . Գաղաններէ բեկած ( պատառուած ) . Պտուզ , փուշ , անձրեւ , բուք ( թիփի ) բերող . Երկրէ բխած . Հուր , ջուր բխող . Գաղաններէ բնակուած . Անտառները բընակող . Խոտով , ընդով բտուող ( կերակրուող ) . Ծածուկ ( բաներ ) դիտցող . Իրը ( եղելութիւնը ) դիտցող . Միտերը զիտցող . Զեռքի ( գործ ) զիտցող . Ճամբայ գացող . Ծովով , նաւով գացող . Արծաթով գնուած . Մարդ գնող . Ինքզինք գովող . Այդի , երկիր , հող գործող ( մշակող ) . Նաւ , հաց , իւղ գործող ( շինող ) . Պղինձ գործող ( պղնձէ բաներ շինող ) . Զար , բարի , ժանտ ( գէշ ) , զազիր ( զզուելի բաներ ) , եղեռն , ոճիր գործող . Մազէ գործուած . Զեռքով գործուած . Հնարք գտնող . Մատեան ( դիրք ) գրող . Պատմութիւն գրող . Զեռքով գրուած .

### 58. Ξրահունգ

Դարմանեմ , գաւեմ , դիեմ , դրժեմ . Երդնում , եփեմ . Զանցանեմ , զարդարեմ , զգածնում , զգենում .

Ընկենում, ընտրեմ. Թափեմ. Իմանամ:

Խաշինք դարմանող. Մարդ դաւող. Ստինք դիեցող. Ուստինք գրժամանող (աւրող). Տիրոջը դրժող (մատնիչ). Իւղ (օծանելիք), հաց եփող. Երդումը, ուփառը, պատուիրանքը, օրէնքը զանց ընող (չբռնող). Աստղերով, ծաղիկներով զարդարուած. Սեւերով, մըթով, քուրձով զգածեալ (պատած). Իրը (եղելութիւնը) զգացող (իմացող). Խարազն, ծիրանի զգեցող (հազնող, հազած). Տերեւները նետած (ձգած). Նետ, շանթ, քար, կրակ նետող. Զէնքը, լուծը նետող. Գետը նետուած. Իրաւունքն ընտրող (կտրող, որոշող). Տերեւները թափած, Մարդէ (բնակիչներէ), յիշողութենէ թափուր. Ոխը, նետ թափող. Հնարք (ճամբայ, կերպ) իմացող (դտնող). Զար (բաներ) իմացող (հնարող):

Լկեմ, լնում. Խանձիմ, խառնեմ, խաբեմ, խըլեմ, խնդրեմ, խողխողեմ, խորհիմ, խօսիմ. Մախեմ, ծեծեմ, ծնանիմ, ծփամ:

Սովէ լլկուած. Մազկով, հացով, պտղով, որդերով, խնդրութեամբ լեցուած. դանիւ (ծեծով) լեցուած (շատ ծեծուած). Արեան, գէշի (լւշ) խանձած (բորբոքած). Մծմբով, ծխով խառնուած. Եղեմէն խարուած (այրած). Արմատէն խլուած. Վրէժ, քէն խնդրող. նախանձով (եռանդով) խնդրող. Արով խողխողուած. Մաքին մէջ (ինքնիրեն) խորհող. Իրաւունքը խորհող (իրաւունքը կատարելով հաշտուող). Բարի խօսող (միջնորդ). չար խօսող (ամբաստանող). առակ խօսող. որովայնէն խօսող. ատեանին մէջ խօսող. հնութեանց վրայ խօսող. Մարդ ծախող (սպառող). Բրով (սօֆո). ողորով (բարակ գաւազանով) ծեծուած. (յառաջ եկած). Անձրեւ ծնանող. երկրէ, ծովէ, ջուրէ, հողէ ծնած. Մովին մէջ ծփացող:

59. Հրահանգ

Կամիմ . կապեմ . կապտեմ . կատարեմ . կարեմ .  
կեամ . կերտեմ . կիզում . կլանեմ . կծանեմ . կոխեմ .  
կոծեմ . կորանամ . կորուսանեմ . կոփեմ . կռեմ .  
կոռոփեմ . կտրեմ . կրեմ . կրծեմ :

Բարի , չար կամեցող . կամար ( գօտի ) կապող .  
կամարներով կապուած ( շինուած ) . ակունքով կապ-  
ուած ( գտմուած ) . Դի , տաճար , սեղան կապտող ( կո-  
ղոպառող ) . Կամք , հրաման կատարող . Կօջիկ , խօրան  
կարող . կամքը ( ընել ) կրցող ( անձնիշխան ) . Լեռ ,  
շնիլմէջ ( մարդ եղած տեղ ) ապրող . վիշտերու մէջ  
ապրող . Կաւէ , փայտէ , քարէ , կրկտէ ( ալը տրբը )  
կերտուած ( շինուած ) . հրաշքով ( զարմանալի կեր-  
պով ) կերտուած . ձեռքով , նկարով կերտուած ( գոր-  
ծուած ) . Տաքէն , ցուրտէն կիզեալ . Ծովէն կլուած .  
Զերմութեամբ կծանող ( խայթող ) . Ոտքով կոխուած .  
Ալիքներէ , հովէ կոծուած ( ծեծուած ) . Աչուըները  
կորացած ( ամօթով ) . Պտուղը , յոյսը կորսնցնող . Քար  
կոփող . Կռանով ( չէ+ին ) կռուած ( տաշուած ) . քարէ  
կռուած . Բանիւ ( խօսքով ) կռուող . Ծայրերէն , կէ-  
սէն , մէջտեղէն , մօտէն , տակէն ( արմատէն ) կըտ-  
րուած . քարէ կտրուած ( մէկ կտոր քարէ ) . Բեռ ,  
ջուր կրող ( տանող ) . վիշտ կրող . Կաշառք կրծող  
( ուտող ) :

---

Համբերեմ . հայիմ . հանեմ . հասանեմ . հատա-  
նեմ . հատուցանեմ . հարկանեմ . հեղձնում . հեղում .  
հոսեմ . հոտիմ . Զգեմ . ծուլեմ . Շարակիմ .

Խստութեան , վիշտերու համբերող . Ծովու վրայ  
նայող . երկինք նայող . Զուկ , ջուր հանող . միս հա-  
նող ( +է+ին ) . պատկեր հանող ( նկարող ) . խաչը հա-  
նող . հարկ հանող ( առնող , ժողվող ) . քէն հանող

( ոխ առնող ) . երազ հանող ( մեկնող ) . Զեռքով հասնող ( կարող ) . Քար , երկաթ կտրող ( մետաղներէն հանող ) . փայտ կտրող . Թոյսը , քունը հատած . թաթերը կտրած . երակը կտրող ( արիւն առնող ) . մաէ կտրուած ( միս չուտելու ուխտ ընող ) . Վարձքը , երախտիքը , քէնը հատուցանող . Արինգ , քնար , փող զարնող . դիւէ , նետէ , շանթէ , սուրէ , ցուրտէ , խորշակէ զարնուած . Ծովը խղդուած . Արիւն թափող . Հուր , ջուր վաղցնող . Ժանտ , չար ( գէշ ) հոտող . Նետ , քար ձգող ( նետող ) . ակոս ձգող ( քաշող ) . Արծաթէ , ոսկիէ , պղնձէ ձուլուած . Խոտ ճարակող :

### 60. \* Հրահանգ

Մածնում . մահանամ . մանեմ . մեծարեմ . միսեմ . մոռանամ . մտանեմ . Յարդարեմ . յիշեմ . յուզեմ . յոդեմ . նենգեմ . ներկեմ . նիւթեմ :

Տախտակով մածուած ( վրան ծածկուած ) . Սըով , սովով , թոպուելով ( ծեծուելով ) մահացած ( սպաննուած ) . Խղդուելով , հեղձնլով մահացած . Ոսկով մանուած . Հիւրերը մեծարող . Խորը . մէջը մխուրող . ձեռքը մխող ( ձեռք զարնող ) . Երախտիք մոռցող . Որջ , ծակ , խորը , մէջը մտնող . Տաճար , սեղան յարդարող ( շտկող ) . Զարիքը յիշող ( ոխ պահող ) . Խորերը , ջուրերը յուզող ( փնտող ) . Խոռովութիւն , անձրեւ յուզող ( հանող ) . Նախանձէ յուզեալ ( շարժեալ ) . Սուտ ( բաներ ) յօդող ( շինող ) . Ուխտը , տէրը նենդող . Միւրանի ներկող . Զարիք նիւթող :

---

Շարժեմ . շինեմ . շնչեմ . Ուտեմ . ուրանամ . Զափեմ . չուեմ . Պահեմ . պաշտեմ . պատեմ . պատճառեմ . պարարեմ . պարտաւորեմ . պշնում : Հովէն շարժած . Պատ , խորան շինող . տուն , աշ-


խարք շինող ( շէնցնող ) . մարդով ( բնակչօք ) շէնցած . Մուկս , բոց , հուր , մահ շնչող . Աստուծմէ , հոգիէն շնչուած ( ներշնչեալ ) . Կոտ ուտող . ցեցերէ կերուած . Աստուած ուրացող . Երկիր չափող . Երկինք չուող . Ուկին ( կեանքը ) պահող . Ուկտ , պատուիրանք , ոխ պահող . Աստուած , կուռք , դիք պաշտող . Արծաթով , սառոյցով , մութով պատած . Հիւանդութիւն պատճառող ( հիւանդ ձեւացող ) . Սուտ ( բաներ ) պատմող . Դիւրին , դժուարին ( ոճով ) պատմուած . Արովայնը պարարող . Մահու , պատժոյ պարտաւորուած ( դատապարտուած ) . դատաստանով պարտաւորուած . Երկինք պշնող . մարմնոյ , երկրի պշնող ( մարմնաւոր , երկրաւոր բաներու նայող ) :

---

Սիրեմ . սնանիմ . սուզեմ . սպանանեմ . վաճառեմ . վարեմ . վարժեմ . վիժեմ . վիրամ . Տարածեմ . տեսանեմ . ջնորիմ . ցուցանեմ . Փորեմ . Քաղեմ . Քաղցնում . քարշեմ . քննեմ . Օծանեմ :

Հայրենիքը սիրող . Զրոյ մէջ , կաթով սնած , տունը ( մէկուն ) ձեռքը սնած . զով տեղեր սնած . Զրոյ մէջ , խորը սուզած ( ընկղմած ) . Տէրը , եղբայրը ըսպաննող . Գինի , ցորեն , մարդ վաճառող . Ժամանակը վաճառող ( պարապ անցնող ) . Կառք , նաւ վարող , գերի , մարդ վարող ( յափշտակող , տանող ) . Զի , մանուկ վարժող . մտօք վարժուած ( հնազանդ , հլու ) . Գահէ ( սւլուրումէ ) , քարէ ( ժայռի վրայէ ) նետուած . գետի մէջ նետուած . Վարս ( գլխու մազ ) վիրայող . ( ածիլող ) . ճամբայ վիրայող ( շտկող ) . Բազուկները տարածած . գետնի վրայ տարածուած . Երազ տեսնող . Խելքը ցնորեցնող կ-մ ցնորած . Ճամբայ , երազ , ժամեր , տաներ ցուցնող . Գետնի , քարի մէջ փորուած . Ծաղիկ , պտուղ , հասկ , կրկաւտ քաղող ( ժողովող ) .

ծայրերէն քաղուած ( կտրուած ) . ինչքի ( հարստութեան ) քաղցած ( անօթի ) . Գետինը քսուող . Խորունկ ( բաներ ) քննող . Ուկւով , արծաթով օծուած :



## ԴԱՍ ԽԲ.

ԲԱՐԴ ԲԱՌԵՐ , ԲԱՑԱՆՈՒԵՆ ԵՒ ՄԱԿԹԱՑ

Հ. Բայանունները գոյականնվ միայն կը բարդուին :  
Պ. Բայանունները շատ անդամ ճակառով կամ ճակառացէն առնուած աժականով ալ կը բարդուին . զոր օրինակ . ճշտաբուղին , շտափիս , + ջագրիս , բարդուած են բուղին , իսու , գես բայանուններէն . և մշտ , շոր , + ջմակբայներէն :

### 61. Հրահանգ

(1) Ամբառնամ . ասեմ . աւերեմ . Բարձրանամ . բեկանիմ . բղխեմ . բուսանիմ . Գանեմ . գիտեմ . գուշակեմ . գտանեմ . Դատիմ . Դիմեմ . Եփիմ . Զարթնում . զինեմ . Ընծայեմ . ընթանամ . Թռչիմ . Լլկեմ . Խամրիմ . խօսիմ . Ծագեմ . ծաւալեմ . Կազմեմ . կամ . կարգեմ . կեամ . կիզում . կշռեմ . կորովեմ . Հայիմ . հասանեմ . հաւանիմ . հաւատամ . հեղուսեմ . հիմնեմ . Մահանամ . մաղեմ . մարտնչիմ . մեռանիմ . մըտանեմ . Յածիմ . յառնեմ . Նուագեմ . Ծարժիմ . շրնչեմ . Պահեմ . պարծիմ . Զանամ . ջնջեմ . Սնանիմ . ստեղծանեմ . Վիրաւորեմ . Տարածեմ . Յասնում . ցընորիմ . Փլանիմ . վոտիմ :

---

(2) Վեր ամբարձեալ ( վերցուած ) . Կանխաւ ըսոդ

---

(1) Աշակերտք նշանակեալ բոյերուն բայանուն արմատները դանեն :

(2) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար իօպերը բարդ բաերու դարձունեն . մակրաշներն առաջ գնելով .

էամ ըսուած . Վաղ , կանուխ (շուտ ) աւերած , փլած , փտած . Ուղիղ բարձրացած . Դիւրաւ բեկանող . Յանկարծ . առատ , յօրդ բխող . Դիւրաւ , ինքնին բունող . Զարաչար գանուած . կանխաւ գիտցող . կանխաւ ( առաջուց ) գուշակուած . Ջքնաղ ( քիչ ) , դիւրաւ , դժուարաւ գտնուող . յանկարծ , առաջ գտնուած . Արդար , ուղիղ դատող . Յառաջ , տար ( հեռու ) դիմող . Կէս եփած . Մանր արթնցող . իսպառ ( բոլորովին ) զինեալ . Նոր ընծայուած . Արագ , թեթեւ , խուռն ( բազմութեամբ ) , զոյդ ( հաւասար ) ընթացող ( վազող ) . Բարձր թռչող . Զարաչար Ակուած . Արագ խամրող ( թոռմող ) . Ունայն , արդար , ուղիղ խօսող . Յանկարծ ծագող . Լայնաբար ( ընդարձակ ) ծաւալեալ . Պինդ ( ուժով ) կազմուած . Առընթեր ( քովը ) , շուրջ ( բոլորտիքը ) առաջի ( առջեւը ) կեցող . ինքնիրեն կեցող . վրան կեցող . Յառաջ կարգուած ( դասուած ) . Երկայն , միայն ապրող . Ողջ ( ամբողջ ) կիզելի ( այրելի ) . Արդար կշռուող . Արդար կորովող ( պատող ) . Քաղցր , առաջուց նայեցող . Երագ ( շուտ ) , վաղ ( կանուխ ) հասնող . Դիւրաւ հաւանող . Թերի , ուղիղ , նոր հաւատացող . Հաստատ հեղուսուած ( դամուած ) . Հաստատ հիմոււած . Խայտառակաբար մահացած ( ըսպաննուած ) . Մանր մաղուած . Հակառակ , ընդդէմ մարտնչող . Կէս , վաղ ( կանուխ ) մեռած . կանխաւ ( առաջուց ) մտած . Ընդվայր ( ասդին անդին ) . դատարկ յածող ( պտտող ) . Վաղ յառնող ( կանուխ ելլող ) . Քաղցր նուագող ( երգող ) . Մանր , արագ , միշտ շարժող . Դառն , քաղցր , սաստիկ շնչող . Գիշեր ( գիշեր ատեն ) պահող . Ունայն , սին ( պարապ տեղ ) պարծող . Զուր , ժրութեամբ ( արիութեամբ ) ջանացող . Համօրէն ( ընդհանուր ) ջնջուած . Դատարկ , ընդարձակ , փափուկ սնած ( մեծցած ) . Նախ , նոր ըս-

տանեաց մէջ, ընդ վայր, լնդարձակ, փափուկ սը-  
նած (մեծցած) . Նախ, նոր ստեղծուած . Կարի (շատ)  
վիրաւորուած . Լայն, համօրէն տարածուած . Ծանր  
ցասնող (բարկացող) . Յայդ (գիշերը) ցնորող (այբե-  
լան) . Վաղ փլած, փտած :

ՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՍԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԻԱՌՆ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. ՀՐԱՀԱՆԳ

(\*) Տունը նոր է . Եկեղեցին հին էր . Փայտը երկա-  
թէն թեթեւ է . Քացախը սաստիկ է . Աղը կծու է,  
բայց հոտելէ կը պահէ . Ոսկին բոլոր մետաղներէն  
ազնուագոյն է . Աղամանդը շատ մեծագին է . բայց  
երկաթէն աւելի օգտակար և գործածական չէ . Կը-  
տաւը կերպասէն աւելի ցանցառ (սէյրէք) է . Այս  
գինին անջուր է . Այդ հովիտը ջրոտ է, անոր համար  
բարեբեր է . Անձրեւն ու կարկուաը ծանր են . շոգին  
թեթեւ է . Մարդիկ և անասունները քալող և շարժող  
են . Մարդ զգացող, իմացող և խօսող է . Զին կրա-  
կոտ է . Եղբայրդ վախկոտ է . Դուն խիստ ես . Անոնք  
վկայ են . Մենք ականատես ենք . Անոնք ականջալուր  
են . Զեր եղբայրը տունը կը գործէ . Այս տղաքն իրենց  
հանդերձները պատռեցին . Նաւը ծովը ընկղմեցին .  
Մարդիկը ծովը խղդուեցան . Կառավարը գետինը իյ-  
նալով կորսուեցաւ :

|                    |                        |
|--------------------|------------------------|
| Սաստիկ, բարի       | Անջուր, (գինի), անապակ |
| Հոտել, նեխունիւն   | Խօսող, խօսուն          |
| Մեծագին, պատռական  | Կրակոտ, զեր            |
| Գործածական, պէտոնէ | Մովը խղդուիլ, ծովակուր |
| Ցանցառ, անօսր      | Անել                   |

(\*) Ուսուցչն էր ան հեռեւեալ հրահանքներն այլ լ այլ  
դասերու բաժնել :

Զըռոտ , զբարբէ  
Բարեբեր , յուսունէ  
Քալող , չնույնան  
Շարժող , շուտուն

Զգացող , դիմուն  
Իմացող , իմաստուն  
Գետն իյնալով կորսուիլ .  
Եեդամոյն լինել

## 2. Հրահնանգ

Բարեկամո ձեր հայրը տեսաւ . Զինուորներն իրենց զօրապետը կանչեցին . Այն քաղքին մէջ կին մը կար . Այս կինն իր աղջիկը չի սիրեր . Այս հայրն իր որդիքը կ'անիծէ . Երկինքն աստղեր կան . Զրհորներուն մէջ օձեր կան . Լեռներուն մէջ մեծ օձեր կան . Մեծամեծ կէտեր կան ծովին մէջ . Երկրիս վրայ բարձր լեռներ կան . Լեռներու մէջ մեծամեծ անտառներ կան . Անոր գերեզմանն այս քաղքին մէջ է . Մեր բարեկամներն այս տունին մէջ են . Անոնց ոսկրներն այս գերեզմանին մէջ են . Սպասաւորներն այն պալատին մէջ են . Այն սրահին մէջ հիւրեր կան . Այս սեննեկին մէջ գէշ հոտ կայ . Այս կրակարանին մէջ կրակ կայ . Զեր շտեմարանին մէջ շատ ցորեն կայ . Կառավարը վարժ է . Վարժապետն հմուտ և փորձառու է . Աշակերտները կրթեալ են . Եղջերուն և նապաստակն արագընթաց են . Տղան տհաս է . Պատանին հասուն է . Ծովին մէջ ձուկեր կան . Արեգական մէջ բիծեր կան . Աշխարհիս մէջ շատ մարդիկ կան . Հոն շատ բազմութիւն կար . Այն բանտին մէջ շատ կապեալներ կային . Զեր եղբայրը տեսնել կ'ուզեմ . Քու տանդ մէջ նստէ . Այս տունը մերն է . Դուք մեր սիրելիներն էք . Զեր եղբայրները մեր բարեկամներն են :

Մեծ օձ , վեշո

Փորձառու , քորչ

Պալատ , սպասան

Կրթեալ , կերն

Գէշ հոտ , ժանդահանդանիւն

Տհաս , իոն

Վարժապետ , լուրդապետ

Բազմութիւն , սարսի

### Յ. Հրահանգ

Անոնց ծառաները մեր ծանօթն են . Այն մարդն իմ վարպետս է . Զանի շատ խրատեցի . Այս խօսքերը ձեր զիրքերուն մէջ գրեցէք . Դուռը դոցեցին . Անոնցմէ ոմանք պատժեցինք . Ասկէ մէկը չի կրնար անցնիլ . Ամէնքն ալ հոս կը բնակին . Դուք հարուստ կնոջ եղբայր էք . Այն լեռնէն կ'իջնէին . Մեր երեսը չտեսաւ . Այդ տղան դուրս հանեցէք . Ձեր գեղը շատ գեղեցիկ է . Այս պարտէզը մեծ աշխատութեամբ շխնեցինք . Ձեզ շատ յոգնեցուցի . Ինձի ներէ . Պատգամաւորներն իմ խօսքերս անոնց պատմեցին . Խօսքն անոնց յայտնեց . Ես ձեզ կը հանգչեցնեմ . Անոնց հայրը հոն չէր . Անոնց ընկերները մեր բարեկամն են . Քարերը փողոցն են . Զինուորները հրապարակն են . Նաւերը նաւահանգստին մէջ են . Նաւաստիները նաւին մէջ են . Անոնց ամանները քուրձին (չուվալ) մէջ էին . Անոր արծաթն իր ծոցն է . Մեր սուրն անոր ձեռքն է . Անոնցմէ ոմանք նաւն են . Ձեր բարեկամներէն ուրիշները քաղաքն են . Ամէնքն ալ այս սրահին մէջն են . Մեր ցորենն շտեմարանն է . Ամէն մէկն իր տունն է . Տունը մէկը չկայ . Ձենէ շատերն աղքատ են . Անոնցմէ քիչերը հոս են . Անոնցմէ հինգն իմաստուն են . Ձենէ մէկը սատանայ է . Ձեր բարեկամներէն մէկն հոն էր . Մենէ մէկն հոն չէր . Մենէ ոչ մէկը հոն էր . Եղբայր մը ունիմ . Անիկա որդի մը ունի . Եղբայրս պարտէզ մը ունի . Դուք շատ բարեկամներ ունիք . Եօթն եղբայր ունինք . Անիկա գեղեցիկ պարտէզ մը ունէր . Դուք շատ զիրքեր ունիք . Հայրս շատ ստակ ունի . Անիկա շատ արջառներ և ոչխարներ ունեցաւ . Իսահակ ջրհոր մը ունէր . Որդի մը ունիմ . Մեծ տուն մը ունի . Պղափկ քաղաք մը ունիմ . Մեծ տուներ ունինք . Անոնք շատ ստացուածք

ունին . Իմ խօսքերս լսեցէք . Այն լեռնէն կ'իջնէր . Այս քաղըին մէջ բնակեցաւ . Այն տունն երթանք . Այն պարտէզին մէջ նոր գերեզման կար . կենաց ծառը դրախտին մէջտեղն էր . Տասը տարի ապրեցաւ . Ութ ժամ ձեղի սպասեցինք . Անոնք այս աշխարհէս են . Դուք այս աշխարհէս չէք . Երբ ասիկա թագաւորէն լսեցին . Անոր քալելուն ձայնը լսեց . Այդ մարդն այս տունը խոթեցէք . Զանիկա օտար երկիր տարին . Այն հացէն կերաք :

Ասկէ , Ճնդ այս

Շինել , յօբնել

Յոգնեցնել , աշխատ առնել

Ներէ , հրամ . Ներեազէր

Յայտնել , ի վեր հանել

Հանգչեցնել , հանդուցանել

Ամէն մէկը , չ-բատանչե-ը

Մէկը , աճ

Ոչ մէկը , աշ աւ

Քալել , էնալ

Խոթել , ճոշանել

#### 4. Հրահանգ

Զեր եղբայրը տեսայ ու անոր ըսի . Անոր ձայնը լսեցի ու կանչեցի . Անոր մահուան լուրն առաւ ու սկսաւ լալ . Զանի երկու մղոն տարին . Անոնց հինգ քոռ ցորեն տուփն . Պատը երկու կանգուն բարձրացուցին . Զինուորներուն զէնքերն առաւ . Տունին յարկը քակեցին . Անոր եղբայրները հոն էին . Իր ծառային աղջիկն սպաննեց . Սենեկին դուռները բացին . Տաճարին վարագոյրը ճեղքուեցաւ . Եղբօրս ձայնը լըսեցի . Մեր բոլոր ստացուածքը քուկդէ . Այդ աշտանակն իմս է . Այն պարտէզը գեղեցիկ է . Անոնց ամանները լեցուն են . Մեր տուները բարձր են . Զանի լերան գլուխը հանեցի . Իր մառանին մէջ շատ գինի ունէր . Ութ տարի աշխատեցայ ասիկա սորվելու համար . Դաշտին երկայնովմիւնը տասուերկու մղոն էր . Այն գուփին մէջ առիւծներ կային . Թագաւորը հզօր

Է . Այն մարդը բանսարկու է . Խօսելու ատենը կ'ըսէր . Արտաշիսի փեսայութեան ատենը ոսկի կը տեղար , Սաթինկան հարսնութեան ատենն ալ մարգարիտ . Դուն Շարայի որկորն ունիս . Մենք Շիրակայ համբարները չունինք . Իմ գիրքերս հւր են , Զանոնք մուր դրիք :

Լուր , համբաւ

Ճեղքեմ , ցելում

### 5. Հրահանգ

Զանոնք ճեր եղբօրը տուի . Այդ գիրքերն հվ շարադրած է . Գիտուն մարդ մը զանոնք շարադրած է . Հոս հինդ սափոր ջուր բերէք . Ես ճեղի ըսելու շատ բան ունիմ . Երկու որդի ունիմ . Անիկա չորս աղջիկ ունէր . Շատ հարստութիւն ունէին . Համբերելու զօրութիւն չունիմ . Ներս մտաւ ու նստաւ . Զանի իւր գիրկն առաւ ու օրհնեց . Երկու օրուան ճամբայ քալեցինք . Գիշեր և ցորեկ կ'երթայինք . Առէք այս մարդիկն ու իրենց տուները տարէք . Անոր բարեկամներն այս դուռնէն անցան ու մեզի եկան . Այս պատմութիւնը լսած ատենը կը զարմանար . Երկու օր առաջ ճեր ծառաները մեզի լուր տուին . Անոնց ընկերները մեր բարեկամներն են . Դուն իմ որդիս ես . Մենք ճեր բարեկամներն ենք . Եղբայրներս ճեր վրայով պատմեցին . Մենք անոնց հետ ճեղի եկանք . Անոնք ճեր եղբօրը հետ մեր տունը գացին . Երեք օր ճամբորդութիւն ընելով հոն հասանք . Զեր սիրոյն համար այս աշխատութիւնը յանձն կ'առնեմ . Առտու իրիկուն ճեղի համար կ'աշխատէինք :

Շարադրեմ , յօշնեմ  
Նստիմ , բաղմէմ

Ճիշեր ցորեկ , շրէւ և դէւ- Ճամբորդութիւն ընեմ , ճա-  
մէր Աիրոյն համար , առ սէր  
Առաջ , յառաջ ժան և նայեմ

## 6. Հրահանգ

Ինձի հրաման տուր որ երթամ հայրս տեսնելու Անոր պատուէր տուր որ զիս չնեղէ . Անոր վախէն լռեցինք . Այն մարդուն որդին կը ճանչնամ , բայց ձեզ չեմ ճանչնար . Զանոնք վրանը խոթեցէք . Ինչու համար բոլոր օրը դատարկ կեցած էք . Հոս ինչպէս մտաք , պատմեցէք մեզի . Այս ճամբէն մէկը չի կըրնար անցնիլ . Անիկա աղէկ մարդու որդի է . Ասիկա հարուստ կնկան աղջիկ է . Արքայից արքային ծառաներն ենք . Այդ գերիներն այն բերդը տարէք , քաղաքը մի բերէք . Իր եղբօրը բով բնակեցաւ չորս տարի , և մեր երեսը չտեսաւ . Իր հայրենիքէն աքսորուեցաւ . Զեր գեղնեկայ , շատ գեղեցիկ է . Խօսքին երկայնութենէն ճանձրացաւ և քունը տարաւ . Անոնց այն խօսքերէն գիտցայ որ անոր եղբայրն էք . Բազմութիւնն այն եկեղեցին կը դիմէր . Զանի տաճարին մէջ տեսան իր բարեկամներուն հետ . Երկիրը մեծ է . Մովլ խորունկ է . Երկինը բարձր է . Լուսինը յատուկ լոյս չունի . Անիկա վաթօռւն տարի ապրեցաւ , և քառասուն օր թաղաւորեց . Իմ տունս մտէք . Կընցնւոյն շուքին տակ կը նստէր . Իմ ձեռքիս տակն է . Զեր իշխանութեանը տակ շատեր ունիք . Եղբայրս երկու որդի ունի . Տասը սպասաւոր ունէր . Անոնք շատ ստակ ունին . Ստակ չունիմ , բայց ունեցածս տամ :

Վախէն , առ ահի

Աքսորուիմ , դուքտէր լէնէմ

Բոլոր ( օր ) , աղջոյն

Քունը տանել , նէրհետ

Աղէկ , աշէս

Յատուկ , առանցին

Բերդ , դուակն

Շուք , հոգանի

## 7. Հրահանգ

Մարիամ գերեզմանը եկաւ . Գացէք , ըսէք ձեր բարեկամներուն որ հրապարակն երթան . Անոնք հոն

ժողվուեցան , և անոր դալուն կը սպասէին . Ստա-  
կը սեղանաւորին դարձուց . Անիկա ստակն առնելով  
կ'ըսէ . Զուր առաւ ու ձեռուըները լուաց . Ան տեղը  
եկան որ աւերակ կը կոչուէր . Դուն իմ սիրելի որդիս  
ես . Ես քու հայրդ եմ . Թագաւորը տօնին ատենը հոն  
էր . Աշակերտները հարսնիքն էին . Ժամը իննին ա-  
տենները խաւար եղաւ . Ութ մղոն քալեցինք . Ան ա-  
տենները սով կար . Կէս գիշերուան ատենները յար-  
ձակեցան անոնց վրայ . Գիշերանց ելելով կ'երթային .  
Հարիւր լիտր իւղ բերին . Կրնամ այս տաճարը քակել ,  
և ւրեք օրուան մէջ շինել զայն . Այն երկրէն կ'ու-  
գանք . Այս քաղաքն եկան . Այն քաղքին մէջ աղ-  
քատ մը կար . Զանի տեսնելով կանչեց ու իր քովը  
նստեցուց . Մեզ բռնեց ու կը չարչարէր . Պատուհանը  
բացաւ ու կը նայէր . Զանի բանտէն արձակեց . Զա-  
նոնք բանտարկեց . Զեր եղբայրներն եկեղեցին խո-  
թեցին . Այն եկեղեցւոյն մէջ կը քարողէր .  
Ժամը իննին ատենները , Բանտարկեմ , դնեմ է դէ-  
զնն յաճա- դահով  
Զարչարեմ , Ակեմ

### 8. Հրահանգ

Այն բանտին մէջ շատ կապեալներ կային . Զանի  
ջուրը նետեց . Անոր ձայնը լսելով կ'ուրախանար . Յա-  
կոր ինը տարի ծառայեց Լաբանու Ռաքելին համար .  
Զորս ժամ ոտքով գացինք . Եօթը տարի սով եղաւ .  
Երուսաղեմի տաճարը քառասուն տարիէն շինուեցաւ .  
Ինծի հինգ քանքար արծաթ տուաւ . Եօթը սափոր  
ջուր բերին . Տասը փունջ ծաղիկ քաղեցինք . Այս տու-  
նը մերն է . Դուք մեր սիրելիներն էք . Եօթը օր աշ-  
խատեցան ու զանի դուրս հանեցին . Ութ մղոն քա-  
լելէն ետքը մեծ քաղաք մը հասանք . Քաղքին դուռ-  
նէն ներս մտնելու ատեն հինգ հոգի տեսանք . Այն

զիրքը կարդացած չենք . Փոքրիկ քաղաք մը ունիմ . Եկու և հոն բնակէ . Այս լեռներէն շատ հեղեղներ կ'իջնեն . Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ . Ինք և իր որդիքը մեղ տեսնելու եկան . Եթէ ես եկած չըլլայի . Զեղ շատ օրեր փորձեցի . Մեր գործքերը ձեզի պատմեցինք , բայց դուք մեզի չհաւատացիք . Անիկա հարուստ մարդու որդի էր :

Նետեմ , ընկենում Ոտքով , հեռէ

Ուրախանամ , ուրո՞ի լինէմ Հոգի , ո՞է (անձ )

### 9. Հրահանգ

Զանի թագաւորին տարին . Եղբօրը քով կեցաւ շատ օրեր . Զանոնք դաշիճներու մատնեց . Անոր վը-րանին տակը ճաշեցին . Երկու օրուան ճամբայ դա-ցինք . Իմ խօսքերս լսեցէք . Անոր մանչերն ու աղ-ջիկները մեզի եկան . Քիչ մը ետքը զանոնք տեսայ . Մեր աղաչանքն անոնց ընդունելի չեղաւ . Թագաւորի խորհուրդները ծածկել պէտք է . Աստուծոյ ըրածները ձեզի պատմեմ . Աստուծոյ և անոր զօրութեանը կը հաւատամ . Հազիւ անիկա ոտքը ցամաքը դրած էր . Աստուած այս աշխարհը ստեղծած է . Վաղուան հա-մար մի հոգաք . Մեզի անոնց վրայով պատմեցին . Բան կը փնտուէին որ անոր վրայով չարախօսեն . Զա-նի քաղքէն դուրս հանեցին . Զանոնք ատեանը բե-րին . Շատերն այս քաղքէն ելան . Այդ տղաքն այն տունը տարէք . Այն քաղաքը կը բնակէր . Իմաստուն մարդոց խօսքերուն մտիկ ըրէք . Այս մարդիկը քաջ թագաւորի զինուրներ են . Այս տեղը չարագործ մար-դերով լցուցիք . Դուրս ելէք և զանոնք փնտուեցէք . Ցորենն իրենց ամաններուն մէջ ժողվեցին . Երբ բաղ-մութիւնը տեսաւ , նստեցաւ . Անոր դուրս ելլելու ա-տենը բազմութիւնը ներս կը մտնէր . Զանոնք այդ ե-կեղեցին խոթեցէք :

Քիչ մը ետքը , յեռ սոկու Հազիւ , ոյն ինչ  
Գոյ Ստեղծեմ , առաջ

### 10. Հրահանգ

Երկրիս բոլորտիքն օդ է . Ժողովուրդն անոր բոլորտիքը ժողուեցաւ . Այն քաղեին բոլորտիքը պատնէշներ շինեցին . Անոր վրայով ձեզի բան մը պիտի ըսեմ . Զեր եղբօրը վրայով ամբաստանութիւն կ'ընեն . Զեր բարեկամներն իմ վրայովս կը տրտնջեն . Զինուորները պարտէզին դուռնէն մտան . Բազմութիւնը դաշւ չն երեսը տարածուեցաւ . Տասը ժամ բան չկերան . Տասուերկու մղոն բալելէն ետքը քաղաքը հասանք . Մեզ տեսան ու սկսան փախչիլ . Փախան ու բերդն ապաւինեցան . Զանի մէկդի առաւ ու հետը կը խօսէր . Զէի գիտեր թէ ինչ է . Զկրցան մեր խօսքերն իմանալ . Մեզ թողուցին ու իրենց տուները գացին . Տասուերկու եղբայր ենք . Այդ մարդիկն Աստուծոյ ծառաներն են . Շատ եղբայրներ ունիմ . Երկու տուն ունիք . Քսան ծառայ ունիք . Գիրքեր ունինք . Այն տունը մի մտնէք . Այս քաղաքը ծնանք . Այս տեղէն հեռու է . Այս տաճարէն խոթեցէք զանոնք . Իմ բարեկամիս երթանք :

Ամբաստանութիւն ընել , Բան չկերած , անսոսաղ  
ամբաստանել                                  Մէկդի , մէկդոէ

### 11. Հրահանգ

Եղբօրը տունը մտաւ . Բարեկամներն անոր եկան . Թուղթը գրելու ատենը ծառաները զանի կանչեցին . Աթոռին վրայ նստելով ժողովուրդը կը դատէր . Երբ հիւանդը բժշկեց , զանի իր տունը զրկեց . Բարեկամներն անոր կ'ըսեն . Մեզի հետ գալ կ'ուղէր . Շատ օրեր հոն կեցանք , ու անոր գալուն կը սպասէինք . Բանտին մէջն էր , ու եղբայրներուն կ'աղաչէր որ զինք

աղատեն . Զանի լերանը վրայ հանելէն ետքը՝ եղած-ներն անոր պատմեցին . Այն մարդը ձեզի դրկեցի որ իմ վրայով ձեզի լուր տար . Եթէ այդ մարդիկը կը սիրէք , մի չարչարէք զանոնք . Երբ զանի երկու մղոն տարին , շատ յոգնեցան . Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ զանի տեսնելու . Անոր համբաւը բոլոր այն երկիրը ապրածուեցաւ . Երկու օր անոնց հետքալելէն ետքը գեղ մը հասանք . Տաճարին առջեւը կենալով ձեր եղբօրը հետ կը խօսէի . Իմ որդիքս ձեր բարեկամներն են . Ես օտար չեմ :

Յոգնիմ , Հասուկիմ

Պղտիկ ( որդի ) , Կրտոեր

## 12. Հրահանգ

Ես զանոնք տեսած եմ . Դուք այն դիրքը կարդացած էք . Աստուած այս աշխարհս ստեղծած է . Եթէ անոնք հոս եկած ըլլային . Դուն իմ վրայովս լսած ես . Մենք անոնցմէ երկու թուղթ ընդունած ենք . Ես այն մարդը տեսած չեմ . Անիկա ասանկի խօսք մը ըսած չէ . Մենք մէկը սպաննած չենք . Եթէ այն եկած չըլլար . Այն քաղքէն ելաւ ու մեզի եկաւ . Քու եղբայրդ և քոյրդ մեզի եկան . Իմ հարսնիքս եկիք . Իր այդին մշակներ զրկեց . Զանոնք տասուերկու օր կը սորվեցընէր . Նոյ և անոր որդիքը տապանը մտան . Հոգին ու մարմինը դժոխքին մէջ կորսնցնելու կարող է . Մերերը և երիտասարդները սպաննեցին . Մանչեր ու աղջիկներ ունեցաւ . Անոնք մեր որդիներն են . Այս տղաքն իմս են . Երբ զանի տեսան , անոր քովը ժողվուեցան . Հաւն իր ծագերը թեւերուն տակ կը ժողվէ . Անոնք քահանայապետին սրահը մտան . Շատերը երբ լսեցին , անոր հաւատացին . Քու որդիդ հոս բեր . Հոն մարդ չկար . Բան մը չլսեցինք . Այն տեղէն հեռացան . Մեզի մօտեցաւ . Յովսէփին եղբայրներն եգիպ-

տոս իջան ցորեն գնելու . Յովսէփ իր եղբայրները տեսաւ ու զանոնք ճանչցաւ . Եղիպտոսի մէջ եօթը տարի առատութիւն եղաւ . Մեծ որդին սպաննուեցաւ . Պղտիկը հօրը կ'ըսէ . Քու որդիդ ըլլալու արժանի չեմ :

### 13. Հրահնանգ

Իմ եղբայրներս քենէ կը վախնան . Աստուծմէ չես վախնար . Անոր կ'աղաչէին որ իրենց հետ երթար . Երեք տաղաւար շինենք . Անոր գլուխը կտրեցին ու թագաւորին բերին . Երբ թագաւորը տեսաւ , շատ դարմացաւ . Անոր խօսքերուն մտիկ չէր ըներ . Թակոր իր հայրերուն գերեզմանը թաղուեցաւ . Պատերազմի լուրեր պիտի լսէք . Անկիւն մը քաշուեցաւ ու կը նստէր . Տէրն իմ օգնականս է . Իմ ձեռքիս տակ զինուորներ ունիմ . Շատ օրեր նեղութիւն կրեցի . Մենք անոնցմէ վախ չունինք . Յունաց բոլոր ուսմունքներուն մէջ կրթուեցաւ . Մեզի շատ ստակ հարկաւոր է . Մեզի հետ անոր պալատն եկան . Անոր կ'աղաչէին որ իրենց սահմաններէն երթար . Մենք դիրքերը սորված չենք . Այն մարդը տեսած չեմ . Եթէ այս խօսքերն ըսած չըլլայի . Քար մը նետելու չափ տեղ անոնցմէ հեռացաւ . Քառասուն օր չկերաւ ու չխմեց . Տասը տարի անկողին ինկած էր . Բերգն ապաւինեցան . Երկինք ելաւ ու Աստուծոյ աջ կողմը նստաւ . Անոր տասը դահեկան տուաւ . Հնազանդ որդին իր հայրը կ'ուրախացնէ . Զանի կը խրատէր որ իր խօսքերուն մտիկ ընէր . Բազմութիւնը դաշտին վրբայ ցրուեցաւ . Լեռներէն ու ձորերէն անցանք :

Մտիկ ընեմ, անսամ  
Քաշուիմ, առանցնանամ  
Վախ, երիշող  
Կրթուիմ, վարժուիմ

Հարկաւոր, ոչոյ,  
Քար մը նետելու չափ տեղ,  
+ոքընիւց մէ  
Նեղութիւն կրեմ, դաշտուիմ

Իյնամ (անկողին), անէալ Ուրախացնեմ, ուրախ առնես  
դնէս

14. Հրահանգ

Եօթն օր բանտին մէջ մնաց . Ութ հոգւոյ չափ  
ջրհեղեղէն ազատեցան . Զիս մահուընէ փրկէ , Տէր .  
Այն տեղին մարդիկը զանի ճանչցան . Վայրենի ազ-  
գերու բնակարանները մտաւ . Գետին քովէն կ'երթար .  
Ասիկա քու սիրոյդ համար ըրի . Ատելութենէն զանի  
սպաննել տուաւ . Տրտմութենէն հիւանդացաւ . Իրենց  
բարեկամները թշնամիներուն ձեռքը մատնել կ'ուզեն .  
Անոնցմէ ոմանը մեզի եկան . Անոր ծննդեան ատենը  
շատերը պիտի խնդան . Անոր ներս մտնելու ատենն  
ամէնքն ալ ոտք ելան . Անոր ոտքն ինկաւ և կ'աղա-  
չէր . Քաղաքը հասած ատենը բարեկամները զանի  
դիմաւորեցին . Երբ ասիկա ըսաւ , ամէնքը լուցին .  
Մեզի օգնէ , քանզի ահա կը կորսուինք . Ամէն բան  
քուկդ է . Այս ամէնն իմս է . Երկինք իմ աթոռս է .  
Դուք իմ որդիքս էք . Շատ բարեկամներ ունիք . Ու-  
րախութենէն գնաց ու իր ստացուածքը ծախսեց . իմ  
զօրութիւնս դուն ես . Դուք մեր պարծանքն էք . Եղ-  
ուայրներս և քոյրերս հոս են . Քու ծառաներդ և ա-  
ղախիններդ և անասունդ չգործեն . Զեր բարի գոր-  
ծերը տեսնեն . Անուշ խօսքեր խօսեցաւ . Բարեբարոյ  
կնոջ որդի էր . Անզգամ և լեզուանի մարդու հանդի-  
պեցանք . Նենդաւոր մարդոց հետ հաց մի ուտեր .  
Քու բարեկամներուդ հետ ուրախ եղիր . Զկնորսներն  
ուռկանը կը քաշէին . Մեր վրայով շատ բան կը պատ-  
մեն . Ես երբէք անոր տունը գացած չէի , բայց ան  
ստէպ իմ տունս կուզար . Զօրքը գետն անցնելով  
քաղաքն առաւ . Քաղաքներ շինեցին և անոնց մէջ  
բնակեցան . Աքրահամ իր ծերութեան ատենը շատ  
հարուստ եղաւ . Իսահակ անունով որդի մը ունեցաւ ,

որուն աչուրները կուրցան ծերութեան ատենը . Հայկ  
իր որդիները և թոռներն առնելով , Հայաստան ե-  
կաւ . Բելին հետ կոռւեցաւ և անոր յաղթեց :

( Ութ հոգւոյ ) չափ , էբրեւ Լոեմ , լուս լնիմ  
Ազատիմ , ուրիշ Բնակարան , բնակունեան  
Փրկեմ , առքեցո-ցանեմ Ոտք ելլեմ , յոդի կամ  
Դիմաւորեմ , ընդ ուսազ իւ Քաշեմ , յէմ  
նիմ Կուրնամ ( աչքը ) , վարիս

### 15. Հրահանգ

Այս մարդը հիւանդ է . Քու բարեկամդ աղքատ  
է . Այս տղան իմ որդիս է . Այս մարդը ձեր թագա-  
ւորն է . Ասոնք մեր բարեկամներն են . Այս մարդիկը  
ձեր աղդականները չեն . Այս ծերունին այս քաղքին  
դատաւորն է . Ասոնք մեր թագաւորին զինուորներն  
են . Այս աղջիկը քու դուստրդ է . Զեր թշնամին չենք .  
Հայրս այն քաղքին իշխանն էր . Այս երկու մարդիկը  
Յունաց զօրավարներ են . Հոն եղողները բռնեցինք .  
Մանողները կ'արգելուին . Տեսնողներն ու լսողները  
կանչեցինք . Ասիկա ընողը տեսայ . Զեզ մատնողն  
սպաննեցին . Մեզի հետ խօսողը կը ճանչնաս . Այս  
քաղաքը պղտիկ է , բայց շատ գեղեցիկ է . Այդ պար-  
տէզը մեծ չէ , բայց անոր մէջ շատ ծառեր կան . Մեր  
հանդերձը հին է , բայց մեր ոտքի ամաններն հին  
չեն . Այս լեռները բարձր են , բայց երկրին օդն ա-  
ռողջ չէ . Այն գետին ջուրերը յստանկ են . Գետն ալ  
խորհունկ է . Քաղքին մէջ կոիւ եղաւ և շատ վիրաւոր-  
ներ եղան . Շատ օրեր անոր տունն եղայ , բայց եղ-  
բայրդ ինծի հետ չէր . Մենք ձենէ գոհ ենք , դուք ալ  
մենէ գհհ էք . Տեսած մարդդ գովութեան արժանի չէ .  
Այն կինն այրի , աղքատ և օրուան հացի կարօտ էր .  
Այդ տղան իմ եղբայրս է . Այդ աղջիկն աղքատ մօր

մէկ հատիկ աղջիկն է . Այդ տղաքն իմ որդիներս են . Քաջ եղիք , ով մարդիկ . Որդեակ , ինծի հետ ուրախ եղիր . Եղբայր հղ ես . Ինծի ուլ մը չտուիր որ բարեկամներուս հետ ուրախանայի . Քու անունդ սուրբ ըլլայ . Զեզի ծառայ ըլլանք . Զեր տուները աւերակ ըլլան . Միշտ կ'ուրախանար . Քու ստակդ քեզի ըլլայ . Ինծի որդի մը պիտի ըլլայ . Ես ձեր մէջ սպասաւորի մը պէս եմ . Զենէ մեծը պղտիկին պէս ըլլայ . Ոչ իմ կամքս , այլ քուկդ ըլլայ . Ամբարտաւան մի ըլլար . Լուցէք :

Ոտքի աման , օդ որից Օրուան հաց , առուրն պարէն .

### 16. Հրահանգ

Հայրս պարտէզ մը գնեց . Գիրքեր գնեցինք . Քոյրդ պղտիկ զիրքը գնեց . Գնած զիրքդ ընտիր է . Եղբօրդ գնելու տունը գեղեցիկ՝ բայց շատ պղտիկ է . Ես ալ տուն մը գնեցի որ շատ մեծ է . Թուղթը գրեցիր . Հօրդ ինծի պարգեւած ձին ծախեցի . Դու ալ քուկինդ ծախեցիր . Իշխանը իւր կառքն ու ձիերը կը ծախէ . Հօրեղբայրս իւր պղտիկ որդւոյն համար գեղեցիկ դլսարկ մը գնեց . Այս տղան երկայն նամակ մը գրեց իւր մօրը . Մեր հայրը այս պարտէզըն ու այս այգին քու հօրաքոյրէդ գնեց . Մարդ մը հարսնիք ունէր . Բոլոր իւր բարեկամները կանչեց . Կինը իւր դրացիները կը կանչէ . Հովիւները ոչխարները կ'արածեն . Դուն խիստ մարդ մըն ես . Զցանածդ կը հնձես . Արձակեցէք ատոնք որ իրենց կերակուր գնեն . Մեր լապտերները կը մարին . Զեր այդ իւրէն մեղի ծախեցէք . Վաճառականներուն դացէք , ու գնեցէք ձեզի . Ինծի ինչ կ'ուզէք տալ . Ես զանի ձեզի կը բերեմ . Զեռքդ պնակը մի խոթեր . Ամենէն աղէկներն ամաններու մէջ ժողվեցին . Օտար էի և

զիս ընդունեցիք . Քահանայապետն իր հանդերձները պատռեց . Այս կինն իր տղաքը կը սիրէ . Եղբայրներս և քոյրերուս կը սիրեմ . Բարեկամներս և վարժապետներս ալ կը սիրեմ . Շաղիկներդ ջրեցիր . Իմիններս և քուկիններդ ջրեցի . Քոյրս ալ իրենները ջրեց . Եղբայրներդ երկու շուն գնեցին որ շատ գեղեցիկ են . Կան կերակուրներ և խմելիքներ որոնք , եթէ շատ ուտուին և խմուին , հիւանդութիւններ կը պատճառեն . Արաստոն քարի տեսակ մըն է որուն վրայ երկաթ չի բանիր . Մշակ անոնք են որ երկիրը կը գործեն . Վարժապետները ծոյլ տղաքը կը պարսաւեն , փութաջանները կը գովեն :

**Զի , երէլու** **Պատճառեմ , էործեմ**

**Գլխարկ , իոյր**

**Արաստոյ , արագոյ**

**Պնակ , սկառառակ**

**Քար , վէմ**

**Խոթեմ , ժիեմ**

**Տեսակ , ադէ**

**Ընդունիմ (տունը) , ժողովեմ թանիլ (ներգործել) , էործեմ**

**Ջրեմ , սռուիեմ**

**Փութաջան , ժէր**

**Խմելիք , ընդելի**

### 17. Հյահանգ.

Տեսար մարդը որուն քեզ զրկեցի . Այն մարդը շտեսայ , բայց վաղը կը տեսնեմ . Փնտռածդ գտնը . Փնտռածս չգտայ , չփնտռածս գտայ . Զանի գտաւ ու անոր հարցուց . Ներս չմտնես . Պարտէզը մտաւ . Ամէնքն ալ մրափեցին ու քնացան . Փեսան եկաւ , ու պատրաստներն անոր հետ մտան հարսնիքը . Ստակն առնողը գնաց , գետինը (երկիր) փորեց , և ստակը ծածկեց . Այդ տունը մտիր ու տես . Այդ անպիտան ծառան դուրս հանեցէք . Զանի ըռնեցին որ սպաննեն . Երբ խօսքը լմնցուց , լեռը ելաւ . Դարձեալ գալով զանոնք քնոյ մէջ գտաւ . Անոր հետ եղողներէն

մէկը ձեռքը երկնցուց , սուրը հանեց և ծառան զարկաւ . Ան ատեն անոր երեսը թքին . Քեզի զարնողն մվէ . Երբ դուրս ելաւ , ուրիշ կին մը զանի տեսաւ . Եղբայրներս և քոյրերս տեսար . Տեսանք ձեր սպասաւորներն ու աղախինները որ պարտէզին մէջ ծառերուն շուքին տակը կը պտտէին . Մեր ճամբորդներն հասան . Այս խօսքը թագաւորին ականջը հասաւ . Եթէ օդին տաքութիւնն անդաստանները չտաքցնէ , պտուղները չեն հասնիր . Սպասաւորը խօսքը յայտնեց . Այդ գործը կրնաք գլուխ հանել . Զանի թագաւորին առջև բերին . Երբ չկրցաւ համոզել , զանի անիծեց . Եղբայրդ Բնչ միտք ունի . Յունաստան երթալու միտք ունի . Այդ գիրեերը սեղանին վրայ գտանք . Ծովս ուռկան նետած էին . Թակոյկներու մէջ ջուր դրին . Անոր կարմիր քշամիդ հագուցին . Լաթերը հագաւ . Սուրդ մէջքդ կապէ . Նաւին կարասիներէն շատ բան ծովը նետեցին . Ունեցածը գործածեց :

|                           |                          |
|---------------------------|--------------------------|
| Մըափեմ , Նէրհեմ           | Համոզեմ , անէմ է հաւան   |
| Քնանամ , է +ուն ճրանէմ    | Միտք ունենամ , զմուսա առ |
| Ծածկեմ , Բարուցանէմ       | Ճեմ                      |
| Դարձեալ , Ջւանգամ         | Նետեմ                    |
| Մէկը , Ջ ան               | Գնեմ } արիանէմ           |
| Օդին տաքութիւնը , Պօն     | Հագցունեմ , արկանէմ      |
| Տաքցնեմ , ջեւուցանէմ      | Մէջք , մէջ               |
| Գլուխ հանեմ , է ժլուխ հա- | Կապեմ , անէմ             |
| նէմ                       | Գործածեմ , արկանէմ է կէր |

### 18. Հրահանգ

Ահա երկու քանքար վաստկեցայ . Շատ բան վաստըկեցաւ . Ըսելիքս լսել կ'ուղնս . Անոր ագարակը երթալ չուղեց . Ատոր ըրածը խօսուի . Շատ տրտմեցան և լռեցին . Հրապարակներու մէջ խօսեցէք . Ին-

ծի հետ ծածուկ մի խօսիր . Ամէնքը գայթակղելու ալ ըլլան , ես պիտի չգայթակղիմ . Զեր քոյրերն ուր են . Մեր քոյրերն Հռոմ են . Զեր եղբայրներն ուր են . Անոնք Աթէնք երթալու համար ճամբայ ելան . Շատ անգամ խորհեցաւ , բայց բան մը չկրցաւ ընել . Պարսկաստանէն եկաւ ու Հայաստան բնակեցաւ . Ասանկ բան մը Հնդկաստանի մէջ չերեւցաւ . Ինչու համար կը նեղուիս . Քեզ նեղողն ովէ . Վարժապետը զԾիգրան կը պարսաւէ . Կ'ըսէ թէ չաշխատիր , ընկերներուն հետ միշտ կոիր կ'ընէ . Այդ գինին քեզի բնչպէ կ'երեւայ . Ինձի կ'երեւայ որ շատ ընտիր է . Այս տղաքը պիտի լան , երբ իրենց մայրը բաժնուի . Եթէ Աստուծոյ չհազանդիք , խեղճ պիտի ըլլաք . Մեր ծընողներուն հնազանդ էինք , և մեր վարժապետներուն մտիկ կ'ընէինք . Խոհական տղաք իրենց մեծերուն միշտ կը հնազանդին . Նստող մարդոց նայեցաւ . Գերանը նախ քու աշքէդ հանէ , ու ետքը շիւղը եղբօրդ աշքէն հանելու նայէ . Խոտերուն արմատները տաքէն կը չորնան . Թեւը չորցաւ . Լեզուս չորցաւ . Մարտէն կը պապակիմ . Զուր չըլլալէն ծարուած էինք . Աղքատներուն պէտք է ողորմիլ . Աստուած անոր ողորմեցաւ . Ողորմողը ողորմութիւն պիտի գտնէ . Իմ հանդերձներուս ովէ դպաւ . Բարկացաւ ու ներս մտնել չէր ուղեր . Զանոնք իրենց բարեկամ կը համարին . Կարծեց որ մեռած է . Նստելով վաստկած ստակը կը համրէր . Մեռնելու ալ ըլլամ , քենէ պիտի չզատուիմ :

Վաստկիմ , շոնէմ

Հայաստան , Հոյտ

Լոեմ , ըսու լինէմ

Հնդկաստան , Հնդինէ

Մածուկ , ի ծոծուէ

Նեղուիմ , ոսուառէմ

Ճամբայ ելնեմ , մինէմ

Կոիր կ'ընեմ , կոէմ

Ընեմ ( բան մը ) , զնուէմ

Ամբաստանեմ , ամբասդան

Պարսկաստան , Պարստ

լնէմ

|                                               |                        |
|-----------------------------------------------|------------------------|
| Խեղճ , Արդարաւ                                | Ի՞նչպէս , ո՞րովէ՞      |
| Մտիկ ընեմ , անսամ                             | Երեւամ , Առակէ         |
| Խոհական , հոգավորէ                            | Բաժնութիմ , Աբնիս      |
| Մեծ , ասոդ                                    | Ծարուած ըլլամ , պաստիս |
| Տաք , քաղ                                     | Դպչիմ , Արյենաս        |
| Չորնամ , ցամուիս , հօսանամ , կարծեմ , համարիս | Չատուիմ , Աբնիս        |
| Հըլաւաս                                       |                        |
| Չըլալէն , առ է յիշյե                          |                        |

19. Հրամանագ

Եթէ չյոգնիս , եթէ շարունակ խաղաս , միշտ աղքատ պիտի ըլլաս . Քոյրերս միշտ իրենց վարժապետներուն մտիկ կ'ընէին . շատ կ'աշխատէին , և քիչ կը խաղային . Եթէ Աստուծոյ , ծնողացդ և վարժապետներուդ մտիկ չընես , երբէք երջանիկ պիտի չըլլաս . Այս տղան կուլայ , հաց չունի . Նոյ տապանին պատուհանը բացաւ . Երկու օր անոր քով կեցանք . Լաթերս լուացի . Երուսաղէմ երթալու կը փութար . Ինչիւ կը հեղզաս , ել . Փութա , ելիր երուսաղէմ . Զանի ծեծելու եկողները՝ մէկդի կեցան անկէ . Երբ ասիկա լսեցին , շատ ուրախացան . Իր արցունքովն անոր ոտուըները կը թրջէր . Երբ գինովութենէն արթնցաւ , ան ատեն զգաց . Դեռ չիք զգար . Դառն կերպով լացաւ . Երեսդ լուա . Իրենց լաթերը լուացին :

|                         |                        |
|-------------------------|------------------------|
| Յոգնիմ , վասդակէմ       | Արցունք : արդասասաւ    |
| Շարունակ , շանդ         | Թրջեմ , Առաւամ         |
| Միշտ , հանապաշ          | Դինովութենէ արթննամ ,  |
| Շատ ( մակ . ) , բազում  | անափիմ է հէնւոյ        |
| Քիչ , առկաւ             | Դեռ , գակաւին          |
| Մեծեմ , հարկանէմ        | Զգամ , զբամ , իմանամ   |
| Մէկդի կենամ , է բաց իսմ | Դառն կերպով , դառնապէս |
| Ուրախանամ , ինդամ       |                        |

20. Σριაնանց

Հաց առնելու մոռցան . Կը խոստանաք ու չէք կատարեր . Այս ամէնը հասկցաք . Անոնք չհասկցան . Դերեղմանը վաղեց . Խրամէն անդին ցատկեց . Ոտք ելաւ և կը ցատկոտէր . Երբ ծեծին մրայրվ լսեց , դուրս ցատկեց . Հագած պատմուճանը հանեց . Մարդը հիւրնտցաւ և մեռնելու մօտ էր . Զեր հանդերձները հանեցէք , և քուրձեր հագէք . Իր անկողնին մէջ զօրացաւ . Ողբացէք և սղացէք . Հրամայէ որ մէջև երեք օր գերեղմանին պահպանութիւն ընեն . Զըլլայ որ աշակերտները դիշերանց գալով զանի գողնան . Ամպն անոնցմէ վերացաւ . Լսողները կը զարմանային անոր խօսքերուն . Գթալով ձեռքը երկնցուց , և անոր դպաւ . Ինծի մի դպչիր . Զենէ ոչ մէկուն ստակին կամ հանդերձին ցանկացայ . Անոնք ալ իրենց տեղերը դարձան . Ադարակ մը ստացաւ . Ես շատ ստակով ստացայ այս զինուորութիւնը . Երուանդ , Երբ պիտի լուացուիս . Քիչ ատենէն պիտի լուացուիմ . Եթէ մէկ անդամը ցաւ կը կրէ , բոլոր անդամներն անոր հետ կը կրեն . Հռոմայեցիք գան և մեր ազգը վերցունեն . Անոր աչուըները բացուեցան ու կը նըստէր . Եթէ կանուխ իմանայինք , դարման մը կ'ընէինք . Զեռուըները լուաց . Զջանացողը երբէք հարուստ չըլլար . Աստուած այս աշխարհը դեռ չստեղծած . Դեռ արեւը չելած . Դեռ անոնք իրար չտեսած :

|                         |                      |
|-------------------------|----------------------|
| Հասկնամ , իմանամ , է մը | Ցատկուտեմ , կազմակէմ |
| առնում                  | Եեծ , գոն            |
| Վազեմ , ընթանամ         | Դուրս վազեմ , դէմէմ  |
| ( Խրամէն ) անդին , ըստ  | Մօտ , մէջ է          |
| Ցատկեմ , վաշեմ          | Պահպանութիւն ընեմ ,  |
| Ոտք ելեմ , յոդն կամ     | դուշանամ             |

Զըլլայ որ , էս-շէ  
Գիշերանց , գէշերէ  
Երկնցնեմ , յէւբ  
Շատ ստակով , բաղում էնց լլլամ , առնէմ  
Քիչ ատենէն , ընդ հուպ Դեռ չ' . . . , մնչւ , վւ-  
ծաւ կրեմ , զըրանամ

## 21. Հրահանգ

Եղբայրդ նւր է . Երկու ամիս է քանի որ եղ-  
բայրս մեռաւ . Քեզ տեսնելու կարօտէն կը մեռնիմ .  
Վախէն պոռացին . Գիտէր որ զանի նախանձէն մատ-  
նեցին . Ծաւին սաստկութենէն հանդերձները կը  
պատռէր . Իրենք զիրենք ազատելու աճապարանքէն  
աւարը թողուցին . Մեր սիրտերուն նեղութենէն կը  
մեռնինք . Այդ տղաքը սովէն պիտի մեռնին . Ծա-  
րաւէն մարած էինք . Խնտալէն կը մարէր . Հայրս ե-  
րէկ թեւերուս մէջ մեռաւ . Հայրդ մեռած է . Մայրս  
քիչ ատենէն պիտի մեռնի . Կը բաղձամ որ որդիս  
տեսնեմ , դեռ չմեռած . Դուն չմեռած պիտի մեռնիմ .  
Այդպէս շուտ նւր կը վաղես . Բժիշկ բերելու կ'եր-  
թամ . Հայրս մեռնելու մօտ է . Երբ ծնած ես . Հա-  
զար ութ հարիւր տասնին ծնայ . Եթէ ես տարի մը  
առաջ ծնած ըլլայի , քու ունեցած տարիքդ կ'ըլլայի .  
Հօրեղբայրս իր հօրը մեռնելէն ետքը ծնաւ . Պզտիկ  
քոյրս Մարտի ամսուն ծնաւ . Այս օրերս անոր տղայ  
մը պիտի ծնանի . Երբ ան խօսելու սկսաւ , ամէնքը  
լուեցին . Ատոր ինծի ըրածը քեզի պատմելու սկսիմ .  
Նստէ , եթէ կը հաճիս . Ուր որ տեղ գտնեմ՝ կը նըս-  
տիմ . Հոն ժամ մը նստայ . Ատոր ըսէ որ նստի . Հոս  
նստեցէք մինչև որ ես գամ . Քու քովդ նստինք . Ե-  
թէ նստի , ալ չելլեր . Ինչհեւ չես նստիր . Նստելու  
տեղ չկայ . Տեղ տուր որ այդ պարոնը նստի . Եկե-

դեցին հւր նստած էիր . Քու մօրաքեռդ քով նստած էի . Ինչնւ համար ոտքի վրայ կը կենաք , պարոններ , հիմա նստեցէք :

|                                                         |                       |
|---------------------------------------------------------|-----------------------|
| Թանի որ , յորմե հեռէ                                    | Շուտ , արագ           |
| Պոռամ , աղաղակեմ                                        | Տարիք , ուիւ          |
| Ինքզինք , շանջն յք . շանջին Հաճիմ , հաճոյ լինիմ ( արա - |                       |
| Աճապարանք ( աճէլէ ) , էոյին կանով )                     |                       |
| Նեղութիւն , գուապան +                                   | Քովը , ուշնինք        |
| Մարիմ ( ծարաւէ , ևլն . ) , Պարոն , ուր                  |                       |
| առղիմ                                                   | ինչնւ համար , ու է ու |
| Մարիմ ( ինդալէն ) , Առ Ոտքի վրայ կենամ , կամ            |                       |
| լուամ                                                   | յորս                  |
| Խնտալ , ծալը                                            | Հիմա , արդ            |

## 22. Հրահանգ

Անոր ոտքը կ'իյնար ու կ'աղաչէր . Անոր վիզն ինկաւ ու կը համբուրէր զանի . Մովսի ինկան ու խեղ - դուեցան . Անոնց վրայ ինկան ու զանոնք ջարգեցին . Զգուշացիր որ չիյնաս . Եթէ իյնամ , նորէն կ'ելլեմ . Մովսէս Փարաւոնին տանը մէջ մեծցաւ . Հայաստանին բարէօդ տեղերը մեծցած էր . Մարմինը բերուեցաւ ու հօրը գերեզմանին մէջ թաղուեցաւ . Երբ թագաւորին առջեւը բերուեցանք , մեզի հարցուց . Կ'ուղէր երթալ , բայց արգիլեցինք զանի . Զանի թողուցին ու փախան . Ինչնւ չէք թողուր որ այդ մարգն իւր տեղն երթայ . Քեզ բռնեցի , և չեմ թողուր . Անմեղ արիւն մի թափեր . Նաւն իր բեռերը պարպեց . Զանի թողուց և գնաց . Ոչխարներ և արջառներ կը մօրթեմ . Փչելով ողջ ողջ անոնց մորթը հանեցին . Նաւին բոլոր գործիքները և կարասիները ծովը նետեցին . Իր հանդերձները կը նետէր ու կը փախչէր . Այդ գաւաթները զինւով լեցուցէք . Տեղ մը մ'եր-

թաք , մինչեւ որ ձեր ամանները լեցուին . Քեզի ըսեւիք մը ունիմ . Ինծի բնչ ըսել կ'ուղես . Թան մը չեմ ըսեր . Միայն ըսէ . Ետքը քեզի կ'ըսեմ . Քեզի պատմածներէս հօրս բան մը չըսես . Անոր մի ըսեր որ անկողինն եմ . Քեզի բնչ ըսաւ . Զեզի չըսի . Դեռ ինծի չըսիր . Կ'ուղես որ քեզի ըսեմ . Պէտք չէ որ մարդ ամէն լսածն ըսէ . Ասիկա ինծի ականջէս ըսաւ . Քեզի ըսածն բնչ է . Անոր ճշմարիտը միայն ըսի . Թող ուղածն ըսէ . Կը զզջամ որ ատիկա ըսի . Յօժարութեամբ կ'ըսէի , եթէ գիտնայի . Եթէ տարբեր բան մը ըսէի , սուտ կը խօսէի . Երէկ եղբօրդ ըսի որ գայ զիս տեսնէ . Շատ անգամ կ'ըսէր որ բարեկամին մահուանը վրայ կը ցաւի :

|                                           |                          |
|-------------------------------------------|--------------------------|
| Վիզն իյնամ , անկանէմ զո՞ւ-                | Մորթեմ , զենուա-         |
| բոնոցաւ                                   | Մորթը հանեմ , ճ-ընեմ     |
| Ձարդեմ , ի՞ո՞րեմ                          | Ողջ ողջ , կենդանույն     |
| Զգուշանամ , զէ՞յշ լինէմ                   | Գործիք , կաշոն           |
| Նորէն , մէ-սոնդամ                         | Տեղ մը , ո-ըեւ           |
| Ելլեմ (ոտք , ելն .) , կանչնէմ Ետքը , ո-դա |                          |
| Մեծնամ , անկանէմ                          | Ականջէ , յունկանէ        |
| Հայաստան , Հայոց ոչի-որհ                  | Միայն (մակ .) , Լ էլ     |
| Բարէօդ , հովասուն                         | Յօժարութեամբ , ճոտուէ-ը  |
| Տեղ , լ-յը                                | Տարբեր , ուլուն          |
| Թափեմ , հեղուա                            | Ցաւիմ , ցու-է (տրականով) |
| Պարպեմ , նոտէմ                            |                          |

### 23. Հրահանգ

Կարդացածդդ բնչ է . Նոր զիրք մը կը կարդամ . Նոյնը մենք ալ կը կարդանք . Հայրս ատենօք Յունաց հեղինակները կը կարդար , հիմա ալ չի կարդար զանոնք . Այսօք Հերոդոտոսին պատմութիւնը կարդացի . Հայրս երեկ Թուկիտիդէսինը կը կարդար . Հիմա պի-

տի կարդամ գեղեցիկ դիրք մը զոր մէկը ինծի փոխ տուած է . Աւելի ստէպ կը կարդայինք , եթէ աւելի պարապ ժամանակ ունենայինք . Ուրեմն կարդալը կը սիրէք . Կ'ուզես որ բեզի այս նամակը կարդամ . Աղէկ չես կարդար . ի՞նչպէս պէտք է կարդալ այս բառը . Կը բաղձայի բեզի պէս կարդալ զիտնալ . Կարդացած ներդ միտքդ թող գան . Տղաքս զրեթէ բնաւ չեն կարդար . Կարդալ շեն ախորժիր . Շատ անգամ կը կրկնեմ անոնց թէ պէտք չէ կարդալէն ծուլնալ , որ սիրտն ու մի շը միանգամմայն կը շտկէ :

Այդ աթոռն իր տեղը դիր . Գլխարկս ճւր զրիր . Զանի սեղանին վրայ դրի . Հանդերձս առտուանց սնտուկը դրի . Եթէ ուրիշ տեղ դնէի , չէի կրնար իրիկուան զայն գտնել . Ո՞ւր կ'ուզես որ լաթերդ դընեմ . Դիր ուր որ կը հաճիս . Կը կարծես թէ անկողնին վրայ դրի . Միտքը դրաւ երթալ . Գլխարկդ գլուխդ դիր . Դնենք թէ հոն է . Զանի գլխուն վերեւը բարձի վրայ դնէ . Զանի բանտ դրին . Նոր գերեզմանի մէջ դրուեցաւ , որ քարի մէջ փորտւած էր :

|                           |                                                                              |
|---------------------------|------------------------------------------------------------------------------|
| Ատենօք , Երբեմ            | Կրկնեմ ( շատ անգամ ը-<br>շեղինակ (դրոց) , յ-րէն-սէդէր սել ) , յեղյեղու-<br>ս |
| Աւելի ստէպ , յ-մ-ի-սէդոյն | Շտկեմ , յ-րէդ-սէդէ                                                           |
| Ես                        | Առտուանց , այդուն                                                            |
| Պարապ ժամանակ , Ճոց       | Ուրիշ տեղ , այլ ո-րեւ+                                                       |
| պ-ր-ս-դ-ր-յ               | Կրնար , ճորդ լինել ( տըակա-<br>նով )                                         |
| Ուրեմն , ա-պ-             | Կարծեմ , համարիմ                                                             |
| Աղէկ ( մկր ) , բ-ր-ս-ս+   | Միտքը դնել , դնել է ճուէ                                                     |
| Միտքը դաւ , յ-ուշ լինել   | Գլխու վերեւ , ա-պ+                                                           |
| Կարդալը , ընթեցու-շ       |                                                                              |

#### 24. Հրահանգ

Ատիկա ինծի համար առնեմ . Ո՞րչափ բան կուզես առնել . Կէսը կ'առնեմ . Եղբայրներս մնացածնե-

ըլ թող առնեն . Կ'ուզնս կանկ առնել . Ուզածդ առ .  
ի՞նչ կ'ուզես որ առնեմ . Աղախինը թող տղան զիրկն  
առնէ . Այդ դիպակէն ( ճանփէս ) կ'առնէինք , եթէ  
եղբայրս ամէնն առած չըլլար . Այս ամէնն հասկցար .  
ինձի կ'երեւայ որ բոլոր աշակերտներս այս պատուէրը  
չհասկցան . Զանի անոնց ձէռքէն առի . Նաւերն ա-  
ռին ու զացին . Ինձի ձի մը բերէր . Երկու մոմ կը  
վառէր . մէկը գլխուն վերեւը , միւսը ոտքին դին .  
ի՞նչ կ'ընես . Ինձի պատուիրածդ կ'ընեմ . կ'ընենք՝  
ինչ որ պարտական ենք ընել . Այդ տղաք բան մը չեն  
ըներ . Ինչու համար բան մը չեն ըներ . Քանզի դուք  
ալ բան մը չեք ըներ . Ի՞նչ կ'ընէիր իմ ներս մտած  
ատենս . Կրակ կը վառէի . Իրիկունն ինչ կ'ընէք . Քու  
առտուն ըրածդ ես իրիկունը պիտի ընեմ . Ուզածդ  
ըրէ . Միշտ պիտի ընենք ինչ որ պարտական ենք .  
Մէկու մը գէշութիւն չընես . Եթէ քեզի պէս հարուստ  
ըլլայի , շատ բան կ'ընէի . Այս մարդիկն ուրիշ բան  
չեն ըներ . բայց ուտել և խմել . Զանի ինձի բարե-  
կամ ըրի . Դատաւորներն անոր իրաւունք չըրին . Այս  
տղան իր հօրը կամքը կ'ընէ :

|                                             |                          |
|---------------------------------------------|--------------------------|
| Մնացած , ճաշորդ                             | Աղէկ , +ջ                |
| Կանկ առնել , շունչի առնում ճանչուոր , Ճանօն |                          |
| Հասկնամ , է միու առնում                     | ինքզինք ճանչցնել , ուլ   |
| Բերեմ , առնում                              | Ճանօն                    |
| Ոտքին դին , անորդ                           | Ուր ( շարժում ) , յո՞՞   |
| Պարտական եմ , պարոիմ                        | Առաւոտուն , Ընդ առաւօտն  |
| Վառեմ , լույսնէմ                            | Առտուները , Ընդ առաւօտու |
| Իրիկունը , յերէիցին                         | Կամաց , մեղմով           |
| Գէշութիւն , յո՞՞                            | Թողում , լոյլ դո՞մ       |

25. Հրահնանգ

Հիմա քեզ կը ճանչնամ . Դու ալ զիս կը ճանչ-  
նաս . Հոս մէկը չեմ ճանչնար . Եղբայրդ զիս աղէկ

կը ճանչնայ . Հոս շատերը կը ճանչնամ . Հոս շատ ճանչւորներ ունինք . Քոյրդ չէի ճանչնար . Հօրեղ-բայրդի ինծի շատ ծանօթ է . Ալ ձեզ պիտի չճանչնայ . Հարցուցէք անոր թէ զիս դեռ կը ճանչնայ . Կ'ուզեն որ այն մարդը ճանչնամ . Ես զանի դեռ չճանչցած՝ ինծի եկաւ . Ինքինք անոր չճանչցուց . Քեզ քու ճանչուորներէդ մէկուն հետ տեսայ , որուն հետ ես ծանօթ չէի . Զանի ձայնէն ճանչցայ . Յանցանքդ ճանչցիր :

Ո՞ւր կ'երթաս . Տուն կ'երթամ . Եղբայրս դպրոց կ'երթայ . Առաւօտուն հւր կ'երթայիր , երբ ես ներս մտայ . Մեր պարտէզը կ'երթայի . Առտուներն հեն կ'երթաք . Յօժարութեամբ կ'երթայի պտտելու , եթէ եղբայրս հոս ըլլար . Եթէ կը հաճիս , ես ալ քեզի հետ գամ . Մէկտեղ երթանք . Այնպէս շուտ մի քալեր , կամաց գնա . Այդ տղաքն մւր կ'երթան . Մեր գացած ճամբէն կ'երթան . Ո՞ւր է քոյրդ . Հայրը տեսնելու գնաց , վաղը պիտի դառնայ . Զանի դիմաւորենք . Վաղը խնջոյքը երթալ կ'ուզես . Հայրս չի թողուր որ հոն երթամ . Քիչ ատենէն հոն կ'երթամ . Քիչ մ'ալ կեցիր որ մէկտեղ երթանք . Պէտք է որ երթամ . Եր-թալ չեն ուզեր . Այդ մարդիկն ինչ բանի կ'երթան . Զուրի կ'երթան :

## 26. Հրահանգ

Այդ տղան հւր կը տանիք . Զանի դպրոց կը տա- նինք . Կ'ուզեք զանի տուն տանել . Մեր քոյրերը թատ- րոն կը տանինք . Ո՞ւր կ'ուզես որ քեզ տանիմ . Զիս ձեր պարտէզը տար . Յօժարութեամբ ձեզ հոն կը տա- նիմ . Քեզ կը տանէի , եթէ պարապ ժամանակ ունե- նայի . Զափէն աւելի կ'ուշանանք , եթէ ձեզ հոն տա- նինք . Ե՞րբ պիտի գաս եղբայրդ հոն տանելու . Գիրքս հւր տարիք . Զգիտեմ ուր տարի . Տանելը չտեսանք .

Այդ պատանին հազարապետին տար . Սպասաւորներուն պատուիրեց որ դանի ներս՝ սրահը տանին . Այս պտուղներէն քիչ մը ուտենք . Հիմա չեմ ուտեր , քանզի անօթի չեմ . Երբեմն շատ բան կ'ուտէինք , հիմա քիչ կ'ուտենք . Երբ այն հացէն կերաւ , և գինիէն խըմեց , հոգի առաւ և սկսաւ խօսիլ . Ինչժամ չէք ուտեր , պարոններ , և չէք խմեր . Կերէք և խմեցէք . Բան մը չկերան և չխմեցին . Ո՞վ է որ ոչխար ունի և անոր կաթէն չի խմեր , կամ միսը չուտեր . Կան անասուններ որոնց միսը չուտուիր . բայց եթէ մէկուն սիրտն առանէր և անոնց միսէն ուտէր , անոր զնաս մը չէր ըլլար . Այդ դրախտին մէջ եղած բոլոր ծառերէն կերէք , բայց այս ծառէն մի ուտէք . Հոս խմելու բան չկայ . Ահա գինի . Խմեցէք , եթէ կը հաճիք . Ես բնաւ գինի չեմ խմեր . Միայն ջուր կը խմենք . Թագաւորին կենացը խմենք . Երէկ գաւաթ մը գինի խմեցի , այլ այսօր չեմ խմեր . Մէկտեղ խմենք . Դուն բաւական կերար , և ան չափէն աւելի խմեց . Մեր խմածը բաւական է . Երէկ մեր խմած գինին այնպէս աղէկ էր , որ մենէ ամէն մէկը մէյմէկ չիշ խմեց :

Այդպէս ուշ ուստի կու գաս . Պատելէ կու գամ . Առատուն ուստի կու գայիր , երբ քեզի հանդիպեցայ . Ամարանոցէն կու գայի . Երէկ չափազանց ուշ եկայ , բայց այս առտու շատ կանուխ եկայ . Շուտ կու գանք , եթէ ժամանակ ըլլայ . Կ'ուզէ որ ժամն ութին գանք . Յարմար ժամանակ եկաք , ձեզի ըսելիք մը ունիմ . Քիչ ատենէն կուզայ . Եկէք , պարոններ . Որդիդ եկաւ և քեզ ուզեց . Բարեկամ , հոս եկուր :

|                           |                             |
|---------------------------|-----------------------------|
| <b>Պտուղ</b> , մէտ        | <b>Շուտ</b> (ժամ մը առաջ) , |
| (Մէկուն ) կենացը , յարեւ- | լող                         |
| Բաւական , լառ             | Ժամը ութին , յուներուդ      |
| Աղէկ , աղէ-               | ժամու                       |
| <b>Մէյմէկ</b> , մէն մէ    | Յարմար ժամանակ , ուղար      |
| Ուշ , անոնան              | ժամ                         |
| <b>Չափազանց</b> , կուրէ   | Ուզել (պահանջել) , ինչըեւ   |

27. Հրահնանգ

